


17

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ
2021

Luys Lnyju®



ԶԻՆԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ ԵՎ ՀԱՐԱՎԱՅԻՆ
ԿՈՎԿԱՍՈՒՄ՝ ԻՐԱՆԻ ԵՎ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԵՏ
ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ

ՉԻՆԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ ԵՎ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ՝ ԻՐԱՆԻ ԵՎ ԹՈՒՐԲԻԱՅԻ ՀԵՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	3
1. ՉԻՆԱՍՏԱՆԻ ՀԱՎԱԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵԾ ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ ՀԱՄԱՐ ԳԵՐՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՐՑԱՎԱԶՔՈՒՄ.....	4
1.1. Մեծ Մերձավոր Արևելքի կարևորությունը գերտերությունների մրցավազքի տեսանկյունից	4
1.2. Աշխարհաքաղաքական հավասարակշռությունը Մերձավոր Արևելքում.....	7
1.3. ՌԴ-ՉԺՀ փոխլրացնող տարածաշրջանային քաղաքականությունը.....	9
1.4. Չինաստանի տարածաշրջանային քաղաքականության առանձնահատկությունները	11
1.5. Չինաստանի համար տարածաշրջանի տնտեսական և էներգետիկ կարևորությունը	14
1.6. Մերձավոր Արևելքի երկրների և Չինաստանի փոխադարձ հետաքրքրությունները.....	18
1.7. Գերտերությունների մրցակցությունից բխող ռիսկերն ու հնարավորությունները տարածաշրջանի երկրների համար	20
1.8. Չինաստանը և Մերձավոր Արևելքում ռազմաքաղաքական հավասարակշռությունը	22
2. ԻՐԱՆ-ՉԻՆԱՍՏԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՆ ԵՎ ԱՊԱԳԱՆ	25
2.1. Իրան-Չինաստան փոխադարձ շահերը և հարաբերությունների վերջին տասնամյակների դինամիկան	25
2.2. Համապարփակ ռազմավարական գործընկերության մեկնարկը.....	29
2.3. Իրան-ՉԺՀ «25-ամյա պայմանագիրը». միջեր և իրականություն.....	31
2.4. Երկու երկրների միջև համագործակցության առանձնահատկությունները տնտեսական և էներգետիկ ոլորտներում	41
2.5. Ռազմաքաղաքական համագործակցության առանձնահատկությունները	52
2.6. Իրան-Չինաստան հարաբերությունների զարգացման հեռանկարը և դրա	

տարածաշրջանային ազդեցությունը.....	57
3. ԹՈՒՐՔԻԱ-ՉԻՆԱՍՏԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԻՑ ՄԻՆՉԵՎ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆ	62
3.1. Հարաբերությունների առանձնահատկությունները և երկու երկրների տարածաշրջանային շահերը.....	62
3.2. Տնտեսական հարաբերությունների առանձնահատկություններն ու Թուրքիայի դերը Չինաստանի ինտեգրացիոն ծրագրերում. «Գուտի և ճանապարհ».....	67
3.3. Պանթուրքական սպառնալիքներն ու ուղղությունների խնդիրը.....	76
Եզրակացություն.....	80
4. ՉԻՆԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ԵՐԿՐՆԵՐԻ ՎՐԱ.....	82
4.1. Կենտրոնական Ասիայի փորձը Հարավային Կովկասում Չինաստանի ազդեցության ընդլայնման համատեքստում.....	83
4.2. Չինական ազդեցության առևտրատնտեսական գործոնը	85
4.3. Իրան-ՉԺՀ 25-ամյա համաձայնագրի՝ Հարավային Կովկասին վերաբերելի բաղադրիչները.....	88
4.4. Չինաստանի տարածաշրջանային քաղաքականության աշխարհաքաղաքական հետևանքները հարավկովկասյան 3 երկրների համար.....	91
4.5. Պայքարը Հարավային Կովկասում ՉԺՀ հիմնական գործընկերոջ կարգավիճակի համար	92
Եզրակացություն.....	95
ՀԵՏԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ	99
Հետևություններ.....	99
Առաջարկներ.....	101

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Վերջին տարիներին ավելի է ընդգծվում փոփոխվող աշխարհակարգում Չինաստանի աճող դերակատարությունը, ինչպես նաև նշմարվում են Չինաստանի հիմնական հավակնությունները գերտերությունների մրցավազքի տեսանկյունից կարևորագույն նշանակություն ունեցող տարածաշրջաններում: Մերձավոր Արևելքը և Հարավային Կովկասը ավանդաբար եղել են գերտերությունների անվերջ պայքարի գլխավոր թատերաբեմը, և խոշոր աշխարհաքաղաքական փոփոխությունները առաջին հերթին զգացվել են հենց այս զգայուն աշխարհագրական տարածքում: Հայաստանը, լինելով այս կարևորագույն տարածաշրջանի մի փոքր մասնիկը, շատ հաճախ հայտնվում է այդ պայքարի և փոփոխությունների կիզակետում: Հետևաբար, շատ կարևոր է, որպեսզի Հայաստանի վերլուծական, փորձագիտական միտքը համարժեք գնահատի տարածաշրջանում տեղի ունեցող գործընթացները և առաջ քաշի դրանց վրա մեծ ազդեցություն ունեցող գերտերությունների հետ հարաբերությունների կառուցման արդյունավետ մոդելներ:

Դեռևս նախքան 44-օրյա պատերազմը, «Լույս» Հիմնադրամը ծավալուն հոդվածով անդրադարձել էր տարածաշրջանում և աշխարհում տեղի ունեցող աշխարհաքաղաքական վերադասավորումներին¹: Պատերազմը և դրան հաջորդած իրադարձությունները ոչ միայն չեն ստվերում այդ հոդվածի արդիականությունը, այլև ստիպում են ևս մեկ անգամ անդրադառնալ տարածաշրջանում ստեղծված նոր աշխարհաքաղաքական իրողություններին՝ հատուկ ուշադրություն դարձնելով Չինաստանի ազդեցությանն ու դերակատարությանը:

Մերձավոր Արևելքում և Հարավային Կովկասում Չինաստանը աստիճանաբար դառնում է կարևոր աշխարհաքաղաքական գործոններից մեկը, որի հետ ձգտում են նոր որակի հարաբերություններ կառուցել տարածաշրջանի բոլոր երկրները: Տարածաշրջանում ազդեցության համար մրցավազքը ճիշտ պատկերացնելու նպատակով սույն վերլուծության շրջանակներում նախ փորձել ենք հասկանալ, թե այնտեղ ինչպիսի ազդեցություն և շահեր ունեն Չինաստանն ու վերջինիս հիմնական մրցակիցները՝ առաջին հերթին Միացյալ Նահանգներն ու Ռուսաստանը:

Թուրքիան և Իրանը Հարավային Կովկասում առանցքային դերակատարություն ունեն, հետևաբար վերլուծության շրջանակներում փորձել ենք

¹ «Կորոնավիրուսը, աշխարհաքաղաքական վերադասավորումները և Հայաստանը», «Լույս» Հիմնադրամ, 06.12.2020թ. <https://www.luys.am/index.php?m=publicationsOne&pid=192> (այցելվել է 13.09.2021թ.):

առանձին ուսումնասիրել, թե ինչպիսի հարաբերություններ ունի Չինաստանը այս երկրներից յուրաքանչյուրի հետ: Ի վերջո, փորձել ենք հասկանալ Չինաստանի տարածաշրջանային քաղաքականության ազդեցությունը Հարավային Կովկասի երկրների վրա, ինչպես նաև ներկայացրել ենք հայ-չինական հարաբերությունների զարգացման տեսլականն ու հեռանկարները:

1. ՉԻՆԱՍՏԱՆԻ ՀԱՎԱԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵԾ ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ ՀԱՄԱՐ ԳԵՐՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՐՑԱՎԱԶՔՈՒՄ

Վերջին տասնամյակներին աննախադեպ տեմպերով հզորացող և աշխարհի տարբեր տարածաշրջաններում իր դիրքերն ամրապնդող Չինաստանը գործող աշխարհակարգի փոփոխման և նոր աշխարհակարգում առանցքային բևեռ դառնալու հայտ է ներկայացրել: Աշխարհաքաղաքական կարգի և գերտերությունների մրցավազքի տեսանկյունից Մեծ Մերձավոր Արևելքը² հանդիսանում է թերևս աշխարհի ամենակարևոր տարածաշրջանը, որտեղ գերտերությունները մշտապես ձգտում են գերակայության հասնել:

1.1. Մեծ Մերձավոր Արևելքի կարևորությունը գերտերությունների մրցավազքի տեսանկյունից


Այս տարածաշրջանը իր ռեսուրսներով և աշխարհագրական դիրքով հանդիսանում է ոչ միայն արևելքը արևմուտքին կապող առանցքային հանգույց, այլև զբաղեցնում է Սամուել Հանթինգտոնի նկարագրած «Հարթեմի» զգալի մասը, որի նկատմամբ վերահսկողությունը գերտերություններին աշխարհաքաղաքական գերակայության հասնելու հնարավորություն է տալիս³: Այստեղ են գտնվում նաև Չինաստանի «Գոտի և ճանապարհ» նախաձեռնությանը

² Մեծ Մերձավոր Արևելք տերմինը, ըստ տարբեր փորձագիտական ձևակերպումների, ներառում է Մերձավոր Արևելքը, Հարավային Կովկասը, Հյուսիսային Աֆրիկան, իսկ ըստ որոշ փորձագետների՝ նաև Կենտրոնական Ասիայի մի հատվածը, և սկսել է ակտիվորեն շրջանառվել 2000-ական թվականներից: Տե՛ս The Greater Middle East 2025, Adam Garfinkle, Foreign Policy Research Institute, 01.12.1999, <https://www.fpri.org/article/1999/12/the-greater-middle-east-2025/>, (այցելվել է 13.09.2021թ.); The Greater Middle East Initiative, 20 May 2004, <https://www.aljazeera.com/news/2004/5/20/the-greater-middle-east-initiative>, (այցելվել է 13.09.2021թ.); The Greater Middle East Initiative: Off to a False Start, Marina Ottaway and Thomas Carothers, Carnegie Endowment for International Peace, 29.03.2004, <https://carnegieendowment.org/files/Policybrief29.pdf> (այցելվել է 13.09.2021թ.):

³ The geographical pivot of history (1904), H J Mackinder, The Geographical Journal, Vol. 170, No. 4, December 2004, pp. 298–321, https://www.iwp.edu/wp-content/uploads/2019/05/20131016_MackinderTheGeographicalJournal.pdf, (այցելվել է 13.09.2021թ.); Heartland, BY The Editors of Encyclopaedia Britannica, <https://www.britannica.com/place/heartland> (այցելվել է 13.09.2021թ.):

մասնակցող երկրների զգալի մասը:⁴ Պատահական չէ, որ Չինաստանի արտաքին քաղաքական հարցերով պատասխանատու առանցքային պաշտոնյաները անհամեմատ ավելի շատ այցեր են կատարում ասիական երկրներ, այդ թվում՝ Մերձավոր Արևելք և Կենտրոնական Ասիա, քան մյուս տարածաշրջաններ⁵:

Չինացի որոշ պաշտոնյաների այցերի տարածաշրջանային վերլուծությունը (2014-2020թթ)



● Վանգ Ցի - ՉԺՀ արտաքին գործերի նախարարության ՉԺՀ արտաքին գործերի նախարարություն
● Սի Մինֆին - ՉԺՀ նախագահ
● Ցանգ Ջիեչի - ՉԿԳ ԿԿ-ի արտաքին հարաբերությունների ՉԺՀ վարչապետ
● Լի Կեցյան - ՉԺՀ վարչապետ
 Աղբյուրը՝ ՉԺՀ Արտաքին գործերի նախարարություն


Մերձավոր Արևելքի ջրերով է անցնում համաշխարհային առևտրի, էներգակիրներ տեղափոխող բեռնանավերի զգալի մասը: Ի թիվս այլ կարևոր հանգամանքների՝ Չինաստանի համար տարածաշրջանի կարևորությունը հետզհետե մեծանում է, քանի որ վերջինիս աճող տնտեսությունը սնուցող էներգետիկ ռեսուրսների մեծ մասը այստեղից է ներկրվում: Մերձավոր Արևելքը նաև աշխարհի ամենաազմականացված տարածաշրջաններից մեկն է, սպառազինությունների միջազգային առևտրի խոշոր շուկա, որտեղ անկախ

⁴ Countries in China’s Belt and Road Initiative: Who’s In And Who’s Out, David Sacks, March 24, 2021, <https://www.cfr.org/blog/countries-chinas-belt-and-road-initiative-whos-and-whos-out> (այցելվել է 13.09.2021թ.):

⁵ What Do Overseas Visits Reveal about China’s Foreign Policy Priorities?, China Power, March 29, 2021. Updated May 12, 2021 <https://chinapower.csis.org/diplomatic-visits/> (այցելվել է 13.09.2021թ.):

աշխարհաքաղաքական իրողություններից՝ սպառազինությունների մրցավազը մշտապես շարունակական բնույթ է կրում:

Մերձավոր Արևելքի երկրների ռազմական ներուժը



Աղբյուրը՝ Международный дискуссионный клуб Валдай, տվյալները՝ Global firepower index (GFI), 2021

Ըստ Ստոկհոլմի խաղաղության միջազգային հետազոտությունների ինստիտուտի (SIPRI)⁶ 2016-2020թթ. սպառազինության միջազգային ներմուծման 33%-ը բաժին է ընկել Մերձավոր Արևելքի երկրներին: Ընդ որում, սպառազինության մոտ 52%-ը ներմուծվել է ԱՄՆ-ից, 13%-ը ՌԴ-ից, իսկ ՉԺԿ ցուցանիշը ավելի փոքր է:⁶

1.2. Աշխարհաքաղաքական հավասարակշռությունը Մերձավոր Արևելքում

Մերձավոր Արևելքում հետսառըպատերազմյան ժամանակահատվածում ձևավորված իրողությունները, երբ ԱՄՆ-ը ուներ միանշանակ տարածաշրջանային գերակայություն, և ոչ մի այլ պետություն կամ պետությունների դաշինք չէր կարող վիճարկել այդ գերակայությունը, այլևս արդիական չեն: Այժմ տարածաշրջանում տեղի ունեցող գործընթացների վրա բացի ԱՄՆ-ից՝ մեծ ազդեցություն ունեն նաև մի շարք այլ տարածաշրջանային և գլոբալ ուժեր: ԱՄՆ-ը, Չինաստանը, Ռուսաստանը, փոքր ինչ նվազ հավակնություններով նաև Հնդկաստանն ու Եվրոպական միությունը գտնվում են տարածաշրջանում գերակայության հասնելու մրցակազմի մեջ, իսկ Իրանը, Թուրքիան, Իսրայելը, Սաուդյան Արաբիան, Եգիպտոսը, ԱՄԷ-ն այժմ ավելի ինքնուրույն ձևով են սեփական շահերն առաջ մղում՝ մանևրելով վերոհիշյալ արտաքին դերակատարների մրցակցության դաշտում⁷:

Եթե դիտարկենք տարածաշրջանի կարևոր դերակատարների վերջին տարիների քաղաքականությունը, ապա կնկատենք, որ դրանցից յուրաքանչյուրը սկսել է ավելի բազմավեկտոր արտաքին քաղաքականություն վարել: Օրինակ, տարածաշրջանում ԱՄՆ-ի ավանդական դաշնակից Իսրայելը սկսել է տարբեր հարցերում ԱՄՆ-ից անկախ քաղաքականություն վարել՝ երբեմն տարածաշրջանում իր գործողությունները համադրելով Ռուսաստանի հետ, միաժամանակ զարգացնելով ամուր տնտեսական և տեխնոլոգիական կապեր Չինաստանի հետ: ԱՄԷ-ն, Եգիպտոսը սկսել են ակտիվորեն համագործակցել Ռուսաստանի հետ սպառազինությունների և քաղաքական ոլորտներում, երկուսի շահերն էլ համընկնում են ՌԴ-ի և Չինաստանի հետ՝ գունավոր հեղափոխությունները կանխելու հարցում, իսկ Չինաստանի պարագայում առանցքային նշանակություն ունեն նաև տնտեսական կապերը:

⁶ TRENDS IN INTERNATIONAL ARMS TRANSFERS, 2020, Pieter D. Wezeman, Alexandra Kuimova and Siemon T. Wezeman, SIPRI, March 2021, https://sipri.org/sites/default/files/2021-03/fs_2103_at_2020_v2.pdf (այցելվել է 13.09.2021թ.):

⁷ Major Power Rivalry in the Middle East, Steven A. Cook, The Council on Foreign Relations (CFR), March 2021 https://cdn.cfr.org/sites/default/files/report_pdf/dp-cook-final-interior-and-exterior_0.pdf (այցելվել է 13.09.2021թ.):

Ընդհանուր առմամբ, այս երկրների համար առանցքային նշանակություն ունի տնտեսական զարգացումն ու սոցիալական կայունությունը, և այդ հարցում նրանց պատկերացումները համընկնում են Պեկինի ու Մոսկվայի պատկերացումներին: Օրինակ, Թուրքիան և Եգիպտոսը՝ պահպանելով ԱՄՆ-ի հետ նորմալ հարաբերություններ, միաժամանակ միջուկային էներգետիկայի զարգացման ոլորտում ներգրավել են ռուսական կազմակերպություններին: Նույնը կարելի է ասել տարածաշրջանում ԱՄՆ գլխավոր դաշնակիցներից մեկի՝ Սաուդյան Արաբիայի մասին. մի կողմից՝ ԱՄՆ-ի հետ հակասությունները Եմենի, մարդու իրավունքների և այլ հարցերում, մյուս կողմից՝ Չինաստանի հետ աճող տնտեսական համագործակցությունը՝ նախ և առաջ էներգետիկ ոլորտում, ՌԴ-ի հետ համագործակցությունը «ՕՊԵԿ+»-ի շրջանակներում, վերջինիս ստիպում են ավելի ճկուն քաղաքականություն վարել Պեկինի և Մոսկվայի ուղղությամբ:

Գերտերությունների հետ ավելի դինամիկ հարաբերություններ ունեն տարածաշրջանի երկու ամենաազդեցիկ պետությունները՝ Թուրքիան և Իրանը: Իրանը ձգտում է քայքայել տարածաշրջանում ԱՄՆ-ի և նրա դաշնակիցների ազդեցությունը և այդ հարցում համագործակցում է բոլոր շահագրգիռ տարածաշրջանային և արտատարածաշրջանային ուժերի հետ: Այս նպատակով Թեհրանը արդյունավետ համագործակցության մեխանիզմներ է ստեղծել ՌԴ-ի հետ՝ հատկապես Սիրիայում, իսկ երկրում տնտեսական կայունությունը պահպանելու և իր տարածաշրջանային ծրագրերը կյանքի կոչելու համար զարգացնում է տնտեսական համագործակցությունը Չինաստանի հետ: Չնայած թե՛ Չինաստանի, թե՛ ՌԴ-ի հետ միշտ չէ, որ Իրանի շահերը բոլոր հարցերում համընկնում են, սակայն փոխադարձ հետաքրքրություններն ավելի շատ են, քան հակասությունները:⁸

Ինչ վերաբերում է Թուրքիային, ապա ավելի ինքնուրույն և ինքնաբավ տարածաշրջանային գերտերություն դառնալու ճանապարհին Էրդողանը ձգտում է բազմավեկտոր արտաքին քաղաքականություն վարել: Այսպես, չնայած Սիրիայում, Լիբիայում, Արցախում և տարածաշրջանային մի շարք այլ հարցերում հակասող շահերին, Անկարան կարողացել է Մոսկվայի հետ արդյունավետ համագործակցություն հաստատել դիվանագիտության, տնտեսության և նույնիսկ պաշտպանության ոլորտներում: Միաժամանակ, Չինաստանի հետ զարգացող տնտեսական կապերը, համագործակցությունը ենթակառուցվածքների և հաղորդակցությունների ոլորտներում Թուրքիան դիտարկում է Արևմուտքից իր

⁸ Iran's New Doctrine: Pivot to the East, By Seyed Hossein Mousavian, October 05, 2020, <https://thediplomat.com/2020/10/irans-new-doctrine-pivot-to-the-east/> (այցելվել է 13.09.2021թ.):

տնտեսական կախվածությունը թուլացնելու համատեքստում:⁹ Թուրքիան և Իրանը Մերձավոր Արևելքում և Հարավային Կովկասում առանցքային դերակատարներ են, և Չինաստանի հետ վերջիններիս հերաբերությունները առանձնահատուկ ուշադրության են արժանի, հետևաբար դրանց կանդրադառնանք ստորև՝ առանձին ենթավերնագրերի ներքո:

1.3. ՌԴ-ՉԺՀ փոխլրացնող տարածաշրջանային քաղաքականությունը

Այսպիսով, Մերձավոր Արևելքում ձևավորվել է բավական խայտաբղետ ռազմաքաղաքական իրավիճակ, որտեղ հիմնական դերակատարները և առավելության ձգտող գերտերությունները վարում են բավական ճկուն և բազմաշերտ արտաքին քաղաքականություն, իսկ տարածաշրջանում ԱՄՆ-ի ռազմական ներկայության կրճատումը այն ավելի գրավիչ է դարձնում մյուս գերտերությունների՝ մասնավորապես Չինաստանի և Ռուսաստանի համար: Մի կողմից՝ տարածաշրջանում Ռուսաստանի ռազմական ներկայության վերականգնումը, մյուս կողմից՝ Չինաստանի տնտեսական հնարավորություններն ու ռազմական ներուժը կարող են զգալիորեն վերափոխել տարածաշրջանի քաղաքական պատկերը:

Չինաստանն ու Ռուսաստանը փորձում են տարածաշրջանում իրենց ծրագրերն իրականացնել տարբեր ճանապարհներով, սակայն ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ եթե Ռուսաստանը նախապատվությունը տալիս է անվտանգության և սպառազինությունների վաճառքի ոլորտներին, ապա Չինաստանը գերադասում է առևտուրն ու ներդրումները: Սա մեծ մասամբ պայմանավորված է այն հանգամանքով, որ տարածաշրջանը գտնվում է ՌԴ անմիջական հարևանությամբ, իսկ իր սահմանների երկայնքով ազդեցության և կայունության պահպանումը պատմականորեն եղել և մնում է Ռուսաստանի առաջնահերթություններից: Չնայած ԽՍՀՄ փլուզումից հետո Ռուսաստանը զգալիորեն կորցրել է իր տարածաշրջանային ազդեցությունը, սակայն դեռևս շարունակում է լավ հարաբերություններ պահպանել Ալժիրի, Իրաքի, Լիբիայի, Սիրիայի, Եգիպտոսի, Պաղեստինի, Հարավային Եմենի հետ¹⁰: Մերձավոր Արևելքում Չինաստանի և ՌԴ-ի ակտիվացումը, հատկապես ՉժՀ-ԻԻՀ և ՌԴ-ԻԻՀ հարաբերությունների խորացումը, կարող է խրախուսել, որպեսզի ԱՄՆ-ը վերականգնի վերջին տարիներին խաթարված հարաբերությունները Իրանի մրցակիցների՝ Թուրքիայի և Սաուդյան Արաբիայի հետ, ինչպես նաև նպաստի

⁹ Major Power Rivalry in the Middle East, Steven A. Cook, The Council on Foreign Relations (CFR), March 2021 https://cdn.cfr.org/sites/default/files/report_pdf/dp-cook-final-interior-and-exterior_0.pdf (այցելվել է 13.09.2021թ.):

¹⁰ Reimagining U.S. Strategy in the Middle East/ Sustainable Partnerships, Strategic Investments, by Dalia Dassa Kaye, Linda Robinson, Jeffrey Martini, Nathan Vest, Ashley L. Rhoades, RAND Corporation, 2021, https://www.rand.org/pubs/research_reports/RR958-1.html (այցելվել է 13.09.2021թ.):

Թուրքիա-Սաուդյան Արաբիա և Թուրքիա-Իսրայել հակասությունների հաղթահարմանը¹¹:

Միջազգային մամուլն ու փորձագիտական շրջանակները Մերձավոր Արևելքում Չինաստանի ակտիվության և նոր հավակնությունների մասին լայն քննարկումներ սկսեցին դեռևս 2020-ին, երբ հրապարակվեց, այնուհետև միջազգային մամուլում լայնորեն տարածվեց Չինաստանի և Իրանի միջև նախատեսվող ենթադրյալ նոր համաձայնագրի տեքստը¹²: Այդ քննարկումները վերսկսվեցին և ավելի ակտիվացան 2021թ. մարտի վերջին Չինաստանի արտգործնախարար Վան Յիի մերձավորարևելյան շրջագայության և Իրանի հետ նոր համաձայնագրի ստորագրումից հետո: Ուշագրավ է, որ թեև հիմնական քննարկումները կենտրոնացան Վան Յիի իրանյան այցի վրա, սակայն այցը ռեգիոնալ բնույթ էր կրում և ուշագրավ էր ինչպես աշխարհագրությամբ, այնպես էլ օրակարգով. Սաուդյան Արաբիա, Թուրքիա, Իրան, ԱՄԷ, Օման և Բահրեյն¹³: Օրինակ, Սաուդյան Արաբիայում Յին հայտարարեց Իսրայելի և Պաղեստինի միջև խաղաղ բանակցությունների նախաձեռնության մասին¹⁴, Օմանում հայտարարեց Չինաստանի և Ծոցի համագործակցության խորհրդի (GCC) միջև ազատ առևտրի մասին համաձայնագրի բանակցությունները ավարտին հասցնելու մտադրության մասին¹⁵: Ընդհանուր առմամբ, Չինաստանի արտգործնախարարի այցը կարելի է դիտարկել տարածաշրջանում ՉԺՀ առաջնահերթությունները ընդգծելու տեսանկյունից:

¹¹ The China-Iran agreement | Geostrategic motives and implications, <https://fikercenter.com/en/position-papers/the-china-iran-agreement-geostrategic-motives-and-implications> (այցելվել է 13.09.2021թ.):

¹² Իրան-Չինաստան համաձայնագրի շրջանավորվող փաստաթղթի սկանավորված պարսկալեզու տարբերակը, https://static1.squarespace.com/static/54db7b69e4b00a5e4b11038c/t/5f0a3b017adc097c9945645c/1594506439567/China_Iran_Document.pdf (այցելվել է 13.09.2021թ.): Last Among Equals: The China-Iran Partnership in a Regional Context, By Lucille Greer and Esfandyar Batmanghelidj, The Wilson Center, September 2020, https://www.wilsoncenter.org/sites/default/files/media/uploads/documents/MEP_200831_OCC%2038%20v3%20%281%29.pdf (այցելվել է 13.09.2021թ.): Defying U.S., China and Iran Near Trade and Military Partnership, By Farnaz Fassihi and Steven Lee Myers, published July 11, 2020, updated March 27, 2021, <https://www.nytimes.com/2020/07/11/world/asia/china-iran-trade-military-deal.html> (այցելվել է 13.09.2021թ.):

¹³ Mr. Wang goes to the Middle East, MENA Source by Jonathan Fulton, the Atlantic Council, APR 1, 2021, <https://www.atlanticcouncil.org/blogs/menasource/mr-wang-goes-to-the-middle-east/> (այցելվել է 13.09.2021թ.):

¹⁴ China plans to invite Palestinians and Israelis for talks, report by REUTERS, LAHAV HARKOV, MARCH 24, 2021, <https://www.jpost.com/middle-east/china-plans-to-invite-palestinians-and-israelis-for-talks-663006> (այցելվել է 13.09.2021թ.):

¹⁵ China, Oman agree to enhance cooperation, push forward China-GCC free trade talks, Xinhua, Editor: Li Yan, 2021-03-30, [China, Oman agree to enhance cooperation, push forward China-GCC free trade talks \(ecns.cn\)](https://www.ecns.cn) (այցելվել է 13.09.2021թ.):

Հատկանշական է, որ ՉԺՀ արտգործնախարարի այցին նախորդել էր ՌԴ արտգործնախարար Լավրովի այցը Մերձավոր Արևելք: Այնուհետև Լավրովը այցելել էր նաև Չինաստան, ինչը նպատակ էր հետապնդում համակարգել երկու երկրների առաջնահերթությունները ԱՄՆ-ի և Մերձավոր Արևելքի ուղղությամբ քաղաքականության տեսանկյունից՝ հաշվի առնելով տարածաշրջանի նկատմամբ Վաշինգտոնի հետաքրքրության նվազումը¹⁶: Կարելի է ենթադրել, որ ներկայիս փուլում Պեկինն ու Մոսկվան տարածաշրջանում միմյանց գործողությունները դիտարկում են որպես փոխլրացնող, այլ ոչ թե հակասող, երկու երկրների գործողությունները հաճախ համակարգված բնույթ են կրում: Դրա մասին է վկայում ՌԴ և ՉԺՀ միջև բարիդրացիության, բարեկամության և համագործակցության մասին պայմանագրի ստորագրման քսանամյակի կապակցությամբ երկու երկրների ղեկավարների կողմից վերջերս տարածված համատեղ հայտարարությունը, որտեղ, ի թիվս այլոց, նշվում է, որ կողմերը պետք է համակարգեն արտաքին քաղաքական ոլորտում ջանքերը, պաշտպանեն ընդհանուր շահերը միջազգային ասպարեզում և տարածաշրջանային ու համաշխարհային ուժային հավասարակշռությունը¹⁷:

1.4. Չինաստանի տարածաշրջանային քաղաքականության առանձնահատկությունները

Մերձավոր Արևելքում իր քաղաքականության վերաբերյալ Պեկինը չունի հրապարակային ռազմավարություն, քանի որ ձգտում է խուսափել տարածաշրջանում իր գործունեությունը կաղապարելու, տարբեր զգայուն հարցերի վերաբերյալ հստակ դիրքորոշում արտահայտելու և այդպիսով բոլոր հիմնական դերակատարների հետ հավասարակշռված, դրական հարաբերությունները կասկածի տակ դնելու հեռանկարից: Սակայն դա չի նշանակում, որ Չինաստանը տարածաշրջանի վերաբերյալ առհասարակ չունի ռազմավարություն. Պեկինը շատ լուրջ է վերաբերվում Մերձավոր Արևելքին և այնտեղ ունի հստակ շահեր ու հետաքրքրություններ: «ՌԵՆԴ Քորփորեյշնի» փորձագետները Մերձավոր Արևելքում ՉԺՀ ռազմավարությունը բնութագրում են որպես «անհանգիստ

¹⁶ Will the China-Iran deal change the Middle East?, RAGHIDA DERGHAM, April 04, 2021, <https://www.thenationalnews.com/opinion/comment/will-the-china-iran-deal-change-the-middle-east-1.1196284> (այցելվել է 13.09.2021թ.):

¹⁷ Совместное заявление Российской Федерации и Китайской Народной Республики к двадцатилетию подписания Договора о добрососедстве, дружбе и сотрудничестве между Российской Федерацией и Китайской Народной Республикой, 28 июня 2021, <http://static.kremlin.ru/media/events/files/ru/hkwONx0FSpUGgXPaRU3xUHRmkRneSXIR.pdf> (այցելվել է 13.09.2021թ.):

վիշապի» քաղաքականություն: Վերջիններս Մերձավոր Արևելքի նկատմամբ Չինաստանի հետարքրքրությունները բաժանել են 4 հիմնական ուղղությունների¹⁸.

1. Էներգետիկ անվտանգություն և տնտեսական համագործակցություն. Չինաստանը ձգտում է ապահովել հասանելիությունը տարածաշրջանի շուկաների և ռեսուրսների նկատմամբ:

2. Տարածաշրջանում ՉԺՀ աշխարհառազմավարական կեցվածքը. Չինաստանը փորձում է բալանսավորել Մերձավոր Արևելքում ԱՄՆ ազդեցությունը՝ միաժամանակ խուսափելով վերջինիս հետ ակնհայտ հակամարտության մեջ մտնելուց կամ տարածաշրջանում իր ռազմական ներկայությունը էականորեն ավելացնելուց:

3. Չինաստանի արևմուտքում ներքին կայունություն և ուղղությունների խնդիր. ՉԺՀ հիմնական խնդիրներից մեկն է հասնել նրան, որ մահմեդական աշխարհի կենտրոնն հանդիսացող այս տարածաշրջանի հիմնական դերակատարները չքննադատեն մահմեդական չինացիների ու ուղղությունների նկատմամբ Պեկինի քաղաքականությունը:

4. Չինաստանի գերտերության կարգավիճակի ամրագրում. այս նպատակով Պեկինը փորձում է տարածաշրջանի խոշոր դերակատարների շրջանում վաստակել գերտերության կարգավիճակ և վերջիններիս կողմից արժանանալ գերտերությանը հարիր դիվանագիտական հարգանքի ու վերաբերմունքի:

Այնուամենայնիվ, տարածաշրջանի երկրների նկատմամբ ՉԺՀ վերաբերմունքի առանձնահատկությունները հասկանալու տեսանկյունից որոշակի հստակություն կարող է բերել այդ երկրների հետ հարաբերությունների իրավապայմանագրային բնույթի ուսումնասիրությունը: Այսպես, Մերձավոր Արևելքի երկրների մեծամասնությունը՝ 22 երկիր, ՉԺՀ հետ համաձայնագրեր ունեն «Գոտի և ճանապարհ» ծրագրի շրջանակներում: Տարածաշրջանի երկրներից միայն 5-ը՝ Ալժիրը, Եգիպտոսը, Իրանը, Սաուդյան Արաբիան և ԱՄԷ-ն Չինաստանի հետ ունեն «համապարփակ ռազմավարական գործընկերության» համաձայնագիր. սա Չինաստանի համար համարվում է միջպետական հարաբերությունների երկրորդ բարձրագույն մակարդակը, այս կարգավիճակը Չինաստանի ԱԳՆ-ն սովորաբար տալիս է տարածաշրջանում առանցքային կարևորություն ունեցող երկրներին¹⁹:

Հարաբերությունների ավելի ցածր, բայց կրկին կարևոր մակարդակի մասին են խոսում Թուրքիայի հետ «ռազմավարական համագործակցության

¹⁸ China in the Middle East, The Wary Dragon, by Andrew Scobell, Alireza Nader, RAND Corporation, 2016, https://www.rand.org/pubs/research_reports/RR1229.html (այցելվել է 13.09.2021թ.):

¹⁹ Major Power Rivalry in the Middle East, Steven A. Cook, The Council on Foreign Relations (CFR), March 2021 https://cdn.cfr.org/sites/default/files/report_pdf/dp-cook-final-interior-and-exterior_0.pdf (այցելվել է 13.09.2021թ.):

հարաբերությունների», իսկ Իսրայելի՝ հետ «համապարփակ նորարարական գործընկերության» պայմանագրերը: Չինաստանը Թուրքիային դիտարկում է որպես կարևոր կամուրջ դեպի Եվրոպա, իսկ Իսրայելին՝ ոչ միայն որպես տեխնոլոգիական համագործակցության կարևոր աղբյուր, այլև կամուրջ ԱՄՆ-ի հետ տարածաշրջանային համագործակցության հարցերում: Չինաստանը նաև երկկողմ համագործակցության երրորդ մակարդակի՝ «ռազմավարական գործընկերության» մասին պայմանագրեր ունի Իրաքի, Հորդանանի, Քուվեյթի, Մարոկկոյի, Օմանի և Կատարի հետ²⁰: Ինչպես տեսնում ենք, Չինաստանը ամենաբարձր մակարդակի հարաբերություններ է զարգացնում Մերձավոր Արևելքի գրեթե բոլոր հիմնական դերակատարների հետ, ընդ որում՝ նաև միմյանց նկատմամբ ակնհայտ թշնամական կեցվածք ունեցող երկրների հետ, ինչպիսիք են, օրինակ, Սաուդյան Արաբիան և Իրանը:

Տարածաշրջանի նկատմամբ ՉԺՀ հետաքրքրության աճին նպաստող կարևոր գործոններից մեկը դեռևս Օբամայի պաշտոնավարման ժամանակ՝ 2011-2012թթ. ԱՄՆ կողմից որդեգրված այսպես կոչված Ասիայում «հավասարակշռության» քաղաքականությունն է²¹, որը հետագայում, Թրամփի վարչակազմի օրոք ավելի ցցուն դարձավ և կարծես այդ միտումը շարունակում է նաև Բայդենի վարչակազմը²²: Չինաստանը պարզապես ձգտում է մեծացնել ԱՄՆ հետ մրցակցությունը այլ տարածաշրջաններում, այդ թվում՝ Մերձավոր Արևելքում, որպեսզի շեղի վերջինիս ուշադրությունը իր համար կենսական նշանակություն ունեցող և անմիջական հարևանությամբ գտնվող տարածաշրջաններից²³: Հենց այս համատեքստում պետք է դիտարկել նաև Չինաստանի «Գոտի և ճանապարհ» նախաձեռնությունը, որտեղ նույնպես Մերձավոր Արևելքը առանցքային տեղ է զբաղեցնում: Ընդհանուր առմամբ տարածաշրջանը աշխարհառազմավարական առումով Չինաստանի համար մեծ կարևորություն ունի, այնտեղ ՉԺՀ հետաքրքրության աճը Կենտրոնական Ասիայում գերակայության հասնելու չինական քաղաքականության տրամաբանական շարունակությունն է:

²⁰ Reimagining U.S. Strategy in the Middle East/ Sustainable Partnerships, Strategic Investments, by Dalia Dassa Kaye, Linda Robinson, Jeffrey Martini, Nathan Vest, Ashley L. Rhoades, RAND Corporation, 2021, https://www.rand.org/pubs/research_reports/RRA958-1.html (այցելվել է 13.09.2021թ.):

²¹ Pivot to the Pacific? The Obama Administration's "Rebalancing" Toward Asia, Mark E. Manyin, Coordinator, Congressional Research Service, March 28, 2012, <https://fas.org/sgp/crs/natsec/R42448.pdf> (այցելվել է 13.09.2021թ.):

²² Biden Trimming Forces Sent to Mideast to Help Saudi Arabia, By Gordon Lubold and Warren P. Strobel, updated April 1, 2021, https://www.wsj.com/articles/biden-trimming-forces-sent-to-mideast-to-help-saudi-arabia-11617279687?mod=hp_lead_pos7 (այցելվել է 13.09.2021թ.):

²³ Last Among Equals: The China-Iran Partnership in a Regional Context, By Lucille Greer and Esfandyar Batmanghelidj, The Wilson Center, September 2020, https://www.wilsoncenter.org/sites/default/files/media/uploads/documents/MEP_200831_OCC%2038%20v3%20%281%29.pdf (այցելվել է 13.09.2021թ.):

1.5. Չինաստանի համար տարածաշրջանի տնտեսական և էներգետիկ կարևորությունը

Մերձավոր Արևելքի նկատմամբ Չինաստանի հետաքրքրության աճը առաջին հերթին պայմանավորված է եղել տնտեսական հրամայականով: Եթե սկզբնական շրջանում ՉԺՀ աճող տնտեսությունը հատկապես մեծ տեմպերով ավելացնում էր այս տարածաշրջանից էներգակիրների կլանումը, ապա հետագայում տարածաշրջանի երկրների հետ տնտեսական համագործակցության շրջանակը ավելի ընդլայնվեց՝ ներառելով տնտեսության տարբեր ճյուղեր²⁴: Սկսած 2016-2017 թվականներից՝ Չինաստանը հանդիսանում է տարածաշրջանի առաջատար առևտրային գործընկերը՝ փոխադարձ առևտրի ծավալով շրջանցելով Միացյալ Նահանգներին²⁵:

Մերձավոր Արևելքի և Կենտրոնական Ասիայի երկրների հետ առևտրի շրջանառության ցուցանիշով Չինաստանը զգալիորեն գերազանցում է ԱՄՆ-ին և ՌԴ-ին: Ըստ Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) տվյալների բազայի՝ այս տարածաշրջանի երկրների հետ 2020-ին Միացյալ Նահանգների առևտրի շրջանառությունը կազմել է 81 մլրդ դոլար (ԱՄՆ-ից արտահանումը՝ 51 մլրդ, ներմուծումը՝ 30 մլրդ), մինչդեռ Չինաստանի առևտրի շրջանառությունը կազմել է շուրջ 315 մլրդ դոլար (Չինաստանից արտահանումը՝ 171 մլրդ, ներմուծումը 144 մլրդ): 2020-ին տարածաշրջանի երկրների հետ Ռուսաստանի առևտրաշրջանառությունը ավելի համեստ տեսք ունի՝ շուրջ 55 մլրդ դոլար (ՌԴ-ից արտահանումը՝ 43 մլրդ, ներմուծումը՝ շուրջ 12 մլրդ)²⁶: Ինչպես տեսնում ենք, Միացյալ Նահանգների ցուցանիշը ավելի համադրելի է Ռուսաստանի ցուցանիշի հետ, մինչդեռ Չինաստանը ԱՄՆ ցուցանիշին գերազանցում է մոտ 4 անգամ, իսկ ՌԴ ցուցանիշին՝ շուրջ 6 անգամ: Սա վկայում է այն մասին, որ տարածաշրջանի երկրների նկատմամբ տնտեսական ազդեցության տեսանկյունից Չինաստանը շատ ավելի մեծ լծակներ ունի, քան մյուս գերտերությունները:

²⁴ China's raw materials strategy, The next chapter in the US-China rivalry?, Bashar Malkawi, 24 JANUARY 2020, <https://www.policyforum.net/chinas-raw-materials-strategy/> (այցելվել է 13.09.2021թ.):


²⁵ US-China Competition and Its Implications for the Middle East, Dr. Mohammed Saqr Alsulami, the International Institute for Iranian Studies (Rasanah), 08 May 2021 <https://rasanah-iis.org/english/wp-content/uploads/sites/2/2021/05/US-China-Competition-and-Its-Implications-for-the-Middle-East.pdf>

(այցելվել է 13.09.2021թ.): Wang Huiyao: China has a larger role to play in the Middle East, By Wang Huiyao, November 11, 2019, <http://en.ccg.org.cn/archives/57978> (այցելվել է 13.09.2021թ.):

²⁶ Արժույթի միջազգային հիմնադրամի տվյալների բազայի «Մերձավոր Արևելք և Միջին Ասիա» բաժինը ներառում է 32 երկիր՝ Մեծավոր Արևելքից, Հյուսիսային Աֆրիկայից, Հարավային Կովկասից և Կենտրոնական Ասիայից (Աֆղանստան, Ալժիր, Հայաստան, Ադրբեջան, Բահրեյն, Զիբուր, Եգիպտոս, Վրաստան, Իրան, Իրաք, Հորդանան, Ղազախստան, Քուվեյթ, Ղրղզստան, Լիբանան, Լիբիա, Մավրիտանիա, Մարոկկո, Օման, Պակիստան, Կատար, Սաուդյան Արաբիա, Սոմալի, Սուդան, Սիրիա, Տաջիկստան, Թունիս, Թուրքմենստան, ԱՄԷ, Ուզբեկստան, Գազա և Արևմտյան Ափ, Եմեն) <https://data.imf.org/regular.aspx?key=61013712> (այցելվել է 13.09.2021թ.):

Տարածաշրջանի կարևոր դերակատարներից Չինաստանի հետ զարգացած տնտեսական հարաբերություններ ունեն հատկապես Սաուդյան Արաբիան, ԱՄԷ-ն, Իրաքը, Իրանը, Թուրքիան, Պակիստանը, Իսրայելը, Եգիպտոսը: Օրինակ, 2019-ին առևտրի շրջանառությունը Չինաստանի և Սաուդյան Արաբիայի միջև կազմել է 78,2 մլրդ դոլար²⁷, ինչը գրեթե հավասար է ողջ տարածաշրջանի հետ 2020-ին ԱՄՆ առևտրի ընդհանուր ցուցանիշին: Չինաստանի մյուս խոշոր առևտրային գործընկերներն են ԱՄԷ-ն, Իրաքը, Իրանը:

Չինաստանի ընդհանուր առևտրի շրջանառությունը գործընկեր երկրի հետ \$ Միլիարդ




Աղբյուրը՝ IMF DOTS (<https://data.imf.org/regular.aspx?key=61013712>)

Շատ ավելի ուշագրավ պատկեր է ստացվում, երբ դիտարկում ենք ՉԺՀ մասնաբաժինը գործընկեր երկրների ընդհանուր առևտրաշրջանառության մեջ: Չնայած վերջին տարիներին տարածաշրջանում Չինաստանի ամենախոշոր առևտրային գործընկերները Սաուդյան Արաբիան և ԱՄԷ-ն են, սակայն Չինաստանն ամենամեծ մասնաբաժինն ունի Իրանի արտաքին առևտրաշրջանառության մեջ՝ շուրջ 33%: Վերջինիս հաջորդում են Իրաքը և Պակիստանը:

²⁷ China-Iran Relations Strategic, Economic, and Diplomatic Aspects in Comparative Perspective, Kevjn Lim, Institute for National Security Studies, May 2021, https://www.inss.org.il/wp-content/uploads/2021/05/Memo213_e.pdf (այցելվել է 13.09.2021թ.):

Չինաստանի մասնաբաժինը(%) գործընկեր երկրի ընդհանուր առևտրաշրջանառության մեջ



Աղբյուրը՝ The calculations are from IMF DOTS (<https://data.imf.org/regular.aspx?key=61013712>)


Փաստորեն, տարածաշրջանի երկրների շարքում Իրանն ամենամեծ կախվածությունն ունի Չինաստանի հետ առևտրից, հետևաբար պատահական չէ, որ Պեկինը հենց Թեհրանին է դիտարկում որպես տարածաշրջանում ազդեցության տարածման կարևոր հենակետ, քանի որ ունի վերջինիս նկատմամբ շատ ավելի մեծ ազդեցության լծակներ: Համեմատության համար՝ 2019-ին Թուրքիայի արտաքին առևտրաշրջանառության մեջ Չինաստանի մասնաբաժինը միայն շուրջ 5%-ն է կազմել:

Վերոհիշյալ ցուցանիշները պայմանավորված են նաև տարածաշրջանում աճող չինական ներդրումներով: Չինաստանը ԱՄՆ-ին գերազանցում է նաև Մերձավոր Արևելքում կատարած ներդրումների ցուցանիշով, եթե Միացյալ Նահանգները 2000-2019թթ. Մերձավոր Արևելքում կատարել է շուրջ 75 մլրդ դոլարի ներդրում²⁸, ապա 2005-2020թթ. Մերձավոր Արևելքում և Հյուսիսային Աֆրիկայում Չինաստանի կատարած ներդրումների ծավալը հասնում է շուրջ 200 մլրդ դոլարի²⁹:

²⁸ Direct investment position of the United States in the Middle East from 2000 to 2020, Aug 4, 2021, <https://www.statista.com/statistics/188602/united-states-direct-investments-in-the-middle-east-since-2000/> (այցելվել է 13.09.2021թ.):

²⁹ China Global Investment Tracker, <https://www.aei.org/china-global-investment-tracker/> (այցելվել է 13.09.2021թ.):


Չինաստանի ընդհանուր ներդրումներն ու շինարարական նախագծերը գործընկեր երկրում \$ միլիարդ, 2005-2020թթ



Աղբյուրը՝ China Global Investment Tracker, n.d. (<https://www.aei.org/china-global-investment-tracker/>)

Ներդրումների մասով նույնպես Չինաստանի կարևոր գործընկերներն են ԱՄԷ-ն, Պակիստանը, Իրանը, Սաուդյան Արաբիան, իսկ վերջին տարիներին նկատելի է նաև Չինական ներդրումների շեշտակի աճը Իսրայելում և որոշակի աճը Թուրքիայում:

Չինաստանի օտարերկրյա ուղղակի ներդրումները \$ միլիարդ



Աղբյուրը՝ Statistical Bulletin of China's Outward Foreign Direct Investment, 2011, 2018, Chinese Ministry of Commerce

Մերձավոր Արևելքում՝ հատկապես էներգակիրների ներկրման ոլորտի նկատմամբ ԱՄՆ հետաքրքրության նվազման համատեքստում, տարածաշրջանի երկրների համար շատ կարևոր է գտնել էներգակիրների արտահանման նոր, կայուն շուկաներ, իսկ Չինաստանում, որը այսօր էլ համարվում է տարածաշրջանից

նավթի ամենամեծ ներկրողը, առաջիկա տասնամյակներին միայն ավելանալու է էներգակիրների ներմուծման պահանջարկը: Ներկայումս Չինաստանը բնական գազի աշխարհի ամենախոշոր ներկրողն է, իսկ առաջիկա տասնամյակներին բնական գազը, որպես էկոլոգիապես ավելի մաքուր ռեսուրս, դառնալու է Չինաստանի հիմնական անցումային էներգառեսուրսը, հետևաբար դրա ներմուծումը ավելի է ավելանալու³⁰: Սա նշանակում է, որ տարածաշրջանի երկրները չեն կարող կորցնել չինական շուկան և Պեկինը կարող է դառնալ էներգակիրներ արտահանումից կախվածություն ունեցող երկրների փրկօղակը:

Այստեղ առկա է նաև հակառակ տրամաբանությունը. Չինաստանը նույնպես էներգակիրների ներմուծման տեսանկյունից տարածաշրջանից զգալի կախվածության մեջ է գտնվում: 2019-ին Չինաստանի կողմից սպառած նավթի 36%-ը և ներմուծման 40%-ը բաժին է ընկել Մերձավոր Արևելքին³¹: Չինաստանի համար տարածաշրջանից նավթի ներմուծման հիմնական աղբյուրներն են Սաուդյան Արաբիան՝ ներմուծման 15%-ը, Իրաքը՝ 9%-ը (մեծ է նաև Իրանից անուղղակի ներմուծման մասնաբաժինը):³² Այսինքն՝ էներգետիկ ոլորտում համագործակցության տեսանկյունից տարածաշրջանի երկրներն ու Չինաստանը գտնվում են յուրատեսակ փոխկախվածության մեջ:

1.6. Մերձավոր Արևելքի երկրների և Չինաստանի փոխադարձ հետաքրքրությունները

Ուշագրավ է, որ Չինաստանը կարողացել է այսպիսի ցուցանիշների հասնել՝ միաժամանակ զարգացնելով հավասարակշռված հարաբերություններ տարածաշրջանի գրեթե բոլոր երկրների հետ: Ինչպես նշվեց, Պեկինը չի հրապարակում տարածաշրջանի երկրների հետ հարաբերությունների ընդհանուր ռազմավարություն՝ փորձելով խուսափել տարածաշրջանի երկրների հակասությունների կենտրոնում հայտնվելու հեռանկարից: Օրինակ, 2016-ին հրապարակված «Չինաստանի արաբական քաղաքականության փաստաթուղթը»³³ նույնպես չի պարունակում այնպիսի ձևակերպումներ, որոնք ի ցույց կդնեին այս կամ այն երկրի նկատմամբ ՉԺՀ առանձնահատուկ

³⁰ Does China Need More Gas From Russia and Central Asia?, Sergei Kapitonov, Temur Umarov, 12.01.2021, <https://carnegie.ru/commentary/83593> (այցելվել է 13.09.2021թ.):

³¹ Statistical Review of World Energy 2020 | 69th edition, British Petroleum, <https://www.bp.com/content/dam/bp/business-sites/en/global/corporate/pdfs/energy-economics/statistical-review/bp-stats-review-2020-full-report.pdf> (այցելվել է 13.09.2021թ.):

³² Reimagining U.S. Strategy in the Middle East/ Sustainable Partnerships, Strategic Investments, by Dalia Dassa Kaye, Linda Robinson, Jeffrey Martini, Nathan Vest, Ashley L. Rhoades, RAND Corporation, 2021, https://www.rand.org/pubs/research_reports/RR958-1.html (այցելվել է 13.09.2021թ.):

³³ Full text of China's Arab Policy Paper, THE STATE COUNCIL OF THE PEOPLE'S REPUBLIC OF CHINA, Jan 13, 2016, http://english.www.gov.cn/archive/publications/2016/01/13/content_281475271412746.htm (այցելվել է 13.09.2021թ.):

վերաբերմունքը: Փոխարենը այդ փաստաթղթում Չինաստանը առանձնացնում է այն երեք հիմնական ուղղությունները, որոնցով զարգացնելու է հարաբերությունները տարածաշրջանի երկրների հետ: Դրանք են՝ 1) էներգետիկան՝ որպես հիմնական ուղղություն, 2) ենթակառուցվածքները, առևտուրն ու ներդրումները, 3) համագործակցությունը տեխնոլոգիաների ոլորտում՝ միջուկային էներգիա, տիեզերք, արբանյակներ:

Չինաստանի առաջարկած այսպիսի օրակարգը բավական ձեռնտու է տարածաշրջանի երկրներին, քանի որ այն հիմնականում հիմնված է պետությունների ազգային ինքնիշխանությունը ամրագրող Վեստֆալյան համակարգի սկզբունքների վրա: Ի տարբերություն ԱՄՆ-ի, որը տարածաշրջանի երկրների հետ համագործակցությունը հաճախ փոխկապակցում է լիբերալ սկզբունքների տարածման հետ և այդ հարցում գործընկերների վրա պարբերաբար ճնշում է գործադրում, Չինաստանի հետ համագործակցությունը զերծ է նմանօրինակ կաղապարներից: Բացի այդ, տարածաշրջանի երկրների կողմից Չինաստանը չի ընկալվում որպես իմպերիալիստական ձգտումներ ունեցող գերտերություն. լինելով կոմունիստական գաղափարախոսության կրող՝ Չինաստանը, ի տարբերություն ԽՍՀՄ-ի, տարբեր տարածաշրջաններում «կոմունիզմ արտահանելու» շատ մեծ պատմություն չունի:

Միաժամանակ, Մեծ Մերձավոր Արևելքի երկրները Չինաստանի տնտեսական մոդելը դիտարկում են որպես այլընտրանք արևմտյան տնտեսական մոդելին՝ փորձելով Չինաստանի հետ համագործակցության միջոցով թուլացնել կախվածությունը Արևմուտքից և արևմտյան ֆինանսական կառույցներից: Մասնավորապես, Չինաստանի հովանու ներքո գտնվող Ասիական զարգացման բանկը տարածաշրջանում ակտիվորեն մրցակցում է ԱՄՆ ազդեցության տակ գտնվող ԱՄՀ-ի և Համաշխարհային բանկի հետ:

Տարածաշրջանի երկրները Չինաստանը դիտարկում են նաև որպես նորագույն տեխնոլոգիաների զարգացման հարցում կարևոր գործընկեր: Չինաստանի ընձեռած տեխնոլոգիական հնարավորությունները հատկապես հրապուրիչ են այն երկրների համար, որոնք մի կողմից՝ սուղ ֆինանսական ռեսուրսների, մյուս կողմից՝ պատժամիջոցների պատճառով հնարավորություն չունեն օգտվելու արևմտյան նորագույն տեխնոլոգիաներից (Իրան, Իրաք, Սիրիա և այլն): Տեխնոլոգիաների ոլորտում Չինաստանին առավելություն է տալիս նաև զարգացած 5G ցանցը, ձեռքբերումները արհեստական ինտելեկտի բնագավառում: Այս ուղղությամբ Չինաստանը ԱՄՆ-ի նկատմամբ մրցակցային առավելություն ունի, հետևաբար Վաշինգտոնը հաճախ փորձում է իր տարածաշրջանային գործընկերների վրա ճնշում բանեցնել՝ ձգտելով թույլ չտալ այդ երկրներում չինական տեխնոլոգիաների չափից ավել տարածումը՝ հատկապես հաշվի առնելով

դրանց ընձեռած հնարավորությունները հետախուզության և տեղեկատվական հոսքերի կառավարման ոլորտներում³⁴:

Չնայած դրան, տարածաշրջանի մի շարք երկրներ, այդ թվում՝ Բահրեյնը, Եգիպտոսը, Քուվեյթը, Օմանը, Սաուդյան Արաբիան, ԱՄԷ-ն, հեռահաղորդակցության համակարգերը արդիականացնում են չինական «Հուավեյի» տեխնոլոգիաների հիման վրա: Այս համակարգերը օգտագործվում են հանրային անվտանգության, երթևեկության կանոնակարգման և պետական ծառայությունների բարելավման համար, բայց դրանք կարող են օգտագործվել նաև ընդհանուր վերահսկողության և բնակչության վերահսկման համար, նաև կարող են նպաստել մեծ թվով տվյալների հավաքագրմանը՝ դրանք չարաշահելու ռիսկերով³⁵: Չինաստանը նաև ներգրավված է մի շարք «խելացի քաղաքների» նախագծերում՝ Իրանում և Ծոցի երկրներում: Այս ոլորտում համագործակցությունը շահեկան է հատկապես տարածաշրջանի երկրների ավտորիտար իշխանությունների համար, ինչը Չինաստանի հետ համագործակցության լրացուցիչ հարթակ է ձևավորում³⁶:

1.7. Գերտերությունների մրցակցությունից բխող ռիսկերն ու հնարավորությունները տարածաշրջանի երկրների համար

Կարելի է ակնկալել, որ տարածաշրջանում ՌԴ-ի և հատկապես Չինաստանի ազդեցության աճին զուգահեռ, ԱՄՆ-ը մեծացնելու է քաղաքական և դիվանագիտական ճնշումն իր գործընկերների նկատմամբ՝ փորձելով սահմանափակել վերջիններիս հետ իր աշխարհաքաղաքական մրցակիցների ֆինանսատնտեսական և ռազմական համագործակցությունը: Նաև այս համատեքստում պետք է դիտարկել Մեծ յոթնյակի երկրների կողմից 2021-ի հունիսի հանդիպման ժամանակ հայտարարված «Վերակառուցելով ավելի լավ աշխարհ»՝ B3W նախագիծը³⁷, որը հավակնում է դառնալ «Գոտի և ճանապարհ»

³⁴ US-China Competition and Its Implications for the Middle East, Dr. Mohammed Saqr Alsulami, the International Institute for Iranian Studies (Rasanah), 08 May 2021 <https://rasanah-iiis.org/english/wp-content/uploads/sites/2/2021/05/US-China-Competition-and-Its-Implications-for-the-Middle-East.pdf> (այցելվել է 13.09.2021թ.):

³⁵ China's Smart Cities Development, Katherine Atha, Jason Callahan, John Chen, Jessica Drun, Ed Francis, Kieran Green, Dr. Brian Lafferty, Joe McReynolds, Dr. James Mulvenon, Benjamin Rosen, and Emily Walz, Research Report Prepared on Behalf of the U.S.-China Economic and Security Review Commission, January 2020, https://www.uscc.gov/sites/default/files/China_Smart_Cities_Development.pdf (այցելվել է 13.09.2021թ.):

³⁶ Reimagining U.S. Strategy in the Middle East/ Sustainable Partnerships, Strategic Investments, by Dalia Dassa Kaye, Linda Robinson, Jeffrey Martini, Nathan Vest, Ashley L. Rhoades, RAND Corporation, 2021, https://www.rand.org/pubs/research_reports/RRA958-1.html (այցելվել է 13.09.2021թ.):

³⁷ Build Back Better World: An Alternative to the Belt and Road Initiative?, By Syed Zain Abbas Rizvi, June 18, 2021, <https://moderndiplomacy.eu/2021/06/18/build-back-better-world-an-alternative-to-the-belt-and-road-initiative/> (այցելվել է 13.09.2021թ.):

նախագծի մրցակիցը³⁸: Վերջին շրջանում Արևմուտքի կողմից առաջ են քաշվում այնպիսի նախագծեր, ինրպիսիք են ԵՄ Global Gateway ծրագիրը³⁹, Ավստրալիա-Միացյալ Թագավորություն-ԱՄՆ դաշինքը (Aukus pact)⁴⁰, Հնդկաստանի արաբամիջերկրական միջանցքը (India Arab-Med Corridor)⁴¹, որոնք բոլորը ուղղված են Չինաստանի «Գոտի և ճանապարհ» նախագծի դեմ և միտված են խորացնելու գերտերությունների միջև գլոբալ մեգանախագծերի մրցակցությունը:

Այս քաղաքականությունը կարող է ընդհուպ ԱՄՆ-ի և Արևմուտքի կողմից տարատեսակ պատժամիջոցների և տնտեսական սահմանափակումների տեսք ստանալ, ինչը աստիճանաբար կնեղացնի գերտերությունների միջև մանրեղու դաշտը տարածաշրջանի երկրների համար: Նրանք կարող են երկրնտրանքի առաջ կանգնել՝ կա՛մ կորցնել անվտանգային հարցերում համագործակցությունը ԱՄՆ-ի հետ, կա՛մ հրաժարվել ՉԺՀ հետ տնտեսական-տեխնոլոգիական համագործակցությունը խորացնելու հեռանկարից:

Մերձավոր Արևելքում Ռուսաստանի վերադարձը, Չինաստանի ազդեցության աճն ու ԱՄՆ-ի երկարամյա գերակայության ավարտը կարող են նոր դինամիկա հաղորդել տարածաշրջանային հակամարտություններին: Գերտերությունների ակտիվ մրցավազքի պարագայում ավելի է մեծանում հակամարտությունների սրման հավանականությունը՝ հաշվի առնելով, որ նրանցից յուրաքանչյուրը փորձելու է այդ հակամարտությունների միջոցով առաջ մղել սեփական շահերը: Չնայած տարածաշրջանում գերտերությունները սովորաբար խուսափում են ուղղակի ռազմական բախումից, սակայն հետագա ցնցումներից ու անկայունությունից խուսափելու համար տարածաշրջանային դերակատարները պետք է ավելի մեծ ուշադրություն դարձնեն հակամարտությունների կառավարմանը, որպեսզի դրանք չվերաճվեն գերտերությունների միջև անուղղակի պայքարի թատերաբեմի:

Մյուս կողմից, Մերձավոր Արևելքում ԱՄՆ-ՉԺՀ մրցակցությունը կարող է նաև որոշակի նոր հնարավորություններ ստեղծել տարածաշրջանի երկրների համար: Մասնավորապես, տարածաշրջանում ԱՄՆ գործընկերները կարող են նաև օգտվել ԱՄՆ-ՉԺՀ աճող մրցակցությունից՝ փորձելով տարբեր տարածաշրջանային

³⁸ <https://www.luys.am/index.php?m=publicationsOne&pid=242> (այցելվել է 13.09.2021թ.):

³⁹ EU launches 'Global Gateway' to counter China's Belt and Road, STUART LAU AND HANNE COKELAERE, September 15, 2021 https://www.politico.eu/article/eu-launches-global-gateway-to-counter-chinas-belt-and-road/?utm_medium=Social&utm_source=Facebook&fbclid=IwAR3IF9_GlmlGIDZl-zAkxMAk5v-gH5sf5JHZPmRKUY9TfmD_y4IKW2_HCQ#Echobox=1631704356 (այցելվել է 17.09.2021թ.):

⁴⁰ Aukus: UK, US and Australia launch pact to counter China, BBC, 16.09.2021, <https://www.bbc.com/news/world-58564837> (այցելվել է 17.09.2021թ.):

⁴¹ India's Arab-Mediterranean Corridor, Michaël Tanchum, 27 August 2021 <https://www.isas.nus.edu.sg/wp-content/uploads/2021/08/South-Asia-Scan-Aug-2021-V4.pdf> (այցելվել է 17.09.2021թ.):

խնդիրների ու հակամարտությունների հարցում Միացյալ Նահանգների կողմից ավելի հստակ աջակցություն ստանալ: Տարածաշրջանի հակամարտող երկրները կարող են նաև փորձել կարգավորել սուր հակամարտությունները և առաջ քաշել տարածաշրջանային անվտանգության նոր նախաձեռնություններ, ինչը հնարավորություն կտա հնարավորինս խուսափել գերտերությունների հակամարտության թատերաբեմ դառնալու և նոր սառը պատերազմում ներքաշվելու հեռանկարից:

Նմանատիպ նախաձեռնություններից մեկը կարող է դառնալ ԵԱՀԿ-ի օրինակով Պարսից ծոցում և Մերձավոր Արևելքում անվտանգության և համագործակցության կազմակերպություն ստեղծման գաղափարը, որը կարող է ընդգրկել նաև արտատարածաշրջանային գերտերություններին՝ ՌԴ, ՉԺՀ, ԱՄՆ, ԵՄ և Հնդկաստան⁴²: Այս գաղափարը, տարբեր նրբերանգներով, ներկայացրել կամ պաշտպանել են Ռուսաստանը⁴³, Իրանը⁴⁴, Չինաստանը, այն ներկայացվել է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին⁴⁵: Երկարաժամկետ հեռանկարում այն կարող է տարածաշրջանում խաղաղության և կայունության հնարավորություն բացել:

1.8. Չինաստանը և Մերձավոր Արևելքում ռազմաքաղաքական հավասարակշռությունը

Հարկ է նշել, որ թեև առևտրատնտեսական և տեխնոլոգիաների ոլորտում Չինաստանը Մերձավոր Արևելքում մեծ առավելություն ունի մյուս աշխարհաքաղաքական մրցակիցների նկատմամբ, սակայն բոլորովին այլ իրավիճակ է ռազմաքաղաքական ներկայության տեսանկյունից: Այս հարցում

⁴² Security in the Gulf Area: Russia's New Initiative, Andrei Baklanov, 06.08.2019, <https://valdaiclub.com/a/highlights/security-in-the-gulf-area-russia-s-new-initiative/> (այցելվել է 13.09.2021թ.); Воспользуется ли Иран идеями России в отношении региональной безопасности на Ближнем Востоке?, Ханна Нотте, Хамидреза Азизи, 08.04.2021, <https://ru.valdaiclub.com/a/highlights/vospolzuetsya-li-iran-ideyami-rossii/> (այցելվել է 13.09.2021թ.):

⁴³ Российская Концепция коллективной безопасности в зоне Персидского залива, Министерство иностранных дел Российской Федерации, 24.08.21, https://www.mid.ru/ru/foreign_policy/international_safety/conflicts/-/asset_publisher/xIEMTQ3OvzcA/content/id/3733575?p_p_id=101_INSTANCE_xIEMTQ3OvzcA&_101_INSTANCE_xIEMTQ3OvzcA_languageId=ru_RU (այցելվել է 13.09.2021թ.):

⁴⁴ Zarif calls Russia and China strategic partners/ Iran welcomes moscow's plan for Persian Gulf, december 30, 2019, [Zarif calls Russia and China strategic partners/ Iran welcomes Moscow's plan for Persian Gulf - News Online \(khabaronline.ir\)](https://www.khabaronline.ir) (այցելվել է 13.09.2021թ.); Making sense of HOPE: Can Iran's Hormuz Peace Endeavor succeed? IranSource by Mehran Haghiriyan and Luciano Zaccara, OCT 3, 2019, <https://www.atlanticcouncil.org/blogs/iransource/making-sense-of-hope-can-irans-hormuz-peace-endeavor-succeed/> (այցելվել է 13.09.2021թ.):

⁴⁵ Concerned about Lasting Conflicts, Terrorism, Sectarian Tensions Plaguing Persian Gulf, Speakers in Security Council Stress Need for Coherent Approach to Collective Security, UN SECURITY COUNCIL, 20 OCTOBER 2020 <https://www.un.org/press/en/2020/sc14333.doc.htm> (այցելվել է 13.09.2021թ.):

Պեկինը զիջում է ինչպես Վաշինգտոնին, այնպես էլ Մոսկվային: Այսինքն՝ առկա է մի ուշագրավ իրավիճակ, երբ տարածաշրջանից Չինաստանը կարևոր տնտեսական օգուտներ է ստանում, ապահովում է իր էներգետիկ անվտանգությունը, սակայն ազատ է ռազմաքաղաքական պարտավորություններից և ստացել է տարածաշրջանի երկրների միջև բարդ հարաբերությունների համակարգում մանևրելու մեծ դաշտ:

Նման իրավիճակը Պեկինի համար բավական ձեռնտու է, սակայն դա անվերջ շարունակվել չի կարող, և տարածաշրջանից ԱՄՆ-ի աստիճանաբար հետքաշումը Մերձավոր Արևելքում որոշակի վակուում է ստեղծելու, և իր դիրքերն ու կարևոր տնտեսական կապերը չկորցնելու, տարածաշրջանային կայունությունն ապահովելու համար Չինաստանը ստիպված է լինելու լցնել այն՝ սահմանափակելով այս բարդ տարածաշրջանում խուսանավելու և զգայուն հարցերում չեզոք կեցվածք ընդունելու հնարավորությունները: Հակառակ պարագայում այդ վակուումը կարող են լցնել ծավալապաշտական նպատակներ հետապնդող և արևմուտքի կողմից խրախուսվող երկրները՝ օրինակ պանթուրանական օրակարգով Թուրքիան, ինչպես նաև տարատեսակ ահաբեկչական կազմակերպություններ՝ Իսլամական Պետություն, թալիբներ և այլն, ինչը կարող է Չինաստանի համար երկարաժամկետ մարտահրավերներ ստեղծել ինչպես Մերձավոր Արևելքում, այնպես էլ Միջին Ասիայում:

Ընդհանուր առմամբ, վերջին տարիներին ԱՄՆ-ը նույնպես չի թաքցնում, որ այլևս չի պատրաստվում միայնակ ստանձնել Մերձավոր Արևելքի անվտանգության երաշխավորությունը, այն պարագայում, երբ այդ անվտանգությունից հաճախ ավելի շատ օգտվում է իր գլխավոր աշխարհաքաղաքական մրցակից Չինաստանը: Օրինակ, հատկանշական են 2019-ին Հորմուզի նեղուցում և Պարսից ծոցում ճգնաժամի համատեքստում ԱՄՆ-ի նախորդ նախագահ Թրամփի հայտարարությունները, որտեղ նա դժգոհում էր, որ թեև տարածաշրջանի ջրերով էներգակիրների տեղափոխությունից ավելի շատ օգտվում են մյուս երկրները՝ նախ և առաջ նկատի ունենալով Չինաստանին, սակայն դրանց անվտանգությունն ապահովում է ԱՄՆ-ը: Թրամփը առաջարկում էր, որ այդ երկրները (Չինաստանը, Ճապոնիան, Հնդկաստանը, Կորեան) պաշտպանեն իրենց նավերի անվտանգությունը⁴⁶:

Անշուշտ դա չի նշանակում, որ ԱՄՆ-ը կողմ է տարածաշրջանում իր մրցակից երկրների ռազմաբազաների ստեղծմանը, ավելին, Չինաստանի կամ ՌԴ կողմից նման փորձերը կարող են տարածաշրջանում նոր սառը պատերազմի հանգեցնել,

⁴⁶ Trump calls on China, and the world, to protect their own ships from Iran, Alex Lockie Jun 24, 2019, <https://www.businessinsider.com/trump-calls-on-china-others-protect-own-ships-iran-2019-6?IR=T> (այցելվել է 13.09.2021թ.):

սակայն փաստն այն է, որ ո՛չ ԱՄՆ-ին, ո՛չ էլ ՉԺՀ-ին ձեռնտու չէ Մերձավոր Արևելքում անվտանգային վակուումը: ԱՄՆ-ը հաճախ փորձում է այդ վակուումը լցնել իր տարածաշրջանային դաշնակիցների միջոցով, և այդ համատեքստում բավական ակտիվ քաղաքականություն է վարում Թուրքիան: Վերջինս ձգտում է մեծացնել իր ռազմական ներկայությունը բոլոր այն երկրներում, որտեղից ԱՄՆ-ը դուրս է բերում իր զորքերը՝ Իրաք, Սիրիա, Լիբիա, Աֆղանստան: Այս սցենարը երկարաժամկետ տեսանկյունից չի բխում ո՛չ Չինաստանի, Ռուսաստանի, Հնդկաստանի և ո՛չ էլ տարածաշրջանի այլ խոշոր դերակատարների, մասնավորապես՝ Իրանի, Սաուդյան Արաբիայի շահերից:

Ուշագրավ է, որ Չինաստանի և Իրանի միջև վերջերս ստորագրված և մեծ հնչեղություն ստացած համաձայնագիրը, ըստ մամուլում առկա արտահոսքի, Չինաստանին հնարավորություն է տալու Իրանում նավահանգիստներ հիմնել: Սա նշանակում է, որ այդ նավահանգիստները կարող են հետագայում վերածվել ռազմաբազաների՝ ապահովելով ՉԺՀ վերահսկողությունը էներգակիրների գլոբալ շրջանառության տեսանկյունից կարևոր ծովային ուղիների նկատմամբ⁴⁷: Օրինակ, Չինաստանը տարածաշրջանում իր առաջին օտարերկրյա ռազմաբազան հիմնել է Զիբուֆում՝ դա հիմնավորելով Կարմիր ծովում և Հնդկական օվկիանոսում առևտրային ուղիների պաշտպանության անհրաժեշտությամբ: Չի բացառվում, որ նմանատիպ հիմնավորմամբ, օրինակ՝ «Գոտի և ճանապարհ» նախաձեռնության անվտանգության ապահովման նպատակով, Չինաստանը փորձի մեծացնել իր ռազմական ներկայությունը տարածաշրջանի այլ երկրներում⁴⁸, իսկ նման սցենարի դեպքում Իրանը կարող է առանցքային դեր խաղալ: Սակայն, այդպիսի հավակնություններ ունենալու համար Պեկինը նախ պետք է ավարտին հասցնի իր զինված ուժերի ընդլայնման և արդիականացման գործընթացը:

Ընդհանուր առմամբ Մերձավոր Արևելքում գերտերությունների մրցավազքում Չինաստանի հավակնությունների և առաջնահերթությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Պեկինը այս տարածաշրջանին մեծ կարևորություն է տալիս, որը առաջիկա տասնամյակներին միայն ավելանալու է: Չինաստանը տարածաշրջանում որոշիչ ազդեցություն ունեցող գերտերություն

⁴⁷ Defying U.S., China and Iran Near Trade and Military Partnership, By Farnaz Fassih and Steven Lee Myers, Published July 11, 2020, Updated March 27, 2021, <https://www.nytimes.com/2020/07/11/world/asia/china-iran-trade-military-deal.html> (այցելվել է 13.09.2021թ.); China Looks To Build Espionage Hub In Iran Under 25-Year Deal By Simon Watkins - Sep 07, 2020, <https://oilprice.com/Geopolitics/Middle-East/China-Looks-To-Build-Espionage-Hub-In-Iran-Under-25-Year-Deal.html> (այցելվել է 13.09.2021թ.); Iran-China-Russia Axis Threatens US and Israeli Interests, DOUGLAS FRASER, OCTOBER 14, 2020, <https://www.thedefensepost.com/2020/10/14/iran-china-russia-axis/> (այցելվել է 13.09.2021թ.):

⁴⁸ China-Iran Relations Strategic, Economic, and Diplomatic Aspects in Comparative Perspective, Kevjn Lim, Institute for National Security Studies, May 2021, https://www.inss.org.il/wp-content/uploads/2021/05/Memo213_e.pdf (այցելվել է 13.09.2021թ.):

դառնալու համար ունի ինչպես համարժեք ռեսուրս, այնպես էլ անհրաժեշտ կապեր ու հնարավորություններ: Սակայն Մեծ Մերձավոր Արևելքում գերակայության ձգտող ցանկացած գերտերության հաջողությունը կախված է նաև նրանից, թե վերջինս ինչպիսի հարաբերություններ կկառուցի տարածաշրջանի երկու առանցքային դերակատարների՝ Թուրքիայի և Իրանի հետ: Սա նաև կարևոր է Հարավային Կովկասի երկրների համար, քանի որ առանց այս երկու տարածաշրջանային հսկաների շահերը հաշվի առնելու՝ որևէ գերտերություն չի կարող մեր տարածաշրջանում լուրջ հաջողությունների հասնել:

2. ԻՐԱՆ-ՉԻՆԱՍՏԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՆ ԵՎ ԱՊԱԳԱՆ

Ցանկացած գերտերություն, եթե Մերձավոր Արևելքում գերակայության կամ առնվազն որոշիչ դերակատարության նպատակ է հետապնդում, չի կարող հաշվի չառնել խոշոր տարածաշրջանային պետությունների շահերն ու հետաքրքրությունները: Իրանը թերևս Մեծ Մերձավոր Արևելքի կարևորագույն տարածաշրջանային դերակատարներից մեկն է, իսկ Չինաստանը այդ երկրում ունի առանցքային հետաքրքրություններ և շահեր, հետևաբար, Պեկինի տարածաշրջանային քաղաքականությունը ճիշտ վերլուծելու համար կարևոր է հասկանալ Թեհրանի հետ հարաբերությունների առանձնահատկություններն ու հեռանկարները:

2.1. Իրան-Չինաստան փոխադարձ շահերը և հարաբերությունների վերջին տասնամյակների դինամիկան

Չինաստանի և Իրանի միջև դիվանագիտական հարաբերությունները աստիճանաբար զարգացում են ապրել Իրանում տեղի ունեցած իսլամական հեղափոխությունից հետո, սակայն դրանք նոր դինամիկա ստացան հատկապես 2000-ականների կեսերից, երբ Իրանը հայտնվեց միջազգային մեկուսացման մեջ և Չինաստանը դարձավ Իրանի տնտեսության գոյատևման փրկօղակը: Դեռևս Ահմադինեժադի պաշտոնավարման ժամանակ Իրանում նախաձեռնվեց այսպես կոչված «Հայացք դեպի Արևելք» ծրագիրը, որը նպատակ էր հետապնդում Արևմուտքի կողմից մեկուսացումն ու ճնշումը ճեղքելու համար խորացնել համագործակցությունը Արևելքի խոշոր երկրների, առաջին հերթին՝ Չինաստանի հետ:

Արդյունքում Չինաստանը դարձավ Իրանի գլխավոր առևտրային գործընկերը, ռազմարդյունաբերության զարգացման հիմնական երաշխավորը: Իհարկե, այս ռազմավարության շրջանակներում Իրանը փորձում էր նոր որակի հարաբերություններ կառուցել նաև այլ արևելյան գործընկերների՝ մասնավորապես

ՌԴ-ի և Հնդկաստանի հետ, սակայն Ռուսաստանի հետ որոշ հակասություններ մի շարք տարածաշրջանային հարցերում՝ Սիրիա, Հարավային Կովկաս և այլն, ինչպես նաև Հնդկաստանի կողմից խոշոր տարածաշրջանային ինտեգրացիոն նախագծերի բացակայությունը Չինաստանի հետ համագործակցությունը դարձնում են անայլընտրանք⁴⁹:

Ուշագրավ է, որ Իրանի նկատմամբ ամերիկյան պատժամիջոցներից հիմնական օգտվողը դարձավ հենց Չինաստանը: Երբ ԱՄՆ-ը Իրանի նկատմամբ պատժամիջոցներ նախաձեռնեց և Արևմուտքը սկսեց աստիճանաբար հրաժարվել Թեհրանի հետ տնտեսական համագործակցության տարբեր ծրագրերից, Չինաստանը ոչ միայն չդադարեցրեց Իրանի հետ տնտեսական համագործակցությունը, այլև շեշտակիորեն ավելացրեց այն: Օրինակ, երբ Եվրոպական բանկերը՝ ԱՄՆ պատժամիջոցների ճնշման ներքո հրաժարվեցին իրանական կառավարությանն ու բիզնեսին ծառայություններ մատուցել, անմիջապես փոխարինելու եկան չինական բանկերը: Երբ Ֆրանսիան ի վիճակի չէր աշխատել Թեհրանի մետրոյի կառուցման ծրագրում, Իրանը 1995-ին հրավիրեց Չինաստանին, որը 2000-2006թթ. կյանքի կոչեց այդ խոշոր ծրագիրը: Չինաստանը նախորդ տասնամյակներին զգալիորեն նպաստել է Իրանի ռազմարդյունաբերության զարգացմանը, միջուկային ծրագրին, տեխնոլոգիաների բնագավառում սահմանափակումների հաղթահարմանը:

Իրանի և Չինաստանի հարաբերությունները ճիշտ գնահատելու և փոխադարձ շահերը օբյեկտիվորեն հասկանալու համար շատ կարևոր է հաշվի առնել այն իրողությունը, որ այդ հարաբերությունները խիստ անհամաչափ են: Վերջին տասնամյակների ընթացքում Չինաստանը աստիճանաբար դարձավ Իրանի տնտեսության միակ, մենաշնորհային օտարերկրյա գործընկերը՝ փաստացի հայտնվելով մրցակցությունից դուրս: Օրինակ, չնայած Պեկինը Իրանի արտահանման առաջին ամենամեծ շուկան է, Իրանը նույնիսկ բացակայում է Պեկինի 25 ամենախոշոր առևտրային գործընկերների շարքում: Սա նշանակում է, որ Իրանի տնտեսությունը գտնվում է Չինաստանից հսկայական կախվածության մեջ, ինչը Պեկինին վերջինիս նկատմամբ ազդեցության լուրջ լծակներ է տալիս, մինչդեռ Չինաստանի նկատմամբ Իրանը տնտեսական լուրջ ազդեցություն չունի⁵⁰:

⁴⁹ Are China and Iran Forging a New Geopolitical Axis in Eurasia? By Emil Avdaliani -March 1, 2021, <https://chinaobservers.eu/are-china-and-iran-forging-a-new-geopolitical-axis-in-eurasia/> (այցելվել է 13.09.2021թ.):

⁵⁰ How the coronavirus is cementing Iran's tilt towards China, by Ali Dadpay, Atlantic Council, MAY 7, 2020, <https://www.atlanticcouncil.org/blogs/iransource/how-the-coronavirus-is-cementing-irans-tilt-towards-china/> (այցելվել է 13.09.2021թ.):

Միննույն ժամանակ Չինաստանը կաշկանդված չէ Իրանի հետ ունեցած հարաբերություններով և կարողացել է բազմակողմանի հարաբերություններ զարգացնել նաև տարածաշրջանի այլ երկրների հետ: Ավելին, ոչ բոլոր միջազգային հարցերում է Չինաստանը անվերապահորեն աջակցում Թեհրանին. օրինակ Պեկինը կողմ է քվեարկել 2006-2014թթ. Իրանի դեմ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բոլոր 10 բանաձևերին⁵¹: Փաստորեն, առկա է եղել մի իրավիճակ, երբ Չինաստանը օգտվել է Իրանում իր համար առկա մենաշնորհային կարգավիճակից, իսկ Իրանը, այլընտրանքի բացակայության պատճառով, աչք է փակել Չինաստանի այն գործողությունների վրա, որոնք չեն համընկել իր շահերին, իսկ երբեմն էլ հակասել են դրանց:

Այնուամենայնիվ, պետք է փաստել, որ Իրանի և Չինաստանի տարածաշրջանային և աշխարհաքաղաքական շահերը ընդհանուր առմամբ համընկնում են: Այս երկրների միջև առկա է բավական պրագմատիկ և գաղափարապես չկաղապարված համագործակցություն⁵²: Երկու երկրներում էլ ներկայիս քաղաքական համակարգերը ձևավորվել են ամերիկամետ իշխանությունների դեմ իրականացված հեղափոխությունների արդյունքում, երկուսն էլ դեմ են միջազգային համակարգում ԱՄՆ-ի և Արևմուտքի գերակայությանը⁵³:

Իրանի իշխանությունների համար Պեկինի հետ համագործակցությունը՝ հատկապես տնտեսության ոլորտում, անհրաժեշտություն է, քանի որ առանց այդպիսի համագործակցության, դժվար կլինի ապահովել երկրի տնտեսական և սոցիալական կայունությունը: Իրանի առաջնորդները Չինաստանը դիտարկում են որպես միակ գերտերություն, որը կարող է մարտահրավեր նետել ԱՄՆ տնտեսական գերիշխանությունը՝ պաշտպանելով Թեհրանին ԱՄՆ տնտեսական և քաղաքական ճնշումներից: Այս տեսանկյունից ուշագրավ է երկու երկրների համագործակցությունը միջազգային առևտրում ԱՄՆ դոլարի ազդեցության կրճատման նպատակով՝ մասնավորապես յուանով կամ այլ արժույթներով փոխադարձ առևտրի խրախուսման միջոցով⁵⁴:

⁵¹ China-Iran Relations Strategic, Economic, and Diplomatic Aspects in Comparative Perspective, Kevjn Lim, Institute for National Security Studies, May 2021, https://www.inss.org.il/wp-content/uploads/2021/05/Memo213_e.pdf (այցելվել է 13.09.2021թ.):

⁵² A pragmatic partnership: Why China and Iran try to collaborate, Ellie Geranmayeh, 17 July 2020, https://ecfr.eu/article/commentary_a_pragmatic_partnership_why_china_and_iran_try_to_collaborate/ (այցելվել է 13.09.2021թ.):

⁵³ China and Iran Economic, Political, and Military Relations, by Scott W. Harold, Alireza Nader, RAND Corporation, 2012, https://www.rand.org/pubs/occasional_papers/OP351.html (այցելվել է 13.09.2021թ.):

⁵⁴ Iran Will Pursue Its New China Partnership With Caution, Stratfor, Apr 14, 2021, <https://worldview.stratfor.com/article/iran-will-pursue-its-new-china-partnership-caution> (այցելվել է 13.09.2021թ.):

Համագործակցությանը նպաստող հանգամանքներից մեկն էլ երկու երկրներում ուղղաձիգ կառավարման համակարգի առկայությունն է և համընդհանուր պայքարը արևմտյան լիբերալ կառավարման մոդելի և դրա տարածման դեմ: Մասնավորապես, Իրանը ձգտում է տեղայնացնել հասարակության նկատմամբ վերահսկողության չինական ժամանակակից գործիքակազմը, այդ թվում՝ նորագույն տեխնոլոգիաների միջոցով: Ընդհանուր առմամբ Չինաստանը Իրանին հնարավորություն է տալիս օգտվել նավթի սպառման անսպառ շուկայից, ռազմական և քաղաքացիական նշանակության տեխնոլոգիաներից, խոշոր ներդրումներից: Այն ի վերջո հզոր գերտերություն է, ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի մշտական անդամ, որը կարող է միջազգային ասպարեզում Իրանին քաղաքական աջակցություն ցուցաբերել⁵⁵:

Չինաստանն իր հերթին Իրանին դիտարկում է որպես տարածաշրջանում իր ազդեցության հետագա ընդլայնման կարևոր հենակետ, ձգտում է բացառել Իրանում ռեժիմի փոփոխությունը և հետագայում ԱՄՆ ազդեցության տիրույթում հայտնվելու հեռանկարը⁵⁶: Միաժամանակ, Պեկինում շատ լավ գիտակցում են, որ Իրանը տարածաշրջանային ամբիցիաներ ունեցող, խոշոր պետություն է, գտնվում է Մերձավոր Արևելքը, Կենտրոնական Ասիան և Հարավային Կովկասը միմյանց կապող խաչմերուկում՝ տարածաշրջան, որը առանցքային նշանակություն ունի Չինաստանի նախաձեռնած «Գոտի և ճանապարհ» ծրագրի համար: Իրանը ունի ներդրումային հսկայական ներուժ և Չինաստանը կարող է լավագույնս օգտվել դրանից և այն օգտագործել իր տարածաշրջանային ծրագրերը կյանքի կոչելու նպատակով⁵⁷: Իրանը նաև մահմեդական աշխարհի գլխավոր կենտրոններից մեկն է, ունի հսկայական ազդեցություն և շատ կարևոր է վերջինիս կառուցողական վերաբերմունքը Չինաստանի արևելքում մահմեդականների և ույղուրների խնդրի առնչությամբ:

Վերոհիշյալ փոխադարձ շահերի և վերջին տասնամյակների պատմական իրողությունների բերումով Թեհրանն ու Պեկինը ի վերջո հասան մի հանգրվանի, երբ հարկավոր էր հարաբերությունները բարձրացնել մի նոր՝ ռազմավարական մակարդակի: Դրա անհրաժեշտությունը նկատվեց դեռևս Իրանի և գերտերությունների միջև միջուկային պայմանագրի շուրջ բանակցությունների ընթացքում, և այն գործնական փուլ մտավ միջուկային պայմանագրի

⁵⁵ China And Iran Approach Massive \$400 Billion Deal, Ariel Cohen, Jul 17, 2020, <https://www.forbes.com/sites/arielcohen/2020/07/17/china-and-iran-approach-massive-400-billion-deal/?sh=1d2f6762a168> (այցելվել է 13.09.2021թ.):

⁵⁶ China and Iran Economic, Political, and Military Relations, by Scott W. Harold, Alireza Nader, RAND Corporation, 2012, https://www.rand.org/pubs/occasional_papers/OP351.html (այցելվել է 13.09.2021թ.):

⁵⁷ A pragmatic partnership: Why China and Iran try to collaborate, Ellie Geranmayeh, 17 July 2020, https://ecfr.eu/article/commentary_a_pragmatic_partnership_why_china_and_iran_try_to_collaborate/ (այցելվել է 13.09.2021թ.):

ստորագրումից հետո: Իրանի համար դա կարևոր էր առաջին հերթին Արևմուտքի և ԱՄՆ-ի հետ ակնկալվող հաշտեցման համատեքստում սեփական արտաքին քաղաքականությունը հավասարակշռելու տեսանկյունից: Չինաստանն իր հերթին ձգտում էր կանխել Իրանի՝ ամբողջությամբ Արևմուտքի «գրկում» հայտնվելու հեռանկարը և օգտվել վերջինիս նկատմամբ պատժամիջոցների չեղարկման արդյունքում ի հայտ եկող նոր հնարավորություններից:

2.2. Համապարփակ ռազմավարական գործընկերության մեկնարկը

Իրանի և Չինաստանի միջև հարաբերությունների նոր մակարդակի մասին ազդարարվեց 2016-ին՝ Իրանի հետ միջուկային համաձայնագրի ստորագրումից կարճ ժամանակ անց, երբ Չինաստանի նախագահ Սի Ծինփինը Իրան կատարած պատմական այցի շրջանակներում հանդիպեց Իրանի հոգևոր առաջնորդ Ալի Խամենեյի, նախագահ Ռոհանիի հետ: Այցը խորհրդանշական էր նաև այն առումով, որ տեղի էր ունենում ԻԻՀ և ՉԺՀ միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատումից 45 տարի անց: Հանդիպումների արդյունքում կողմերը հրապարակեցին ծավալուն հայտարարություն՝ երկու երկրների միջև պաշտոնական հարաբերությունները նոր մակարդակի բարձրացնելու մտադրության մասին⁵⁸:

Ուշագրավ է, որ Չինաստանի նախագահը Թեհրան կատարած այցից մի քանի օր առաջ այցելել էր Սաուդյան Արաբիա, որի հետ նույնպես ստորագրել էր «համապարփակ ռազմավարական համագործակցության» պայմանագիր⁵⁹: Այս փաստը ևս մեկ անգամ վկայում է այն մասին, որ Պեկինը փորձում է Իրանի հետ ռազմավարական համագործակցություն կառուցել բավական զգուշավորությամբ՝ հավասարակշռելով Սաուդյան Արաբիայի հետ ունեցած կարևոր հարաբերություններն ու տնտեսական շահերը: Ավելին, 2016-ի այդ շրջագայության շրջանակներում Սի Ծինփինը այցելել էր նաև Եգիպտոս, որի հետ Չինաստանը «համապարփակ ռազմավարական համագործակցության» պայմանագիր ստորագրել էր դեռևս 2011-ին:

Այսպես, Չինաստանի և Իրանի միջև 2016-ին ստորագրված «Համապարփակ ռազմավարական համագործակցության վերաբերյալ համատեղ

⁵⁸ A pragmatic partnership: Why China and Iran try to collaborate, Ellie Geranmayeh, 17 July 2020, https://ecfr.eu/article/commentary_a_pragmatic_partnership_why_china_and_iran_try_to_collaborate/ (այցելվել է 13.09.2021թ.):

⁵⁹ China-Iran Relations Strategic, Economic, and Diplomatic Aspects in Comparative Perspective, Kevjn Lim, Institute for National Security Studies, May 2021, https://www.inss.org.il/wp-content/uploads/2021/05/Memo213_e.pdf (այցելվել է 13.09.2021թ.):

հայտարարությունը» բաղկացած էր 20 հոդվածից⁶⁰: Այն բարձր մակարդակով անդրադառնում էր քաղաքական, մարդու իրավունքների, մշակույթի, անվտանգության, պաշտպանության, միջազգային և տարածաշրջանային գործընկերության ուղղությամբ երկկողմ համագործակցությանը: Փորձենք առանձնացնել այդ հայտարարության մեջ տեղ գտած ուշագրավ կետերը:

Նախ նշվում էր, որ արդի պայմաններում երկկողմ հարաբերությունները նոր մակարդակի բարձրացնելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ կողմերը համաձայն են հարաբերությունները կառուցել «համապարփակ ռազմավարական համագործակցության» հիման վրա: Նշվում էր, որ «Իրանի և Չինաստանի միջև երկկողմ հարաբերությունները ռազմավարական կարևորություն են ստացել և երկու կողմերը միմյանց վերաբերվում են որպես կարևոր ռազմավարական գործընկերներ ու հետևաբար երկկողմ հարաբերությունների ընդլայնումը համարում են արտաքին քաղաքական առաջնահերթություն»: Բացի այդ, կողմերը պայմանավորվում էին ստեղծել ամենամյա հանդիպումների մեխանիզմներ ինչպես արտգործնախարարների, այնպես էլ համապատասխան տարածաշրջանային փոխարտգործնախարարների մակարդակով:

Հայտարարության մեջ նշվում էր նաև, որ Իրանը շարունակում է հավատարիմ մնալ «Մեկ Չինաստանի» քաղաքականությանը, իսկ Պեկինը աջակցում է Իրանի զարգացման ծրագրին և Իրանի աճող տարածաշրջանային և միջազգային դերակատարությանը: Հայտարարության ամենուշագրավ դրվագը թերևս այն է, որ կողմերը համաձայնում են երկխոսություն և քննարկումներ սկսել 25-ամյա համապարփակ գործընկերության համաձայնագիր ստորագրելու վերաբերյալ, ինչպես նաև ողջունում են 2015թ. միջուկային համաձայնագիրը: Փաստորեն, 25-ամյա պայմանագրի բանակցությունները սկսել են հենց 2016-ին՝ Իրանի և գերտերությունների միջև միջուկային պայմանագրի ստորագրությունից կարճ ժամանակ անց:

Կողմերը նաև պայմանավորվել են երկկողմ քննարկումներ սկսել խոշոր տարածաշրջանային խնդիրների, այդ թվում՝ Սիրիայում և Եմենում տեղի ունեցող զարգացումների վերաբերյալ, աջակցություն են հայտնում Պաղեստինի ժողովրդին⁶¹: Ընդհանուր առմամբ, 2016-ի հայտարարության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այնտեղ կողմերը սահմանել էին երկկողմ հարաբերությունների զարգացման հիմնական ուղենիշները, որոնք առավել մանրամասն պետք է

⁶⁰ Full text of Joint Statement on Comprehensive Strategic Partnership between I.R. Iran, P.R. China, Sep 13, 2021, <https://www.president.ir/EN/91435/> (այցելվել է 13.09.2021թ.):

⁶¹ Full text of Joint Statement on Comprehensive Strategic Partnership between I.R. Iran, P.R. China, Sep 13, 2021, <https://www.president.ir/EN/91435/> (այցելվել է 13.09.2021թ.):

հստակեցվեին հետագայում ստորագրվելիք ավելի ծավալուն և համապարփակ փաստաթղթի շրջանակներում:

2016-ից հետո Իրանի շուրջ միջազգային իրադրությունը էական փոփոխությունների ենթարկվեց, ԱՄՆ նախագահի պաշտոնում Թրամփի ընտրվելուց հետո Վաշինգտոնը վերանայեց 2015-ի միջուկային պայմանագրով իր ստանձնած պարտավորությունները, Իրանի նկատմամբ ընդունվեց այսպես կոչված «առավելագույն ճնշման» մարտավարությունը: Այս իրադարձությունները, բնականաբար, իրենց ազդեցությունը ունեցան Իրան-Չինաստան բանակցությունների վրա, սակայն դրանք ոչ միայն կասկածի տակ չդրեցին երկու երկրների միջև նոր համաձայնագրի ստորագրման նպատակահարմարությունը, այլև լրացուցիչ խթան հանդիսացան առաջին հերթին Իրանի համար՝ արագորեն ավարտին հասցնելու Չինաստանի հետ բանակցությունները՝ փորձելով վերջինիս աջակցությամբ զսպել ԱՄՆ-ի ահագնացող ճնշումը: Չինաստանը, իր հերթին, հնարավորություն ստացավ բանակցություններում հանդես գալ ավելի ամուր դիրքերից՝ հաշվի առնելով Իրանի համար այլընտրանքի բացակայությունը, ուստի պատահական չէ, որ մի շարք փորձագետներ գտնում են, որ ի վերջո 2021-ի մարտին Պեկինի և Թեհրանի միջև ստորագրված համաձայնագիրը ամբողջությամբ հաշվի չի առնում Իրանի շահերը: Դա հասկանալու համար առաջին հերթին հարկավոր է ուսումնասիրել այդ համաձայնագրի հետ կապված տեղեկատվության առանձնահատկությունները՝ տարանջատելով դրա վերաբերյալ միջերևույթի ու իրականությունը:

2.3. Իրան-ՉԺՀ «25-ամյա պայմանագիրը» միջերևույթի և իրականություն

Ինչպես նշվեց, Իրանի և Չինաստանի միջև 25-ամյա շրջանակային համաձայնագրի շուրջ բանակցությունների մասին ազդարարվել էր դեռևս 2016-ին, սակայն այս թեման հատկապես հանրային լայն շրջանակների ուշադրության և քննարկումների առարկա դարձավ 2020-ին, երբ միջազգային մամուլը սկսեց ակտիվորեն տարածել երկկողմ համաձայնագրի այսպես կոչված «նախնական տարբերակը»: 2020-ի հունիսին իրանական սոցիալական ցանցերում սկսեց շրջանառվել պարսկալեզու 18 էջանոց մի փաստաթղթի պատճեն, որը վերնագրված էր որպես «Իրան-Չինաստան ռազմավարական գործընկերության պայմանագրի վերջնական նախագիծ»⁶²: Հատկանշական է հրապարակման ժամանակահատվածը, քանի որ այն համընկնում է ԱՄՆ-ում չինական հյուպատոսությունների փակման, ԱՄՆ-ՉԺՀ, ԱՄՆ-Իրան հարաբերությունների

⁶² Իրան-Չինաստան համաձայնագրի շրջանառվող փաստաթղթի սկանավորված պարսկալեզու տարբերակը, https://static1.squarespace.com/static/54db7b69e4b00a5e4b11038c/t/5f0a3b017adc097c9945645c/1594506439567/China_Iran_Document.pdf (այցելվել է 13.09.2021թ.):

վատթարացման ժամանակահատվածի հետ⁶³: Փաստաթուղթը, որի արտահոսքը հավանաբար եղել է Իրանի ԱԳՆ-ից, անմիջապես տարածվեց արևմտյան հեղինակավոր ՋԼՄ-ների և փորձագիտական շրջանակների կողմից և լայն շրջանառության մեջ դրվեց:

Ուշագրավ է, որ փաստաթղթի արտահոսքից հետո Չինաստանի պաշտոնյաները և հեղինակավոր ՋԼՄ-ները դրա վերաբերյալ բավական զուսպ գնահատականներ էին հնչեցնում⁶⁴, մինչդեռ իրանական կողմի մեկնաբանությունները ավելի հնչեղ էին: Փաստաթղթի վերաբերյալ կոշտ քննադատությամբ հանդես եկան Իրանի ընդդիմության ներկայացուցիչներն ու արևմտյան շրջանակները: Օրինակ, ԱՄՆ պետդեպարտամենտի թվիթերի պարսկալեզու էջը նախատեսվող համաձայնագիրը որակել է որպես «երկրորդ Թուրքմենչայ»⁶⁵ նկատի ունենալով Ռուսաստանի և Պարսկաստանի միջև 1828թ. Թուրքմենչայի պայմանագիրով պարսկական կողմի կորուստները և ակնարկելով, որ շրջանավոր փաստաթուղթը բխում է միայն ՉԺՀ շահերից: Փաստաթղթի քննադատները հենց դրանով են բացատրում դրա վերաբերյալ բանակցությունների ոչ հրապարակային բնույթը:

Փաստաթղթի հրապարակման ժամանակահատվածը և Իրանի շուրջ առկա միջազգային լարվածությունը իրանական ընդդիմության շրջանակներում մտահոգություն առաջացրեց առ այն, որ Թեհրանը բանակցային գործընթացում հանդես է եկել թույլ դիրքերից՝ ապահովելով Չինաստանի հասանելիությունը սեփական բնական ռեսուրսների նկատմամբ, փոխարենը Պեկինից ստանալով անհամարժեք խոստումներ: Օրինակ, Իրանի նախկին նախագահ Ահմադինեժադը քննադատում էր իշխանություններին բանակցությունների գաղտնիության կապակցությամբ, իսկ Իրանի վտարանդի թագաժառանգ Ռեզա Փեհլևին այն որակեց որպես ամոթալի՝ նշելով, թե դրանով թալանվում են Իրանի բնական պաշարներն ու երկրում օտարերկրյա զինվորականներ են տեղակայվում⁶⁶:

Չնայած դրան, Իրանի նախագահի աշխատակազմի ղեկավար Մահմուդ Վաեզին հերքել է նման մեղադրանքները՝ նշելով, որ պայմանագիրը չի

⁶³ China and Iran: Reaching for a new trade and military partnership, Shirin Naseer, The Central European Institute of Asian Studies (CEIAS), 5. October 2020, <https://ceias.eu/china-and-iran-reaching-for-a-new-trade-and-military-partnership/> (այցելվել է 13.09.2021թ.):

⁶⁴ State Councilor and Foreign Minister Wang Yi Met with Iranian Foreign Minister Mohammad Javad Zarif via Video Link, 2020/06/24, https://www.fmprc.gov.cn/mfa_eng/zxxx_662805/t1792343.shtml (այցելվել է 13.09.2021թ.):

⁶⁵ ԱՄՆ Պետդեպարտամենտի թվիթերի պարսկալեզու էջ, <https://twitter.com/USABehFarsi/status/1280289369505619968> (այցելվել է 13.09.2021թ.):

⁶⁶ The 25-Year Agreement between China and Iran: A Continuation of Previous Policy, by Sheng Zhang, Aug 3, 2020, <https://www.washingtoninstitute.org/policy-analysis/25-year-agreement-between-china-and-iran-continuation-previous-policy> (այցելվել է 13.09.2021թ.):

նախատեսում որևէ իրանական տարածքի (կղզու) նկատմամբ օտարերկրյա վերահսկողություն, ինչպես նաև չինական զորքերի տեղակայում Իրանի տարածքում⁶⁷: Չինաստանի ԱԳՆ խոսնակը իր հերթին, մեկնաբանելով պայմանագրի վերաբերյալ հարցադրումները, նշել է, որ այն չի ներառում որևէ քանակական, առանձին պայմանագրեր և նպատակներ, ինչպես նաև չի թիրախավորում որևէ երրորդ կողմի, այլ հստակեցնում է Չինաստան-Իրան հետագա համագործակցության ընդհանուր շրջանակը⁶⁸:

Թեև հրապարակված փաստաթղթում որևէ թվային տվյալ կամ թիրախ նշված չէր, սակայն ՋԼՄ-ների մեծամասնությունը իրենց մեկնաբանություններում նշում էին, թե համաձայնագրով նախատեսվում է, որ Չինաստանը պետք է առաջիկա 25 տարիներին Իրանում 400 մլրդ դոլարի ներդրում կատարի: Ըստ դրա՝ Չինաստանը պատրաստվում է 280 միլիարդ դոլարի ներդրում կատարել Իրանի նավթի, գազի, նավթաքիմիական արտադրության ոլորտներում, ևս 120 մլրդ դոլարի ներդրում էլ Իրանի տրանսպորտի և արդյունաբերական ենթակառուցվածքների ոլորտում: Ուշագրավ է, որ այս թիվն առաջին անգամ հրապարակվել էր դեռևս 2019-ի աշնանը՝ կասկածելի ծագմամբ մի հոդվածում⁶⁹, և միջազգային ՋԼՄ-ները, մասնավորապես «Նյու Յորք Թայմսը», հավանաբար հղում էին տալիս հենց այդ հոդվածին⁷⁰: Ինչևէ, չնայած նախատեսվող չինական ներդրումների հստակ թվի վերաբերյալ կասկածներին⁷¹ և պաշտոնական հաստատման բացակայությանը՝ երկկողմ համաձայնագրի տարածված նախագիծը բավական բովանդակալից է և արժանի է հանգամանալից ուսումնասիրության:

Հետազոտությունների Ամերիկյան «Վիլսոն» կենտրոնը 2020-ի սեպտեմբերին հրապարակել է մի վերլուծություն՝ «Վերջինը հավասարների շարքում. Չինաստան-Իրան գործընկերությունը տարածաշրջանային համատեքստում⁷²» վերնագրով,

⁶⁷ Explainer: Why Are Iranians Angry Over A Long-Term Deal With China?, By Golnaz Esfandiari, July 13, 2020, <https://www.rferl.org/a/explainer-iranian-china-deal-anger-among-iranians/30724344.html> (այցելվել է 13.09.2021թ.):

⁶⁸ Foreign Ministry Spokesperson Zhao Lijian's Regular Press Conference on March 29, 2021, https://www.fmprc.gov.cn/mfa_eng/xwfw_665399/s2510_665401/t1865136.shtml (այցելվել է 13.09.2021թ.):

⁶⁹ China and Iran flesh out strategic partnership, Petroleum Economist, 3 September 2019, <https://pemedianetwork.com/petroleum-economist/articles/geopolitics/2019/china-and-iran-flesh-out-strategic-partnership> (այցելվել է 13.09.2021թ.):

⁷⁰ Iran Will Pursue Its New China Partnership With Caution, Stratfor, Apr 14, 2021, <https://worldview.stratfor.com/article/iran-will-pursue-its-new-china-partnership-caution> (այցելվել է 13.09.2021թ.):

⁷¹ No, China Isn't Giving Iran \$400 Billion, Sep 2020, <https://www.bourseandbazaar.com/articles/2019/9/20/no-china-isnt-giving-iran-400-billion> (այցելվել է 13.09.2021թ.):

⁷² Last Among Equals: The China-Iran Partnership in a Regional Context, By Lucille Greer and Esfandiyar Batmanghelidj, The Wilson Center, September, 2020.

որը ուշագրավ է այն տեսանկյունից, որ ամբողջությամբ ներկայացնում է մամուլում տարածված 18 էջանոց փաստաթղթի և դրա հավելվածների անգլերեն թարգմանությունը: Վերլուծության սույն հատվածում անդրադառնանք այդ փաստաթղթի կարևոր կետերին:

Փաստաթղթում նախ նշվում է, որ կողմերը իրենց հարաբերությունները բարձրացրել են նոր ռազմավարական մակարդակի և միմյանց համարում են կարևոր ռազմավարական գործընկերներ: Պայմանագրում նախանշվում են երկկողմ հարաբերությունների զարգացման կարևոր ուղենիշները, որոնց շարքում նշվում են տնտեսական և առևտրային կապերի ընդլայնումը, մասնավոր և պետական հատվածների կառույցների արդյունավետ գործակցությունը, ազատ և հատուկ տնտեսական գոտիների զարգացումը: Քաղաքական համագործակցության տեսանկյունից ուշագրավ է փաստաթղթում կողմերի ստանձնած հանձնառությունը՝ համակարգել և աջակցել միմյանց դիրքորոշմանը տարբեր միջազգային կառույցներում և տարածաշրջանային կազմակերպություններում:

Կարևորվում է երկկողմ համագործակցությունը էներգետիկայի, ներառյալ՝ նավթի, վերականգնվող էներգիայի, արդյունաբերական նշանակության միջուկային էներգիայի ոլորտներում, ենթակառուցվածքների զարգացման ուղղությամբ, այդ թվում՝ երկաթուղիների, մայրուղիների և ծովային ճանապարհների զարգացման հարցերում՝ նպատակ ունենալով մեծացնել Իրանի դերակատարությունը «Գոտի և ճանապարհ» ծրագրում: Առանձնացվում է նաև փոխգործակցությունը բանկային ոլորտում, այդ թվում՝ ընդգծելով ազգային արժույթների օգտագործման կարևորությունը:

Փաստաթղթում նշվում է, որ դրա բովանդակությունից բխող ծրագրերի իրականացման նկատմամբ վերահսկողության և համակարգման նպատակով կողմերը ձևավորելու են հատուկ մեխանիզմ, որը պետք է համաձայնեցվի երկու երկրների ղեկավարների կողմից լիազորված բարձրաստիճան պաշտոնյաների կողմից: Բարձրաստիճան ղեկավարները պետք է տարեկան հանդիպումներ անցկացնեն: Միաժամանակ նշվում է, որ երկու կողմերը պետք է երաշխավորեն փաստաթղթի հոդվածների իրականացումը՝ հակառակ երրորդ կողմերի անօրինական ճնշումների:

Ուշագրավ է, որ փաստաթղթի հիմնական մասում նաև նշվում է, որ «հաշվի առնելով ընդհանուր շահերը՝ **«Գոտի և ճանապարհ» նախաձեռնության շրջանակներում կողմերը կխրախուսեն երկկողմ հարաբերությունները և**

բազմակողմ կապերը՝ հարևան կամ երրորդ երկրներում համատեղ ծրագրեր իրականացնելու միջոցով»։ Սա նշանակում է, որ փաստաթուղթը զուտ երկկողմ բնույթ չի կրում, այն հետապնդում է ավելի լայն՝ տարածաշրջանային նպատակներ և ընդհանուր առմամբ միտված է «Գոտի և ճանապարհ» նախաձեռնության շրջանակներում Չինաստանի և Իրանի տարածաշրջանային շահերի առաջխաղացմանը։ Նաև սա է պատճառը, որ փաստաթուղթը մեծ ուշադրության է արժանացել ոչ միայ Իրանում և Չինաստանում, այլև տարածաշրջանի տարբեր երկրներում։

Ոչ պակաս կարևորություն են ներկայացնում փաստաթղթի հավելվածները, որոնք երկու կողմերի ծրագրերի մասին ավելի մանրամասն տվյալներ են պարունակում։ Այսպես, առաջին հավելվածում ներկայացվում են փաստաթղթի հիմնարար նպատակները, որոնցից հատկապես ուշադրության արժանի են հետևյալ նպատակադրումները.

- «Կողմերը ջանքեր կգործադրեն, որպեսզի Չինաստանը դառնա իրանական նավթի կայուն ներմուծող։ Չինաստանը ակնկալում է, որ Իրանը հաշվի կառնի չինական կողմի մտահոգությունները՝ կապված իրանական նավթային ոլորտում ներդրումների վերադարձի հետ։ Փոխարենը, չինական կողմը մտադիր է օպտիմալացնել Իրանի հետ նավթային գործարքներից առաջացած ֆինանսական շահույթը»։

- «Գոտի և ճանապարհ» նախաձեռնության շրջանակներում Իրանի դիրքի խթանում՝ բազմակողմանի տրանսպորտային համակարգի զարգացման միջոցով, որը ներառում է երկաթուղիները, ճանապարհներն ու մայրուղիները, ծովային ուղիներն ու ավիացիան՝ հիմնված ազգային և տարածաշրջանային պահանջների վրա»։

- «Համագործակցություն ծովային և նավահանգստային ենթակառուցվածքների շուրջ, այդ թվում՝ ծովային օբյեկտների, նավերի, նավահանգիստների, սարքավորումների և հարակից կայանքների կառուցման միջոցով»։

- Հիմնարար նպատակների շարքում ուշագրավ են նաև նպատակադրումները՝ կապված Իրանում էներգետիկ նախագծերի իրագործման, մերձքաղաքային նոր ավանների կառուցման, ընտրված նավահանգիստներում և կղզիներում արդյունաբերական, ծառայությունների և տեխնոլոգիական կենտրոնների կառուցման, ռազմական, պաշտպանական և անվտանգային ոլորտներում հետազոտությունների, պաշտպանական արդյունաբերության և ռազմավարական ոլորտներում համագործակցության ծրագրերի հետ։

Փաստորեն, այստեղ նկարագրվում են այն ուղղությունները, որոնցով երկու երկրները առաջնահերթ ձգտելու են զարգացնել փոխգործակցությունը՝ էներգետիկա, ենթակառուցվածքներ, ռազմարդյունաբերություն և ռազմավարական համագործակցություն: Ուշագրավ է, որ կողմերը հիմնական նպատակադրումների շարքում շեշտադրում են մի կողմից՝ Իրանից Չինաստան նավթի անխափան ներմուծման, մյուս կողմից՝ օպտիմալ գնային քաղաքականության կարևորությունը, ինչը հուշում է, որ Թեհրանը շարունակելու է Պեկինին դիտարկել որպես տնտեսական կայունության փրկօղակ, իսկ վերջինս կարևորում է Իրանի դերակատարությունը իր էներգետիկ անվտանգության ապահովման գործում:

Փաստաթղթի 2-րդ հավելվածում նկարագրվում են 25-ամյա համաձայնագրի շրջանակներում համագործակցության հիմնական ոլորտները, որոնք են.

1. Նավթ և էներգետիկայի ոլորտը:

2. Իրանի ակտիվ ներգրավումը Չինաստանի «Գուտի և ճանապարհ» նախաձեռնությանը: Այս տեսանկյունից ուշագրավ է մի շարք նախագծերի հիշատակումը, այդ թվում՝ կողմերի ներգրավումը Հյուսիս-Հարավ (Չաբահար նավահանգիստ-Կենտրոնական Ասիա) և Հարավ-Արևմուտք (Չաբահար և Բանդար Աբաս նավահանգիստներ-Թուրքիա և Ադրբեջան) միջանցքներին: Նշվում է նաև Պակիստան-Իրան-Իրաք-Սիրիա երկաթգծի և դրա հետ կապված ենթածրագրերի, Չինաստան-Պակիստան տնտեսական միջանցքով բնական գազի մատակարարման և այլ ծրագրերի մասին:

3. Մաքրանի ծովափի (Իրանի Բելուջիստան շրջանի և Պակիստանի հարավային Սինդ նահանգի առափնյա հատվածը) զարգացում: Մասնավորապես նշվում է Ջասկ նավահանգստի զարգացման շուրջ համագործակցության մասին:

4. Համագործակցությունը հեռահաղորդակցության տեխնոլոգիաների ոլորտում՝ 5-րդ սերնդի հեռահաղորդակցության ցանցերի զարգացում:

5. Ֆինանսական, տնտեսական և առևտրային համագործակցության հիմքեր:

6. Երկկողմ ռազմական, պաշտպանական և անվտանգային համագործակցություն:

7. Քաղաքական համագործակցություն:

Առավել ուշագրավ է փաստաթղթի 3-րդ հավելվածը, որտեղ նկարագրվում են երկու կողմերի նախատեսվող կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ

գործնական քայլերը: Կարճաժամկետ քայլերից կարելի է առանձնացնել հետևյալ նպատակադրումները.

- Նավթ և էներգետիկա: Նավթի կայուն արտահանում դեպի Չինաստան, Իրանի և չինական խոշոր կազմակերպությունների միջև պայմանագրերի ստորագրում՝ նավթի մատակարարման ծրագրերի վերաբերյալ, նավթի պահեստների շինարարություն Իրանում, Չինաստանում և այլ երկրներում, էներգակիրների՝ նավթ, գազ, էլեկտրաէներգիա, տեղափոխման ցանցերի շինարարություն և կարողությունների զարգացում:

- Համագործակցություն ֆինանսների, բանկային և ապահովագրական ոլորտներում: Չինաստանի հատուկ տնտեսական գոտիներում իրանական բանկերի մասնաճյուղերի հիմնում, չին-իրանական բանկի հիմնում, այդ թվում՝ Չինաստանում մասնաճյուղերի առկայությամբ:

- Տրանսպորտ և ենթակառուցվածքներ: Չինական ներդրումների ներգրավում կարևոր իրանական երկաթուղիների էլեկտրաֆիկացման նախագծերում՝ Սպահան-Շիրազ, Թեհրան-Մաշհադ, Թեհրան-Թավրիզ, ինչպես նաև համագործակցության մայրուղիների շինարարության հարցում՝ **Թեհրան-հյուսիս նախագիծ (մայրաքաղաք Թեհրանը պետք է կապի հյուսիսային շրջանների հետ)**, համատեղ ներդրումներ խելացի քաղաքներում և բիոմներում, Իրանի բնակարանաշինական ոլորտում ներդրումների խրախուսում և դրանց վերահսկողության ու ցածր եկամուտներ ունեցող հատվածի համար հասանելիության հարցերում Չինաստանի հետ փորձի փոխանակում:

- Գիտություն, մշակույթ, տուրիզմ և շրջակա միջավայր: Այս ոլորտում նախատեսվող կարճաժամկետ քայլերից ուշագրավ է երկու երկրների միջև «Խոշոր բուհերի դեկանների ասոցիացիայի» ձևավորման նպատակադրումը:

- Ազատ և հատուկ տնտեսական գոտիներ: Չինական ներդրումների խրախուսում Իրանի ազատ և հատուկ տնտեսական գոտիներում, մասնավորապես՝ Քեշմ, Արվանդ և Մակու գոտիներում, այս հարցում համագործակցության խթանում Ասիայի ենթակառուցվածքների ներդրումային բանկի և «Մետաքսի ճանապարհ» հիմնադրամի հետ, **Երրորդ երկրում ազատ տնտեսական գոտու հիմնում:**

- Արդյունաբերություն, հանքարդյունաբերություն և առևտուր: **Երրորդ երկրներում արդյունաբերական և սպասարկման համատեղ նախագծերի նախաձեռնում՝ տարածաշրջանի երկրների, ներառյալ՝ Իրաքը, Աֆղանստանը և Սիրիան, վերակառուցման նպատակներով, մետրոյի վագոնների համատեղ արտադրության զարգացում:**

- Գյուղատնտեսություն և առողջապահություն:

- Ռազմական, պաշտպանական և անվտանգային համագործակցություն: Համատեղ ծովային, ցամաքային և օդային զորավարությունների իրականացում, պաշտպանական տեխնոլոգիաների և արդյունաբերության ոլորտներում համագործակցության ընդլայնում՝ կենտրոնանալով ներդրումների, նախագծման, զարգացման, համատեղ արտադրության և սարքավորումների ապահովման ծրագրերի իրականացման վրա:

- Քաղաքական համագործակցություն երկկողմ, տարածաշրջանային և միջազգային մակարդակներում: Այս համատեքստում կարևորվում է «ժամանակացույցի» մեխանիզմի մշակման բանակցությունների մեկնարկը, բարձրաստիճան պատվիրակությունների, այդ թվում՝ արտգործնախարարների գազաթնաժողովների կազմակերպումը, փոխարտգործնախարարների կամ նախարարի օգնականների միջև քաղաքական խորհրդակցությունները, **Չինաստանի աջակցությունը Իրանի անդամակցությանը Շանհայի համագործակցության կազմակերպությանը** և այլն:

Միջնաժամկետ և երկարաժամկետ գործնական քայլերի շարքում կարելի է առանձնացնել հետևյալ նպատակադրումները՝

- Հյուսիս-Հարավ միջանցքով Չաբահար նավահանգստից Կասպյան նավահանգիստներ ապրանքների տարանցման և փոխադրման հետ կապված գործունեության աջակցություն (Չինաստան, Ղազախստան, Թուրքմենստան, Իրան),
- Չինական կողմից ներդրումների դյուրացում նավթավերամշակման ծրագրերում, Ջասքի նավահանգստի կառուցում, Ջասքի տարածքից նավթամթերքների արտահանում,
- Չաբահար նավթաքիմիական քաղաքի ծրագրերում չինական ներդրումների ներգրավում,
- առանձին կղզիների զարգացում՝ սննդամթերքի, ծովային արդյունաբերության, նավթաքիմիական արտադրանքի և զբոսաշրջության տարածաշրջանային կենտրոններ ձևավորելու նպատակով,
- գործընկերություն Մաքրանի շրջանում խոշոր արդյունաբերական կենտրոնների կառուցման գործում,

- ներդրումներ իրանական 10 մեգապոլիսների մետրոյի համակարգերում, ինչպես նաև մեծ քաղաքները նորակառույց ավանների հետ կապող երկաթուղային գծերի կառուցման ծրագրերում,

- **երկու երկրներում տարածաշրջանային աշխարհատնտեսական ներուժի օպտիմալացում՝ երրորդ (հարևան) երկրներում՝ համաձայն համատեղ ծրագրեր սկսելու նպատակին**⁷³:

Ինչպես նկատում ենք, Իրանի և Չինաստանի միջև 25-ամյա համաձայնագրի նախագիծը և դրա հավելվածները ընդգրկում են բազմոլորտ համագործակցության լայն շրջանակ, ու թեև, իրոք, փաստաթղթի հրապարակված և ոչ պաշտոնական տարբերակում կոնկրետ թվային ցուցանիշներ նշված չեն, սակայն բոլոր վերոհիշյալ ծրագրերի ու նպատակների իրագործման համար իրապես անհրաժեշտ կլինեն հսկայածավալ ներդրումներ: Մինևույն ժամանակ, փաստաթղթի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն չի սահմանափակվում զուտ երկկողմ ծրագրերով և նպատակներով, այլ ավելի լայն՝ տարածաշրջանային ծրագրերի հիմքեր ստեղծելու նպատակ է հետապնդում. փաստաթղթում ուղղակի կամ անուղղակի անդրադարձ է կատարվում Իրանի հարևան երկրներում համատեղ ծրագրերի իրականացման նպատակներին:

Ըստ փաստաթղթի՝ Չինաստանը հասանելիություն է ստանալու Հորմուզի նեղուցի շրջանում գտնվող Ջասք նավահանգստի նկատմամբ, որը կարևոր է տարածաշրջանում նավթի փոխադրումների վերահսկման տեսանկյունից: Այս, նաև այն հանգամանքը, որ Չինաստանը առաջիկա 25 տարիների ընթացքում Իրանից նպաստավոր պայմաններով էներգակիրների ներկրման հնարավորություն է ստանալու, մի կողմից վկայում են Չինաստանի էներգետիկ անվտանգության տեսանկյունից պայմանագրի կարևորության մասին, մյուս կողմից, եթե փաստաթուղթը ամբողջությամբ կիրառվի, ապա Իրանը կամրապնդի իր առանձնահատուկ դիրքերը Չինաստանի «Գոտի և ճանապարհ» նախաձեռնության շրջանակներում: Փաստաթղթի կիրառումը ընդհանուր առմամբ կնպաստի Մերձավոր Արևելքում Չինաստանի ազդեցության աճին, նաև կարևոր օրինակ կդառնա տարածաշրջանի այլ, հատկապես ավտորիտար կառավարման

⁷³ Last Among Equals: The China-Iran Partnership in a Regional Context, By Lucille Greer and Esfandyar Batmanghelidj, The Wilson Center, September 2020, https://www.wilsoncenter.org/sites/default/files/media/uploads/documents/MEP_200831_OCC%2038%20v3%20%281%29.pdf (այցելվել է 13.09.2021թ.):

համակարգ ունեցող երկրների հետ հետագա համագործակցության համար, որոնք ձգտում են թոթափել ժողովրդավարության հարցերով ԱՄՆ ճնշումները⁷⁴:

Սակայն հարկ է նշել, որ փաստաթղթում ավելի կոնկրետ և հստակ թվերի ու ծրագրերի բացակայությունը՝ հատկապես ռազմական համագործակցության ոլորտի վերաբերյալ, թույլ չի տալիս այն որակել որպես դաշինքի փաստաթուղթ: Հատկանշական է, որ փաստաթղթի շուրջ բանակցությունները սկսվել են մի իրավիճակում, երբ ակնկալվում էր Իրանի դեմ արևմտյան պատժամիջոցների չեղարկում, ոչ պաշտոնական փաստաթուղթը հրապարակվել է մի իրավիճակում, երբ ԱՄՆ-ը ողջ ուժով կիրառման մեջ էր դրել Իրանի դեմ այսպես կոչված «առավելագույն ճնշման» քաղաքականությունը, իսկ փաստաթուղթը երկու երկրների ԱԳ նախարարների կողմից ստորագրվել է մի իրավիճակում, երբ Վիեննայում մեկնարկում էին Իրանի և ԱՄՆ-ի միջև պատժամիջոցների չեղարկման բանակցությունները: Սա նշանակում է, որ փաստաթղթի, դրա բովանդակության և նպատակների վերաբերյալ մեկնաբանություններն ու գնահատականները հաճախ կախված են տվյալ պահի քաղաքական և աշխարհաքաղաքական համատեքստից:

Այնուամենայնիվ, տարածված ոչ պաշտոնական փաստաթուղթը, նույնիսկ եթե մասամբ է համընկնում իրական փաստաթղթի բովանդակության հետ, վկայում է այն մասին, որ Իրանը աշխարհաքաղաքական տեսանկյունից վերջնականապես կողմնորոշվել է դեպի Չինաստան՝ իր հիմնական, ռազմավարական ծրագրերն ու նպատակները կապելով հենց Չինաստանի հետ⁷⁵: Սա ամենևին չի նշանակում, որ Իրանը չի ձգտելու կարգավորել հարաբերությունները Արևմուտքի և ԱՄՆ-ի հետ, սակայն Թեհրանը կփորձի դա անել զուգահեռ և ոչ ի հակակշիռ Չինաստանի հետ համագործակցության խորացմանը: Իրանի այսպիսի ընտրությունը շատ տրամաբանական է, եթե նկատի ունենանք մի շարք հարցերում Իրանի օբյեկտիվ կախվածությունը Չինաստանից:

Իրանի և Չինաստանի արտգործնախարարների միջև ռազմավարական համագործակցության 25-ամյա համաձայնագիրը ստորագրվեց Թեհրանում 2021-ի մարտի 27-ին, ՉԺՀ արտգործնախարար Վան Յիի մերձավորարևելյան 6 երկրներում շրջագայության շրջանակներում⁷⁶: Պայմանագրի վերաբերյալ

⁷⁴ Are China and Iran Forging a New Geopolitical Axis in Eurasia? By Emil Avdaliani -March 1, 2021, <https://chinaobservers.eu/are-china-and-iran-forging-a-new-geopolitical-axis-in-eurasia/> (այցելվել է 13.09.2021թ.):

⁷⁵ China, Iran sign agreement to map out comprehensive cooperation, Source: Xinhua| 2021-03-28, http://www.xinhuanet.com/english/2021-03/28/c_139841044.htm (այցելվել է 13.09.2021թ.):

⁷⁶ Iran and China sign 25-year cooperation agreement, by Reuters Staff, MARCH 27, 2021, <https://www.reuters.com/article/us-iran-china-idUSKBN2BJOAD> (այցելվել է 13.09.2021թ.): China's Foreign Minister Heads to the Middle East, By Shannon Tiezzi, March 25, 2021, <https://thediplomat.com/2021/03/chinas-foreign-minister-heads-to-the-middle-east/>(այցելվել է 13.09.2021թ.):

մեկնաբանությունները տարբեր են, ոմանք այն նույնիսկ նկարագրում են որպես «Առյուծի և Վիշապի դաշինք»⁷⁷: Իրանի արտգործնախարարության խոսնակը այն նկարագրել է որպես «խոր, բազմաշերտ և լիարժեք» պայմանագիր, որը շատ արդյունավետ է լինելու Չինաստանի հետ հարաբերությունների խորացման տեսանկյունից⁷⁸: Այն, որ պայմանագիրը ստորագրվել է ոչ թե ՉԺՀ նախագահի, այլ արտգործնախարարի այցի շրջանակներում, այնուամենայնիվ խոսում է այն մասին, որ Չինաստանը կա՛մ ձգտում է պայմանագրի շուրջ չափից ավելի մեծ աղմուկ չբարձրացնել, կա՛մ իրոք դրան այնպիսի մեծ կարևորություն չի տալիս, ինչպես հաճախ նկարագրվում է միջազգային մամուլում⁷⁹:

Ինչևէ, սա առաջին դեպքն է, որ Իրանը այսպիսի ծավալուն պայմանագիր է ստորագրում կոնկրետ գերտերության հետ. թեև դեռ 2001-ին Թեհրանը համագործակցության պայմանագիր էր կնքել նաև ՌԴ հետ, սակայն այն ընդգրկում էր հարցերի ավելի նեղ շրջանակ և հիմնականում թիրախավորում էր համագործակցությունը միջուկային ոլորտում⁸⁰: Իրանի և Չինաստանի միջև 2021-ի մարտին ստորագրված պայմանագիրը դեռևս պաշտոնապես չի հրապարակվել, սակայն ենթադրվում է, որ այն էապես չի տարբերվի 2020-ին հրապարակված նախագծից⁸¹: Հիմք ընդունելով արդեն հրապարակված և շրջանառվող ոչ պաշտոնական փաստաթուղթը՝ հարկավոր է հասկանալ, թե որքանով են իրատեսական այդ փաստաթղթում տեղ գտած տնտեսական և էներգետիկ ոլորտների ծրագրերն ու նպատակները, ինչպես նաև դիտարկել երկու երկրների միջև այդ ոլորտներում համագործակցության հեռանկարները:

2.4. Երկու երկրների միջև համագործակցության առանձնահատկությունները տնտեսական և էներգետիկ ոլորտներում

Ինչպես արդեն նշվեց, Չինաստանի և Իրանի միջև ստորագրված և դեռևս ոչ պաշտոնապես շրջանառվող փաստաթղթի էական հատվածը նվիրված է երկու երկրների միջև համագործակցությանը տնտեսական և էներգետիկ ոլորտներում:

⁷⁷ An Iran-China 25-Year Agreement: Wishful Thinking Or A 'Lion-Dragon Pact'?, June 29, 2020, <https://en.radiofarda.com/a/iran-china-25-year-agreement-reality-or-fiction/30696729.html> (այցելվել է 13.09.2021թ.):

⁷⁸ Iran, China sign 'strategic' deal in Tehran, Date 27.03.2021, <https://www.dw.com/en/iran-china-sign-strategic-deal-in-tehran/a-57025741> (այցելվել է 13.09.2021թ.):

⁷⁹ There's Less to the China-Iran Deal Than Meets the Eye, By Bobby Ghosh, Bloomberg March 29, 2021, <https://www.bloomberg.com/opinion/articles/2021-03-29/china-iran-deal-there-s-less-to-it-than-meets-the-eye> (այցելվել է 13.09.2021թ.):

⁸⁰ Iran, China sign huge 25-year strategic deal; could reduce US regional influence, 27 March 2021, <https://www.timesofisrael.com/iran-china-sign-major-25-year-strategic-cooperation-agreement/> (այցելվել է 13.09.2021թ.):

⁸¹ The New China Challenge: A Game-Changing Strategic Agreement with Iran, by Mohammed Ayoob, April 3, 2021, <https://nationalinterest.org/feature/new-china-challenge-game-changing-strategic-agreement-iran-181730> (այցելվել է 13.09.2021թ.):

Մասնավորապես, միջազգային մամուլում շրջանառվող տեղեկությունը Չինաստանի կողմից Իրանում 400 մլրդ դոլարի ներդրումների կապակցությամբ քննարկումների և մեկնաբանությունների մեծ դաշտ է բացել:

Փորձագետներից ոմանք 400 մլրդ դոլարի ներդրումը համարում են անիրատեսական և գտնում են, որ այդպիսի հսկայական ցուցանիշի թիրախավորումը, որը ենթադրում է տարեկան միջին հաշվով 16 մլրդ ԱՄՆ դոլարի ներդրում, չի արտացոլում երկկողմ տնտեսական հարաբերությունների իրական ներուժը⁸²: Որպես այդ տեսակետի հիմնավորում, օրինակ, նշվում է, որ Չինաստանը ընդհանուր առմամբ «Գոտի և ճանապարհ» նախագծի շրջանակներում 5-ամյա ներդրումների թիրախ է սահմանել 600-800 մլրդ դոլար⁸³, հետևաբար քիչ հավանական է, որ այդ հսկայական ծրագրի անդամ միայն մեկ երկրում՝ Իրանում, այդպիսի հսկայաճավալ ներդրումներ կկարողանա կատարել⁸⁴:

Միաժամանակ հարկ է նշել, որ եթե 400 մլրդի մասին տեղեկատվությունը համապատասխանում է իրականությանը, ապա այն նախատեսված է բավական երկարաժամկետ հեռանկարի համար. պայմանագիրը ունի 25-ամյա ժամկետ, այն նախատեսում է մի շարք ենթակառուցվածքային ծրագրեր, և եթե Իրանում կատարվող ներդրումներն ավելանան աստիճանաբար, ապա չի բացառվում, որ վերջնարդյունքում դրանք կհասնեն բավական մեծ թիրախային ցուցանիշի: Այստեղ պետք է նկատի ունենանք, որ այդ ժամկետը կապված է մի շարք անորոշությունների և անկանխատեսելի զարգացումների հետ, հետևաբար որպես թիրախ նման ցուցանիշի սահմանումը ամենևին տարօրինակ չէ: Ինչևէ, պետք է հաշվի առնել, որ 2005-ից մինչև այժմ՝ շուրջ 15 տարում, Իրանում Չինաստանի ընդհանուր ներդրումներն ու շինարարական պայմանագրերը կազմել են շուրջ 27 մլրդ ԱՄՆ դոլար⁸⁵: Հետևաբար, եթե նույնիսկ վերոհիշյալ 400 մլրդ ցուցանիշը մասամբ է համապատասխանում իրականությանը, ապա դա կարող է էական ազդեցություն ունենալ երկկողմ տնտեսական հարաբերությունների զարգացման վրա:

⁸² China and Iran announced a new economic and security partnership. That's not as alarming as it sounds, By Lucille Greer and Esfandyar Batmanghelidj, April 1, 2021, <https://www.washingtonpost.com/politics/2021/04/01/china-iran-announced-new-economic-security-partnership-thats-not-alarming-it-sounds/> (այցելվել է 13.09.2021թ.):


⁸³ China to invest \$800 billion in Belt and Road initiative over next five years, The Economic Times, May 13, 2017, <https://economictimes.indiatimes.com/news/international/business/china-to-invest-800-billion-in-belt-and-road-initiative-over-next-five-years/articleshow/58656367.cms> (այցելվել է 13.09.2021թ.):

⁸⁴ No, China Isn't Giving Iran \$400 Billion, Jacopo Scita, September 2020, <https://www.bourseandbazaar.com/articles/2019/9/20/no-china-isnt-giving-iran-400-billion> (այցելվել է 13.09.2021թ.):

⁸⁵ China Global Investment Tracker, <https://www.aei.org/china-global-investment-tracker/> (այցելվել է 13.09.2021թ.):

Հետաքրքիր պատկեր է ստացվում, երբ դիտարկում ենք Իրանում Չինաստանի օտարերկրյա ուղղակի ներդրումների դինամիկան. եթե 2004-ին այդ ցուցանիշը կազմում էր շուրջ 468 միլիոն դոլար, ապա 2018-ին այն կազմել է ավելի քան 3 մլրդ դոլար, այսինքն՝ ավելացել է շուրջ 7 անգամ: 2018-ին այդ ցուցանիշով տարածաշրջանի երկրների շարքում Իրանը զիջել է միայն ԱՄԷ-ին և Պակիստանին⁸⁶: Այսինքն, եթե այդ դինամիկան պահպանվի նաև հաջորդ 15-25 տարիների ընթացքում, ապա 400 մլրդ դոլարի թիրախավորումը կարող է իրատեսական դառնալ:

Չինաստանի օտարերկրյա ուղղակի ներդրումները Իրանում \$ միլիոն




Աղբյուրը՝ *Statistical Bulletin of China's Outward Foreign Direct Investment, 2011, 2018, Chinese Ministry of Commerce*

Վերջին տասնամյակների ընթացքում Չինաստանը դարձել է Իրանի գլխավոր առևտրային գործընկերը. Չինաստանը իրանական նավթի ամենախոշոր սպառողն է, այն միակ խոշոր երկիրն է, որը չնայած ամերիկյան պատժամիջոցներին՝ շարունակում է Իրանից մեծ ծավալներով նավթ ձեռք բերել: Չինաստանը նաև հանդիսանում է Իրանի ամենախոշոր արդյունաբերական մատակարարը, ինչը Թեհրանին հնարավորություն է տալիս պահպանել երկրի զարգացող արդյունաբերության կենսունակությունը: 2019-ին Չինաստանից Իրան ներմուծման շուրջ 35%-ը կազմել են մեքենաներն ու սարքավորումները, ինչը

⁸⁶ Last Among Equals: The China-Iran Partnership in a Regional Context, By Lucille Greer and Esfandyar Batmanghelidj, The Wilson Center, September 2020, https://www.wilsoncenter.org/sites/default/files/media/uploads/documents/MEP_200831_OCC%2038%20v3%20%281%29.pdf (այցելվել է 13.09.2021թ.):

վկայում է Իրանի համար տեխնոլոգիաների ներմուծման առումով Չինաստանի կարևորության մասին:


Իրանի ներմուծումը Չինաստանից՝ ըստ արժեքի 2019թ.



Աղբյուրը՝ OEC (https://oec.world/en/visualize/tree_map/subnational_chn/export/chn/irn/show/2019/)

Իրանը նաև Պեկինի համար կարևոր սպառման շուկա է, այն տարածաշրջանի ամենամեծ բնակչությունն ունեցող երկրներից մեկն է և այս տեսանկյունից ունի հսկայական չիրացված ներուժ: Ընդհանուր առմամբ 2018-ին Չինաստանի արտահանումը դեպի Իրան կազմել է շուրջ 14 մլրդ դոլար, ինչը 2004-ի 2,5 մլրդի համեմատ հսկայական աճ է՝ տարեկան աճը կազմել է 16,9%: Այդ ցուցանիշը նույնիսկ մի փոքր ավելի է նույն ժամանակահատվածում տարածաշրջանի մյուս գործընկեր երկրներում Չինաստանի արտահանման դինամիկայի ցուցանիշից. Պակիստան՝ 15,6%, Սաուդյան Արաբիա՝ 16,1%, Թուրքիա՝ 16,8%:

Չինաստանի ընդհանուր առևտրի շրջանառությունը գործընկեր երկրի հետ \$ Միլիարդ



Աղբյուրը՝ IMF DOTS (<https://data.imf.org/regular.aspx?key=61013712>)


Ընդհանուր առմամբ Իրանի և Չինաստանի միջև առևտրի շրջանառության առաջին կտրուկ աճը տեղի ունեցավ 2005-2007թթ., երբ Իրանի նախագահ Ահմադինեժադի «Հայացք դեպի Արևելք» քաղաքականության շրջանակներում և Արևմուտքի ու ԱՄՆ-ի հետ հարաբերությունների սրման համատեքստում Իրան-ՉԺՀ առևտրաշրջանառությունը կրկնապատկվեց, հասելով 20 մլրդ դոլարի շեմը: 2010-ին առևտրի շրջանառությունը հասավ շուրջ 30 մլրդի, իսկ 2014-ին՝ հասեց 50 մլրդի շեմը⁸⁷: Թերևս առևտրաշրջանառության աճի նման տեմպով էր պայմանավորված, որ 2016-ին՝ ՉԺՀ նախագահի Իրան կատարած այցի ժամանակ ազդարարվեց մինչև 2026 թվականը երկկողմ առևտրի ծավալները 600 մլրդ դոլարի հասցնելու նպատակի մասին, ինչը մի շարք փորձագետների կողմից համարվում է անիրատեսական նպատակադրում⁸⁸:

⁸⁷ China-Iran Relations Strategic, Economic, and Diplomatic Aspects in Comparative Perspective, Kevjn Lim, Institute for National Security Studies, May 2021, https://www.inss.org.il/wp-content/uploads/2021/05/Memo213_e.pdf (այցելվել է 13.09.2021թ.):

⁸⁸ Iran isn't the only Middle Eastern country in a unique partnership with China, by Jonathan Fulton, Atlantic Council, JUL 15, 2020, <https://www.atlanticcouncil.org/blogs/menasource/iran-isnt-the-only-middle-eastern-country-in-a-unique-partnership-with-china/> (այցելվել է 13.09.2021թ.):

Իրան-Չինաստան առևտրի շրջանառությունը

\$ միլիարդ




Աղբյուրը՝ IMF DOTS (<https://data.imf.org/regular.aspx?key=61013712>)

Այդուհանդերձ, վերջին մի քանի տարիների ընթացքում Իրան-Չինաստան տնտեսական հարաբերությունները գտնվում են լճացման վիճակում: Եթե Չինաստանից Իրան արտահանման գազաթնակետը համարվում է 2014-ը, երբ այդ ցուցանիշը կազմել է շուրջ 24 մլրդ դոլար, ապա հաջորդ 4 տարիների ընթացքում այդ ցուցանիշը կրճատվել է տարեկան միջին հաշվով 11,5 %-ով, մինչդեռ այդ ընթացքում տարածաշրջանի մյուս երկրների հետ առևտրի ցուցանիշը համեմատաբար կայուն է եղել⁸⁹: Այս միտումը պահպանվել է նաև ՔՈՎԻԴ-19-ի համավարակի և համաշխարհային առևտրի անկման համատեքստում:

⁸⁹ Last Among Equals: The China-Iran Partnership in a Regional Context, By Lucille Greer and Esfandyar Batmanghelidj, The Wilson Center, September 2020, https://www.wilsoncenter.org/sites/default/files/media/uploads/documents/MEP_200831_OCC%2038%20v3%20%281%29.pdf (այցելվել է 13.09.2021թ.):

Չինաստանից արտահանումը (ընդհանուր արժեքը)
 հազար ԱՄՆ դոլար



Աղբյուրը՝ UN COMTRADE

Միաժամանակ անհրաժեշտ է արձանագրել, որ Չինաստանի և Իրանի միջև տնտեսական փոխկախվածությունը խիստ անհամաչափ է, և վերջին տասնամյակների ընթացքում Իրանի տնտեսական կախվածությունը ՉԺՀ-ից հասել է հսկայական ծավալների: 2005-ին, նախքան Իրանի դեմ ՄԱԿ-ի պատժամիջոցները, Չինաստանին բաժին էր ընկնում Իրանի արտաքին առևտրի միայն 10%-ը: 2014-ին այդ ցուցանիշը հասավ ռեկորդային 36%-ի, իսկ 2019-ին, երբ Թրամփը հայտարարեց միջուկային համաձայնագրից դուրս գալու մասին, այդ ցուցանիշը կազմել է 33%՝ 13 տոկոսային կետով ավելի, քան տարածաշրջանում ՉԺՀ հիմնական գործընկեր Պակիստանի հետ: **Ուշագրավ է, որ այս ցուցանիշով Իրանը հեռավոր Չինաստանից ավելի մեծ կախվածության ունի, քան օրինակ Հայաստանը՝ իր միակ ռազմավարական դաշնակից Ռուսաստանից:** Մյուս կողմից, Իրանի հետ առևտրաշրջանառությունը իր լավագույն ժամանակահատվածում՝ 2011թ., կազմել է Չինաստանի արտաքին առևտրաշրջանառության ընդամենը 1,2%-ը⁹⁰:

Իրան-ՉԺՀ տնտեսական հարաբերությունների վերջին տարիների առանձնահատկություններից մեկն էլ երկու կողմերի ձգտումն է՝ առևտրի շրջանառությունը կազմակերպել տեղական արժույթներով: Այս կերպ կողմերը

⁹⁰ China-Iran Relations Strategic, Economic, and Diplomatic Aspects in Comparative Perspective, Kevjn Lim, Institute for National Security Studies, May 2021, https://www.inss.org.il/wp-content/uploads/2021/05/Memo213_e.pdf (այցելվել է 13.09.2021թ.):

փորձում են խուսափել ԱՄՆ պատժամիջոցներից: Թեև առայժմ այս ուղղությամբ հաջողությունները տեսանելի չեն, սակայն երկարաժամկետ հեռանկարում այդպիսի քաղաքականությունը կարող է բավականին արդյունավետ լինել, առաջին հերթին՝ Իրանի համար: Միաժամանակ հարկ է նշել, որ Չինաստանը փորձում է նման պրակտիկա ձևավորել ոչ միայն Իրանի, այլև մի շարք այլ երկրների, օրինակ՝ ՌԴ-ի հետ⁹¹:

Իրան-Չինաստան տնտեսական հարաբերությունների առանցքային ուղղություններից մեկը համագործակցությունն է էներգետիկ ոլորտում, մասնավորապես՝ Իրանից նավթի և նավթամթերքի ներմուծման համատեքստում: Իրանի տնտեսությունը և սոցիալ-տնտեսական կայունությունը, պետական բյուջեի եկամուտները մեծապես կախված են էներգակիրների՝ առաջին հերթին նավթամթերքի արտահանումից, և այս առումով Չինաստանը հանդիսանում է Թեհրանի անփոխարինելի գործընկերը: Օրինակ, 2019-ին Իրանի արտահանման շուրջ 51%-ը բաժին է ընկել հենց նավթամթերքին, իսկ ընդհանուր հանքային հումքը կազմել է արտահանման շուրջ 65%-ը: Ուշագրավ է նաև, որ Իրանում չինական ներդրումների մեծ մասը նույնպես բաժին են ընկնում էներգետիկ ոլորտին. օրինակ, 2005-2020թթ. Իրանում չինական ներդրումների 40%-ը (շուրջ 11 մլրդ դոլար) ուղղվել են հենց էներգետիկ ոլորտին⁹²:

⁹¹ Китайская экономическая политика на современном этапе, Анастасия Степанова, 11.08.2021, <https://ru.valdaiclub.com/a/highlights/kitayskaya-ekonomicheskaya-politika/> (այցելվել է 13.09.2021թ.):

⁹² China-Iran Relations Strategic, Economic, and Diplomatic Aspects in Comparative Perspective, Kevjn Lim, Institute for National Security Studies, May 2021, https://www.inss.org.il/wp-content/uploads/2021/05/Memo213_e.pdf (այցելվել է 13.09.2021թ.):

Չինաստանի ներմուծումը Իրանից՝ ըստ արժեքի 2019թ.




Աղբյուր՝ the Observatory of Economic Complexity (OEC), n.d. (https://oec.world/en/visualize/tree_map/subnational_chn/import/chn/irn/show/2019/)

Ընդ որում, այս առումով Չինաստանի դերակատարությունը վերջին տասնամյակներին զգալիորեն աճել է. եթե 2001-ին Իրանից նավթի ներմուծման ՉԺՀ մասնաբաժինը կազմել է ընդամենը 10%, ապա 2015-ին այդ ցուցանիշը հասել է 56%-ի: Ըստ Միջազգային առևտրի կենտրոնի (ITC) տվյալների՝ 2001-ի համեմատ 2016-ին Իրանից Չինաստան նավթի ներմուծման ծավալները եռապատկվել են՝ 10,8 միլիոնից հասնելով 31,3 միլիոն բարել, մինչդեռ դոլարային ցուցանիշով այդ աճը շատ ավելի մեծ է. օրինակ 2011-ին Չինաստանը Իրանից ներմուծել է շուրջ 22,8 մլրդ դոլարի նավթ՝ 2001-ի 2 միլիարդի համեմատ:

Իրանական նավթի հումքի ներմուծումը Չինաստան

\$ միլիարդ



Աղբյուր՝ ITC, n.d. (https://www.trademap.org/Bilateral_TS.aspx)

Միաժամանակ հարկ է նշել, որ Միացյալ Նահանգների՝ միջուկային համաձայնագրից դուրս գալուց և Թեհրանի նկատմամբ պատժամիջոցների վերականգնումից հետո, ըստ պաշտոնական վիճակագրության, Իրանից Չինաստան նավթի ներմուծումը զգալիորեն կրճատվեց⁹³՝ 2019-ին կազմելով շուրջ 7 մլրդ դոլար: 2020-ի կեսերին Չինաստանի կողմից իրանական նավթի ներմուծման ծավալները հասան նվազագույնի. օրինակ 2020-ի հուլիսին Չինաստանը Իրանից ներմուծել է ընդամենը \$212,000 արժույթյամբ նավթ⁹⁴:

Սակայն նույնիսկ այդ պարագայում Չինաստանը շարունակում է մնալ իրանական նավթի հիմնական ներկրողը՝ 2019-ին ներմուծելով Իրանից արտահանվող նավթի շուրջ 49%-ը⁹⁵: Բացի այդ, ԱՄՆ պատժամիջոցների վերականգնումից հետո Չինաստանը սկսել է Իրանից ներմուծվող նավթի զգալի մասը ստանալ միջնորդավորված ձևով, հիմնականում Մալայզիայի միջոցով: Օրինակ, 2020-ի հունվարից 2021-ի փետրվարի ընթացքում Չինաստանը Իրանից ներմուծել է շուրջ 17,8 մլն տոննա նավթ, որի մոտ 75%-ը իրականացվել է «անուղղակի» ձևով՝ Մալայզիայի, Օմանի, ԱՄԷ-ի միջոցով⁹⁶:

⁹³ A pragmatic partnership: Why China and Iran try to collaborate, Ellie Geranmayeh, 17 July 2020, https://ecfr.eu/article/commentary_a_pragmatic_partnership_why_china_and_iran_try_to_collaborate/ (այցելվել է 13.09.2021թ.):


⁹⁴ Last Among Equals: The China-Iran Partnership in a Regional Context, By Lucille Greer and Esfandiyar Batmanghelidj, The Wilson Center, September 2020, https://www.wilsoncenter.org/sites/default/files/media/uploads/documents/MEP_200831_OCC%2038%20v3%20%281%29.pdf (այցելվել է 13.09.2021թ.):

⁹⁵ China-Iran Relations Strategic, Economic, and Diplomatic Aspects in Comparative Perspective, Kevjn Lim, Institute for National Security Studies, May 2021, https://www.inss.org.il/wp-content/uploads/2021/05/Memo213_e.pdf (այցելվել է 13.09.2021թ.):

⁹⁶ Analysis: Iran slips record volume of oil into China, reaches out to Asian clients for trade resumption By Nidhi Verma, Shu Zhang, MARCH 8, 2021, <https://www.reuters.com/article/us-oil-iran-asia-analysis/analysis-iran-slips-record-volume-of-oil-into-china-reaches-out-to-asian-clients-for-trade-resumption-idUSKBN2B000L> (այցելվել է 13.09.2021թ.):

Չինաստանի նավթի ներմուծումը Իրանից և Մալայզիայից

հազար ԱՄՆ դոլար



January and February 2020 data released as one total. Total has been divided by two to give monthly figures.
 Chart: Bourse & Bazaar, Source: General Administration of Customs of the People's Republic of China

Սա նշանակում է, որ թեև ԱՄՆ պատժամիջոցները որոշակի խոչընդոտներ են ստեղծում Իրան-Չինաստան էներգետիկ համագործակցության համար, սակայն երկու կողմերը կարողանում են գտնել նաև պատժամիջոցները շրջանցող ուղիներ: Բացի այդ, այն ժամանակահատվածում, երբ Բայդենը ստանձնեց ԱՄՆ նախագահի պաշտոնը և Իրանի դեմ պատժամիջոցների չեղարկման շուրջ բանակցություններ սկսվեցին, ըստ փորձագիտական գնահատականների, Իրանից Չինաստան նավթի արտահանման ծավալները սկսեցին արագ տեմպերով վերականգնվել⁹⁷:

Չինաստանը աշխարհում նավթի ամենամեծ ներկրողն է, և այդ միտումը պահպանվելու է նաև առաջիկա տասնամյակներին: 2020-ին Չինաստանի կողմից նավթի ներմուծման միջին ծավալները կազմել են օրական 10 մլն բարել՝ 2009-ի օրական 4 մլն բարելի դիմաց⁹⁸: Թեև Իրանի կշիռը այս ցուցանիշում, ըստ պաշտոնական տվյալների, այնքան էլ մեծ չէ՝ շուրջ 3%⁹⁹, իսկ Չինաստանի

⁹⁷ China-Iran Relations Strategic, Economic, and Diplomatic Aspects in Comparative Perspective, Kevin Lim, Institute for National Security Studies, May 2021, https://www.inss.org.il/wp-content/uploads/2021/05/Memo213_e.pdf (այցելվել է 13.09.2021թ.):

⁹⁸ China's crude oil imports surpassed 10 million barrels per day in 2019, U.S. Energy Information Administration, MARCH 23, 2020, <https://www.eia.gov/todayinenergy/detail.php?id=43216> (այցելվել է 13.09.2021թ.):

⁹⁹ China Is Buying Record Amounts of Iranian Oil, By Eleanor Albert, March 10, 2021, <https://thediplomat.com/2021/03/china-is-buying-record-amounts-of-iranian-oil/> (այցելվել է

հիմնական մատակարարներն են Սաուդյան Արաբիան, Ռուսաստանը, Իրաքը, Բրազիլիան¹⁰⁰, սակայն Թեհրանը հանդիսանում է վստահելի գործընկեր և էներգակիրների արտահանման տեսանկյունից կայուն և մեծ ներուժ ունեցող երկիր:

Պատահական չէ, որ Իրան-ՉԺՀ 25-ամյա համաձայնագրի նախագծում հատկապես կարևոր տեղ է հատկացվում էներգետիկ ոլորտում համագործակցության ծրագրերին: Միաժամանակ երկու երկրների միջև էներգետիկ համագործակցության ողջ ներուժը օգտագործելու համար Չինաստանին հարկավոր է նաև որոշակի անվտանգային երաշխիքներ, ուստի մի շարք փորձագետներ 25-ամյա համաձայնագիրը մեկնաբանում են նաև Իրանում ՉԺՀ ռազմական ներկայություն ապահովելու նպատակադրման տեսանկյունից: Ընդհանուր առմամբ, Հորմուզի նեղուցով օրական միջինը 3 մլն բարել նավթ է ուղղվում դեպի Չինաստան՝ Պեկինին դարձնելով այդ առևտրային ճանապարհի գլխավոր շահառուն¹⁰¹: Սա նշանակում է, որ Չինաստանը պետք է ավելի մեծ ուշադրություն դարձնի տարածաշրջանային երկրների, այս պարագայում՝ Իրանի հետ համագործակցության ռազմաքաղաքական բաղադրիչին՝ հատկապես հաշվի առնելով տարածաշրջանում ԱՄՆ անվտանգային «անձրևանոցի» աստիճանաբար կրճատումը:

2.5. Ռազմաքաղաքական համագործակցության առանձնահատկությունները

Ինչպես արդեն նշվեց վերլուծության նախորդ հատվածում, 2016-ից Իրանն ու Չինաստանը երկկողմ հարաբերությունները բարձրացրին նոր՝ «համապարփակ ռազմավարական գործընկերության» մակարդակի, իսկ արդեն 2021-ի մարտին ստորագրված համաձայնագրով ամրագրեցին այդ հարաբերությունների զարգացման ուղենիշերը: Թեև հրապարակված ոչ պաշտոնական փաստաթղթում անդրադարձը ռազմաքաղաքական բաղադրիչին այնքան էլ ծավալուն չէ, սակայն ինչպես այդ փաստաթղթի որոշ դետալներ, այնպես էլ երկու երկրների կողմից մի շարք պաշտոնական հայտարարություններ և գործողություններ հնարավորություն

13.09.2021թ.): Iran Will Pursue Its New China Partnership With Caution, Stratfor, Apr 14, 2021, <https://worldview.stratfor.com/article/iran-will-pursue-its-new-china-partnership-caution> (այցելվել է 13.09.2021թ.):

¹⁰⁰ Saudi Arabia pips Russia to be China's biggest oil supplier in 2020, By Muyu Xu, Chen Aizhu, JANUARY 20, 2021, <https://www.reuters.com/article/china-economy-trade-oil-int/saudi-arabia-pips-russia-to-be-chinas-biggest-oil-supplier-in-2020-idUSKBN29P0ZG> (այցելվել է 13.09.2021թ.):

¹⁰¹ China and Iran announced a new economic and security partnership. That's not as alarming as it sounds, By Lucille Greer and Esfandyar Batmanghelidj, April 1, 2021, <https://www.washingtonpost.com/politics/2021/04/01/china-iran-announced-new-economic-security-partnership-thats-not-alarming-it-sounds/> (այցելվել է 13.09.2021թ.):

Են տալիս որոշակի պատկերացում կազմելու երկկողմ ռազմաքաղաքական համագործակցության առանձնահատկությունների մասին:

Փաստաթղթում նշվում է, որ կողմերը մտադիր են համակարգել գործողությունները և աջակցել միմյանց դիրքորոշմանը տարբեր միջազգային կառույցներում և տարածաշրջանային կազմակերպություններում: Չինաստանն ու Իրանը արդեն իսկ ակտիվորեն համագործակցում են միջազգային կառույցներում, ինչը դրսևորվում է տարբեր քվեարկությունների, քաղաքական հայտարարությունների տեսքով և այլն: Չինաստանը, լինելով ՄԱԿ-ի ԱԽ մշտական անդամ, հաճախ առանցքային դեր է խաղում հակաիրանական նախագծերին հակազդելու տեսանկյունից¹⁰²: Սակայն այսպիսի պարտավորության փաստաթղթային ամրագրումը այդ համագործակցությունը ավելի համակարգված և արդյունավետ կդարձնի:

Փաստաթղթում նշվում է նաև բարձրաստիճան պաշտոնյաների տարեկան հանդիպումների անցկացման մտադրության մասին, այդ թվում՝ նկատի ունենալով արտգործնախարարների գագաթնաժողովների կազմակերպումը, փոխարտգործնախարարների կամ նախարարի օգնականների միջև քաղաքական խորհրդակցությունները և այլն: Այդպիսի գագաթնաժողովները երկու կողմերին հնարավորություն կտան պարբերաբար հստակեցնել դիրքորոշումները երկկողմ օրակարգի կարևոր հարցերի վերաբերյալ, ինչպես նաև համակարգել գործողությունները տարածաշրջանային և աշխարհաքաղաքական հարցերում:

Հատկանշական է, որ պայմանագրով նախատեսվում է, որ երկու կողմերը պետք է երաշխավորեն փաստաթղթի հոդվածների իրականացումը՝ հակառակ երրորդ կողմերի անօրինական ճնշումների: Այսինքն՝ կողմերն ի սկզբանե նախատեսում են, որ երրորդ երկրները հավանաբար խոչընդոտելու են պայմանագրի կետերի իրականացմանը՝ նկատի ունենալով առաջին հերթին Միացյալ Նահանգները: Ի թիվս այլոց, պայմանագրի համաձայն՝ Չինաստանը պարտավորվում է աջակցել Իրանի անդամակցությանը Շանհայի համագործակցության կազմակերպությանը (ՇՀԿ), ինչին Թեհրանը ձգտում է դեռևս Ահմադինեժադի նախագահության ժամանակաշրջանից: Իրանը փորձում է այս կառույցին անդամակցությամբ մեծացնել իր ազդեցությունը Կենտրոնական Ասիայի երկրներում: Ուշագրավ է, որ ըստ ռուսական ՋԼՄ-ների՝ Իրանը առաջիկայում ՇՀԿ-ին անդամակցության գործընթաց կսկսի¹⁰³:

¹⁰² Statement by H.E. Ambassador WANG Qun at the IAEA Board of Governors Meeting, 2020/06/18, <http://www.chinesemission-vienna.at/eng/hyyfy/t1789968.htm> (այցելվել է 13.09.2021թ.):

¹⁰³ Иран станет членом ШОС, РИА Новости, 09.09.2021, <https://ria.ru/20210909/shos-1749274706.html> (այցելվել է 13.09.2021թ.):

Փաստաթղթում որոշակի անդրադարձ կա նաև ռազմական, պաշտպանական և անվտանգային համագործակցություն հարցերին: Մասնավորապես նշվում է համատեղ ծովային, ցամաքային և օդային զորավարժությունների իրականացման, պաշտպանական տեխնոլոգիաների և արդյունաբերության ոլորտներում համագործակցության ընդլայնման՝ ներդրումների, նախագծման, զարգացման, համատեղ արտադրության և սարքավորումների ապահովման ծրագրերի իրականացման մասին: Թեև այլ մանրամասներ հայտնի չեն, սակայն այսպիսի նպատակադրումներն ինքնին նշանակում են, որ Չինաստանը խորացնելու է ռազմական համագործակցությունը Թեհրանի հետ¹⁰⁴, շարունակելու է նպաստել Իրանի ռազմարդյունաբերության զարգացմանը, իսկ երկկողմ զորավարժությունները ավելի կանոնակարգված բնույթ են ստանալու: Պայմանագրում հատուկ շեշտադրվում է համատեղ հակահաբեկչական պայքարի, ինչպես նաև հետախուզական տվյալների փոխանակման մտադրությունը¹⁰⁵: Որոշ փորձագետներ գտնում են, որ հղում կատարելով պայմանագրի այս կետի վրա, ինչպես նաև շեշտելով Իրանում խոշոր ներդրումների ու ենթակառուցվածքների պաշտպանության անհրաժեշտությունը, Պեկինը հետագայում կարող է Իրանում ռազմական ներկայություն հաստատել:

Վերջին 10 տարիների ընթացքում Չինաստանը Իրանի հետ անցկացրել է 3 համատեղ զորավարժություններ՝ 2014, 2017 թվականներին՝ երկկողմ ձևաչափով, իսկ 2019-ին՝ եռակողմ, Ռուսաստանի մասնակցությամբ: Սակայն հարկ է նշել, որ Իրանը նմանատիպ երկկողմ զորավարժություններ է անցկացրել նաև տարածաշրջանի մյուս երկրների՝ Սաուդյան Արաբիայի, ԱՄԷ-ի, Պակիստանի հետ: Հատկանշական է, որ 2017-ին և 2019-ին Իրանի հետ զորավարժությունների անցկացման տարում Պեկինը զորավարժություններ է անցկացրել նաև Իրանի գլխավոր տարածաշրջանային մրցակցի՝ Սաուդյան Արաբիայի հետ¹⁰⁶: Սա վկայում է այն մասին, որ Չինաստանը դեռևս փորձում է ռազմական հարցերում պահպանել հավասարակշռությունը տարածաշրջանային կարևոր դերակատարների միջև և խուսափել ռազմական կոալիցիաների մեջ ներքաշվելու հեռանկարից:


¹⁰⁴ Are China and Iran Forging a New Geopolitical Axis in Eurasia?, By Emil Avdaliani -March 1, 2021, <https://chinaobservers.eu/are-china-and-iran-forging-a-new-geopolitical-axis-in-eurasia/> (այցելվել է 13.09.2021թ.):

¹⁰⁵ Ex-IDF intel head: Iran-China megadeal includes 'worrying' military info-sharing, 29 March 2021, <https://www.timesofisrael.com/ex-idf-intel-head-iran-china-megadeal-includes-worrying-military-info-sharing/> (այցելվել է 13.09.2021թ.):

¹⁰⁶ Last Among Equals: The China-Iran Partnership in a Regional Context, By Lucille Greer and Esfandiyar Batmanghelidj, The Wilson Center, September 2020, https://www.wilsoncenter.org/sites/default/files/media/uploads/documents/MEP_200831_OCC%2038%20v3%20%281%29.pdf (այցելվել է 13.09.2021թ.):

Ինչ վերաբերում է Իրան-ՉԺՀ ռազմատեխնիկական համագործակցությանը, ապա այստեղ Չինաստանը հանդիսանում է Թեհրանի առանցքային գործընկերը, առանց որի վերջինս հազիվ թե կարողանար պահպանել տարածաշրջանում ռազմական բալանսը: Թեև Չինաստանը սպառազինություններ է մատակարարում նաև Մերձավոր Արևելքի այլ երկրներին, այդ թվում՝ Իրանի մրցակից Սաուդյան Արաբիային, սակայն վերջիններս, ի տարբերություն Իրանի, ունեն նաև մատակարարման այլընտրանքային տարբերակներ: Հետևաբար, Չինաստանի հետ ռազմատեխնիկական համագործակցությունը, հատկապես նորագույն տեխնոլոգիաների ոլորտում, Իրանի օրակարգում կարևոր տեղ է զբաղեցնում, առանց որի վերջինիս ռազմարդյունաբերության զարգացման հնարավորությունները զգալիորեն կսահմանափակվեն:

Չինաստանի մասնաբաժինը զենքի ներմուծման ընդհանուր ծավալում 2000-2019թթ(%)



Աղբյուրը՝ The Stockholm International Peace Research Institute

Ընդհանուր առմամբ՝ Իրան-ՉԺՀ համաձայնագրի ռազմաքաղաքական բաղադրիչի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ թեև այդ համաձայնագիրը ունի մեծ ներուժ, սակայն այն լիարժեք ռազմաքաղաքական դաշինք որակելը դեռևս ժամանակավրեպ է: Ինչպես տնտեսական, այնպես էլ ռազմական ոլորտում Իրանի ու Չինաստանի համագործակցությունը ամենևին աննախադեպ չէ, եթե համեմատենք տարածաշրջանի մի քանի այլ երկրների հետ, հիմնական ցուցանիշները համադրելի են: Թեև երկկողմ քաղաքական հարաբերությունները

վերջին տարիներին կրում են ավելի ներդաշնակ բնույթ, տարբեր տարածաշրջանային և միջազգային հարցերի շուրջ երկու երկրները ունեն համընկնող մոտեցումներ, սակայն մի կողմից տարածաշրջանում անկողմնակալ գերտերության կարգավիճակ ունենալու, ներտարածաշրջանային հակամարտություններին չմիջամտելու ՉԺՀ ձգտումը, մյուս կողմից Իրանի տարաբնույթ խնդիրները տարածաշրջանի տարբեր երկրների հետ, հնարավորություն չեն տալիս խոսել քաղաքական համագործակցության լիարժեք ներդաշնակության մասին:

Այնուամենայնիվ երկու երկրները տարածաշրջանային, միջազգային և գլոբալ հարցերի շուրջ ունեն հիմնականում համընկնող շահեր և մոտեցումներ, ինչը թույլ է տալիս ենթադրել, որ Թեհրանը և Պեկինը ձգտելու են լիարժեք օգտագործել այդ թվում համապարփակ ռազմավարական համագործակցության պայմանագրից բխող ռազմաքաղաքական համագործակցության ամբողջ ներուժը: Իրանը այս ոլորտում Չինաստանի հետ հարաբերությունների խորացումը դիտարկում է նաև ԱՄՆ և վերջինիս դաշնակիցներին հակազդելու տեսանկյունից: Այն հնարավորություն է տալիս Վաշինգտոնի հետ միջուկային համաձայնագրի և պատժամիջոցների չեղարկման շուրջ բանակցային գործընթացում լրացուցիչ առավելություն ստանալու և հանդես գալու ավելի ամուր դիրքերից: Իրանը կարող է ներկայացնել, որ ի դեմս Չինաստանի՝ ունի տնտեսական և ռազմավարական այլընտրանք¹⁰⁷, հատկապես եթե հաշվի առնենք, որ ըստ որոշ կանխատեսումների, արդեն 2028-ին Չինաստանը դառնալու է աշխարհի առաջին տնտեսությունը՝ ՀՆԱ ցուցանիշով շրջանցելով ԱՄՆ-ին¹⁰⁸:

Բացի այդ, Չինաստանի հետ բազմոլորտ հարաբերությունների խորացումը Իրանի համար ունի նաև ներքաղաքական շարժառիթ: Իրանի հոգևոր առաջնորդը բազմիցս նշել է ոչ արևմտյան գերտերությունների հետ ռազմավարական համագործակցության խորացման նպատակների մասին¹⁰⁹, ինչը Իրանում ավելի ընկալելի դարձավ և հանրային աջակցություն ստացավ հատկապես միջուկային համաձայնագրից ԱՄՆ-ի դուրս գալուց հետո: Իրանցիները ինչպես Ռուսաստանը, այնպես էլ Չինաստանը ընկալում են որպես ավելի վստահելի գործընկեր, քան օրինակ ԵՄ-ը, որը գտնվում է ԱՄՆ-ի ազդեցության տակ և ամերիկյան

¹⁰⁷ The New China Challenge: A Game-Changing Strategic Agreement with Iran, by Mohammed Ayoob, April 3, 2021, <https://nationalinterest.org/feature/new-china-challenge-game-changing-strategic-agreement-iran-181730> (այցելվել է 13.09.2021թ.):

¹⁰⁸ Экономика Китая может обогнать США к 2028 году. А где будет Россия?, 26 декабря 2020, <https://www.bbc.com/russian/news-55449234> (այցելվել է 13.09.2021թ.):

¹⁰⁹ Iran's leader says never trusted the West, seeks closer ties with China, By Bozorgmehr Sharafedin, JANUARY 23, 2016, <https://www.reuters.com/article/us-iran-china/irans-leader-says-never-trusted-the-west-seeks-closer-ties-with-china-idUSKCN0V109V> (այցելվել է 13.09.2021թ.):

պատժամիջոցների պատճառով հնարավորություն չունի Իրանի հետ հարաբերությունների զարգացման լուրջ օրակարգ ձևավորել¹¹⁰:

Հատկապես Իրանում վերջին նախագահական ընտրություններից հետո, երբ իշխանության եկան պահպանողական ուժերը, կարող ենք կանխատեսել, որ Իրանը ավելի շատ է կենտրոնանալու արևելյան գերտերությունների հետ հարաբերությունների խորացման վրա: Մյուս կողմից՝ Չինաստանի համար Իրանի հետ համագործակցության խորացումը կարևոր է առաջին հերթին Մերձավոր Արևելքում իր տարածաշրջանային և աշխարհաքաղաքական շահերն ու նոր հավակնությունները առաջ մղելու նպատակով ամուր հենարան ձեռք բերելու տեսանկյունից, ինչի համար Իրանը ամենահարմար տարբերակներից մեկն է: Երկու երկրների միջև ստորագրված 25-ամյա համաձայնագիրը այս տեսանկյունից լայն հնարավորություններ է ընձեռում, և հավանաբար Թեհրանն ու Պեկինը կփորձեն առավելագույնը օգտվել այդ հնարավորություններից:

2.6. Իրան-Չինաստան հարաբերությունների զարգացման հեռանկարը և դրա տարածաշրջանային ազդեցությունը

Ինչպես արդեն նշվեց, չնայած Իրան-Չինաստան նոր համաձայնագիրը, հակառակ տարբեր ուռճացված գնահատականների, դեռևս չի նշանակում երկու երկրների միջև լիարժեք ռազմական դաշինք, սակայն այն երկկողմ հարաբերությունները ռազմավարական նոր մակարդակի բարձրացնելու մեծ ներուժ է պարունակում: Եթե կարճաժամկետ և միջնաժամկետ հեռանկարում Չինաստանը ամենայն հավանականությամբ կփորձի հավասարակշռել Իրանի և տարածաշրջանի մյուս կարևոր դերակատարների հետ հարաբերությունները, ապա ռազմավարական և երկարաժամկետ հեռանկարում Իրանի հետ համագործակցությունը ունի բոլոր հնարավորությունները վերաճելու ռազմաքաղաքական դաշինքի:

Մասնավորապես, նման սցենարը կարող է իրատեսական դառնալ, երբ Պեկինը որոշի ավելի ակտիվորեն ներգրավվել Մերձավոր Արևելքում աշխարհաքաղաքական պայքարին և ավելի մեծ պատասխանատվություն ստանձնել այդ կարևոր տարածաշրջանի անվտանգային հարցերում: Իրանի՝ որպես տարածաշրջանային դաշնակցի և հիմնական հենակետի առավելություններից մեկն այն է, որ վերջինիս հետ դաշինքը լինելու է ասիմետրիկ, և ինչպես արդեն նշվեց վերլուծության նախորդ հատվածներում, Չինաստանը լինելու է թելադրող կողմը: Միաժամանակ Իրանը տարածաշրջանի եզակի

¹¹⁰ A pragmatic partnership: Why China and Iran try to collaborate, Ellie Geranmayeh, 17 July 2020, https://ecfr.eu/article/commentary_a_pragmatic_partnership_why_china_and_iran_try_to_collaborate/ (այցելվել է 13.09.2021թ.):

երկրներից է, որ ունի ռազմական, մարդկային, էներգետիկ և կոմունիկացիոն հսկայական ներուժ, Չինաստանի հիմնական աշխարհաքաղաքական մրցակցի՝ ԱՄՆ-ի հետ ունի թշնամական հարաբերություններ և շահագրգռված է տարածաշրջանում ամերիկյան ազդեցության կրճատմամբ:

Չինաստանի համար Իրանի՝ որպես հավանական տարածաշրջանային դաշնակցի առավելություններից մեկն այն է, որ Թեհրանը մեծ ազդեցություն ունի մի շարք տարածաշրջանային և հարևան երկրներում՝ Իրաք, Սիրիա, Լիբանան, Պաղեստին, Եմեն: Բացի այդ, Իրանը, ինչպես նաև Պակիստանը կարող են կարևոր դեր խաղալ Աֆղանստանում, հետևաբար նաև Կենտրոնական Ասիայում խաղաղության և կայունության պահպանման հարցում: Սա հատկապես այժմեական է՝ հաշվի առնելով Աֆղանստանից ԱՄՆ-ի զորքերի դուրսբերումը և իշխանության գրավումը թալիբների կողմից: Աֆղանստանում և Կենտրոնական Ասիայում կայունության պահպանումը առանցքային նշանակություն ունի Չինաստանի «Գոտի և ճանապարհ» նախագծի հաջող ընթացքի համար. այդ նպատակով Պեկինը ձգտելու է համագործակցել այդ բարդ տարածաշրջանի գործընթացների վրա ազդեցություն ունեցող հիմնական դերակատարների՝ այդ թվում Իրանի հետ:

Թեհրանը փորձելու է Չինաստանի հետ հարաբերությունների խորացումը և նոր համաձայնագիրը օգտագործել նաև ԱՄՆ-ի հետ բանակցություններում առավելություն ստանալու նպատակով: Չինաստանը վերջին տասնամյակներին զգալիորեն օգտվել է Իրանի նկատմամբ արևմտյան պատժամիջոցներից՝ երկկողմ տնտեսական հարաբերություններում հանդես գալով թելադրողի դիրքերից, ուստի դրանց չեղարկումը Թեհրանին հնարավորություն կտա որոշակիորեն վերականգնել Պեկինի հետ հարաբերություններում ձևավորված անհավասարակշռությունը¹¹¹:

Սակայն նույնիսկ այդ դեպքում Չինաստանը շարունակելու է մնալ Իրանի գլխավոր գործընկերը, այն չի հանգեցնելու Արևմտյան ներդրումների ակնթարթային ներհոսքի, իսկ հաշվի առնելով Թրամփի կողմից պատժամիջոցների վերականգնման փորձը, ինչպես նաև նման սցենարի կրկնության հավանականությունը, կարելի է ենթադրել, որ արևմտյան կապիտալը շարունակելու է Իրանի նկատմամբ մեծ զգուշավորություն ցուցաբերել: Բացի այդ, Իրանը ձգտելու է շարունակաբար խորացնել Չինաստանի հետ համագործակցությունը ռազմական, առաջին հերթին՝ տեխնոլոգիաների ոլորտում՝

¹¹¹ Are China and Iran Forging a New Geopolitical Axis in Eurasia?, By Emil Avdaliani -March 1, 2021, <https://chinaobservers.eu/are-china-and-iran-forging-a-new-geopolitical-axis-in-eurasia/> (այցելվել է 13.09.2021թ.):

անկախ ամերիկյան պատժամիջոցների կարգավիճակից¹¹²: Չինաստանը նաև շարունակելու է մնալ իրանական նավթի սպառման հիմնական շուկան:

Միացյալ Նահանգները և վերջինիս տարածաշրջանային դաշնակիցները, ամենայն հավանականությամբ, կփորձեն կանխել Իրանի և Չինաստանի միջև լիարժեք ռազմաքաղաքական դաշինքի ձևավորումը, ինչը կարող է լուրջ սպառնալիք դառնալ Մերձավոր Արևելքում և Եվրասիայում ԱՄՆ անվտանգային և էներգետիկ շահերի համար: Իրանում ավանդաբար առկա է անվտանգություն գերտերությունների նկատմամբ՝ կապված ինքնիշխանության կորստի սպառնալիքի հետ, և եթե Չինաստանի հետ ստորագրված համաձայնագիրը ամբողջ ծավալով կյանքի կոչվի, Թեհրանը կարող է Պեկինից ավելի մեծ կախվածության մեջ հայտնվել¹¹³: Պատահական չէ, որ Արևմուտքը, առայժմ տարբեր փորձագետների և ՋԼՄ-ների մակարդակով, փորձում է իրանցիների շրջանում ակտիվացնել հենց այս մտահոգությունը:

Դեռևս հայտնի չէ, թե 25-ամյա համաձայնագրով նախատեսված 400 մլրդ դոլարի ներդրումների որ մասն է լինելու ուղիղ ներդրումների, իսկ որ մասը՝ պարտքի տեսքով: Արևմտյան փորձագիտական և քաղաքական շրջանակները Պեկինին մեղադրում են նրանում, որ մասնավորապես «Գոտի և ճանապարհ» նախագծի շրջանակներում վերջինս հաճախ կիրառում է այսպես կոչված «պարտքի դիվանագիտությունը»¹¹⁴ («պարտքի թակարդ»): Այն ենթադրում է թույլ տնտեսություն ունեցող երկրներին տրամադրվող արտաքին պարտքի միջոցով վերջիններիս տնտեսական և քաղաքական կախվածության մեջ դնելու մարտավարություն:

Օրինակ, Չինաստանի նման քաղաքականության արդյունքում Շրի Լանկան չինական վարկը մարելու անկարողության պատճառով կարևոր նշանակություն ունեցող Համբանտոտա նավահանգիստը 99 տարվա վարձակալությամբ տրամադրել է Պեկինին, Պակիստանը Գվադահար նավահանգստի կառուցման համար Չինաստանին պարտք է ավելի քան 10 մլրդ դոլար, իսկ նավահանգիստը վարձակալությամբ Պեկինի տրամադրության տակ է մինչև 2059թ, Մալդիվները

¹¹² Iran Will Pursue Its New China Partnership With Caution, Stratfor, Apr 14, 2021, <https://worldview.stratfor.com/article/iran-will-pursue-its-new-china-partnership-caution> (այցելվել է 13.09.2021թ.):

¹¹³ Are China and Iran Forging a New Geopolitical Axis in Eurasia?, By Emil Avdaliani -March 1, 2021, <https://chinaobservers.eu/are-china-and-iran-forging-a-new-geopolitical-axis-in-eurasia/> (այցելվել է 13.09.2021թ.):

¹¹⁴ China's Debt Diplomacy, By Mark Green, APRIL 25, 2019, <https://foreignpolicy.com/2019/04/25/chinas-debt-diplomacy/> (այցելվել է 13.09.2021թ.):

Չինաստանին պարտք է մոտ 1,5 մլրդ դոլար, ինչը այդ երկրի ՀՆԱ-ի շուրջ 30% է¹¹⁵: Չինաստանը այս քաղաքականությունը հաջողությամբ կիրառում է նաև Կենտրոնական Ասիայի հետխորհրդային երկրներում, որտեղ պարտքային և տնտեսական կախվածության աճին զուգահեռ՝ Պեկինը աստիճանաբար մեծացնում է ազդեցությունը քաղաքական գործընթացների վրա¹¹⁶: Կա հավանականություն, որ Չինաստանը հսկայաձավալ ներդրումների միջոցով կփորձի նմանատիպ կախվածության մեջ գցել նաև Իրանին՝ հատկապես հաշվի առնելով, որ մի շարք ոլորտներում համագործակցության արդեն իսկ առկա անհամաչափ բնույթը դրա համար նպաստավոր նախադրյալներ է ստեղծում:

Դիտարկելով Իրան-Չինաստան համագործակցության խորացման և վերջերս ստորագրված համաձայնագրի տարածաշրջանային հետևանքները՝ հարկավոր է հաշվի առնել, որ Թեհրանը թեև հանդես է գալիս որպես Չինաստանի մեծավորարևելյան քաղաքականության խճանկարի կարևորագույն մասնիկներից մեկը, սակայն Պեկինի տարածաշրջանային շահերը Իրանով չեն սահմանափակվում: Ինչպես արդեն նշվեց, Չինաստանի արտգործնախարարը, տարածաշրջանային այցի շրջանակներում և Թեհրանի հետ համաձայնագրի ստորագրումից հետո այցելել է նաև այլ կարևոր երկրներ՝ Սաուդյան Արաբիա, ԱՄԷ, Բահրեյն, Օման, Թուրքիա: Սա մի կողմից ընդգծում է Իրանի հետ ստորագրված պայմանագրի կարևորությունը, մյուս կողմից վկայում է տարածաշրջանում Պեկինի բազմաշերտ և զգուշավոր քաղաքականության մասին:

Չինաստանը, Իրանում մեծացնելով իր ներկայությունն ու դերակատարությունը մի շարք ոլորտներում՝ էներգետիկ, բանկային ոլորտ, օդանավակայաններ, հաղորդակցություն, նավահանգիստներ, ամրապնդվելով Իրանի հյուսիս-արևմուտքում և հարավում գտնվող ռազմավարական նշանակություն ունեցող ազատ առևտրի գոտիներում և նավահանգիստներում՝ տարածաշրջանում կարևոր դերակատարություն ստանձնելու լուրջ հայտ է ներկայացնում: Սա իր ազդեցությունն է ունենալու տարածաշրջանի մյուս երկրների վարքագծի վրա. ԱՄՆ-ը և վերջինիս տարածաշրջանային դաշնակիցները

¹¹⁵ China And Iran Approach Massive \$400 Billion Deal, Ariel Cohen, Jul 17, 2020, <https://www.forbes.com/sites/arielcohen/2020/07/17/china-and-iran-approach-massive-400-billion-deal/?sh=1d2f6762a168> (այցելվել է 13.09.2021թ.):

¹¹⁶ Цена стабильностиКитай строит Казахстан на свои деньги. Что он потребует взамен?, Дмитрий Плотников, 18 июня 2019, https://lenta.ru/articles/2019/06/18/money_money/, Пекинская удавка.Китай вкладывает в Таджикистан большие деньги. Чем республика будет отдавать долги?, Дмитрий Плотников, 1 июня 2021, https://lenta.ru/articles/2021/06/01/zhyzn_vzaimy/?fbclid=IwAR3huqIT6a22qkeDYm4hQfssVHHXaAc2R9fuzfk2xFYuhdSt7Tlg0Ni1-xw (այցելվել է 13.09.2021թ.); Тень дракона.Китай начал активно вмешиваться в дела бывших советских республик. Чем это грозит России?, Дмитрий Плотников, 11 мая 2021, https://lenta.ru/articles/2021/05/11/china_exp/ (այցելվել է 13.09.2021թ.):

հավանաբար կփորձեն կանխել Մերձավոր Արևելքում Իրան-Չինաստան աշխարհաքաղաքական հոսանքի գերակայությունը:

Այս համատեքստում չի կարելի բացառել ինչպես ԱՄՆ-Թուրքիա լարված հարաբերությունների կարգավորումը, այնպես էլ ԱՄՆ աջակցությունը Անկարայի և Ծոցի երկրների՝ մասնավորապես Սաուդյան Արաբիայի, ինչպես նաև Իսրայելի միջև վերջին տարիների լարված հարաբերությունների կարգավորմանը՝ ի դեմս իրանական սպառնալիքի (համեմված Չինաստանի և Ռուսաստանի հետ վերջինիս ռազմաքաղաքական համաձայնագրերով)¹¹⁷: Չինաստանն իր հերթին փորձելու է չեզոքացնել տարածաշրջանում իր, ինչպես նաև Իրան-Չինաստան հնարավոր դաշինքի դեմ Թուրքիայի գլխավորությամբ այլ երկրների համախմբման հեռանկարը՝ միաժամանակ ձգտելով իր տարածաշրջանային ռազմավարական ծրագրերի մեջ ներգրավել նաև Թուրքիային և տարածաշրջանի մյուս երկրներին: Բացի այդ, Պեկինը կարող է նպաստել Իրանի և վերջինիս տարածաշրջանային մրցակիցների միջև հարաբերությունների կարգավորմանը, այդ թվում՝ դրական դեր խաղալով Իրան-Սաուդյան Արաբիա հարաբերությունների կարգավորման հարցում:

Իրանի և Թուրքիայի հետ Չինաստանի հարաբերությունների առանձնահատկությունները կարող են առանցքային ազդեցություն ունենալ ինչպես լայն տարածաշրջանում, այնպես էլ Հարավային Կովկասում աշխարհաքաղաքական հավասարակշռության վրա: Եթե Իրան-Չինաստան նոր դաշինքը կարող է Հայաստանի համար հիմնականում նոր հնարավորություններ առաջ բերել, ապա Չինաստանի և Թուրքիա միջև ինչպես համագործակցության, այնպես էլ մրցակցության խորացումը Հայաստանի և Հարավային Կովկասի համար կարող է նաև նոր ռիսկեր առաջացնել: Հետևաբար Պեկինի և Անկարայի միջև համագործակցության և մրցակցության առանձնահատկությունների ուսումնասիրությունը առանցքային կարևորություն է ներկայացնում ինչպես Չինաստանի տարածաշրջանային քաղաքականությունը ճիշտ հասկանալու, այնպես էլ Մերձավոր Արևելքի և Հարավային Կովկասի համար դրա հետևանքները գնահատելու տեսանկյունից:

¹¹⁷ The China-Iran agreement | Geostrategic motives and implications, Strategic Fiker Center for Studies, 11 Apr 2021, <https://fikercenter.com/en/position-papers/the-china-iran-agreement-geostrategic-motives-and-implications> (այցելվել է 13.09.2021թ.):

3. ԹՈՒՐՔԻԱ-ՉԻՆԱՍՏԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԻՑ ՄԻՆՉԵՎ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Մեծ Մերձավոր Արևելքում Չինաստանի քաղաքականությունը ճիշտ հասկանալու տեսանկյունից անհնարին է անտեսել վերջինիս հարաբերությունները տարածաշրջանում հսկայական ազդեցություն և կարևորագույն տնտեսական, ռազմաքաղաքական, կոմունիկացիոն դերակատարություն ունեցող Թուրքիայի հետ: Թուրքիան ներգրավված է տարածաշրջանի գրեթե բոլոր աշխարհաքաղաքական գործընթացներում, հակամարտություններում, այն հանդիսանում է կարևոր աշխարհագրական հանգույց Չինաստանի «Գոտի և ճանապարհ» ծրագրի շրջանակներում, իսկ վերջինիս ազդեցությունը և պանթուրքական նկրտումները Կովկասից մինչև Կենտրոնական Ասիա Չինաստանի համար առնվազն երկարաժամկետ մտահոգության առարկա են:

3.1. Հարաբերությունների առանձնահատկությունները և երկու երկրների տարածաշրջանային շահերը

Չինաստանի և Թուրքիայի միջև դիվանագիտական հարաբերությունները հաստատվել են դեռևս 1971-ին, սակայն այդ հարաբերությունները երբեք չեն առանձնացել յուրահատուկ ջերմությամբ և էնտուզիազմով: Մի կողմից՝ Թուրքիայի անդամակցությունը ՆԱՏՕ-ին, Չինաստանում թրքախոս ուղղորների նկատմամբ վարվող քաղաքականության հետ կապված վերջինիս քննադատությունը, մյուս կողմից՝ միմյանց հակասող տարածաշրջանային շահերը այդ հարաբերությունները մշտապես պահել են սառը, երբեմն լարված մթնոլորտում: Հարաբերությունները որոշակիորեն ջերմացան 1990-ականներին, երբ Քրդական աշխատավորական կուսակցության հետ հակամարտության պատճառով Արևմուտքը Թուրքիայի նկատմամբ զենքի վաճառքի որոշակի սահմանափակումներ կիրառեց, և Անկարան փորձեց այդ բացը լրացնել ՉԺՀ հետ համագործակցության միջոցով: Չինաստանի տեխնոլոգիական աջակցության շնորհիվ Թուրքիան կարողացավ որոշակի նվաճումներ գրանցել ռազմարդյունաբերության ոլորտում՝ մասնավորապես փոքր հեռահարության բալիստիկ հրթիռների արտադրության հարցում:

Չինաստանն ու Թուրքիան նաև ռազմական ոլորտում համագործակցության որոշակի փորձ ունեն. 2010-ի սեպտեմբերին Թուրքիայի և Չինաստանի ռազմաօդային ուժերը Թուրքիայում անցկացրել են համատեղ զորավարժություններ: Սա առաջին դեպքն էր, երբ ՆԱՏՕ-ի անդամ երկիրը

սեփական տարածքում Չինաստանի հետ նմանատիպ զորավարժություններ է անցկացնում¹¹⁸:

Միաժամանակ եղել են փորձեր՝ խորացնելու համագործակցությունը ռազմատեխնիկական ոլորտում. օրինակ 2013-ին չինական ընկերությունը հաղթել էր 4 մլրդ ԱՄՆ դոլար արժողությամբ մրցույթը, որը նախատեսում էր Թուրքիայում հեռահար հրթիռների համատեղ արտադրության հիմնում: Ընդ որում, Թուրքիան մերժել էր ամերիկյան, եվրոպական և ռուսական կազմակերպությունների առաջարկները և նախապատվությունը տվել չինական ընկերությանը, քանի որ վերջինս համաձայնել էր կիսվել տեխնոլոգիաներով և ավելի ցածր գին էր առաջարկել: Հետագայում, այդ թվում՝ ՆԱՏՕ-ի անդամ երկրների ճնշման տակ, Թուրքիան մի քանի անգամ հետաձգեց այդ ծրագիրը և ի վերջո դուրս եկավ այդ իրավիճակից¹¹⁹: Այս փորձը, ինչպես նաև հետագայում ՌԴ հետ ռազմատեխնիկական համագործակցությունը ցույց են տալիս, որ Անկարան սկզբունքորեն չի բացառում ՆԱՏՕ-ի հակառակորդների, այդ թվում Չինաստանի հետ ռազմատեխնիկական համագործակցության խորացումը, եթե այն բխում է Թուրքիայի շահերից և առկա չէ ավելի ձեռնտու այլընտրանք:

Թուրքիայի և Չինաստանի մերձեցման համար նպաստավոր պայմաններ ստեղծվեցին, երբ Անկարայի և Արևմուտքի միջև հարաբերություններում որոշակի լարվածություն առաջացավ: Էրդողանի կողմից բռնապետական կարգերի հաստատումից հետո, երբ Անկարան սկսեց աստիճանաբար մեկուսանալ արևմտյան գործընկերներից, Թուրքիան հայտնվեց տնտեսական ճգնաժամում, որից դուրս գալու համար հարկավոր էր ընդլայնել միջազգային տնտեսական գործընկերների շրջանակը: Այս միտումը հատկապես ընդգծվեց 2016-ի հեղաշրջման փորձից հետո, երբ ընդդիմության նկատմամբ բռնաճնշումները, ազգայնական տարրերի ակտիվացումը ավելի խորացրին անվստահությունը Թուրքիայի և վերջինիս արևմտյան դաշնակիցների միջև, փակուղի մտան ԵՄ հետ անդամակցության շուրջ բանակցությունները:

Սա Թուրքիայի իշխանություններին ստիպեց նոր գործընկերներ փնտրել այլ տարածաշրջաններում՝ Ասիայում, Աֆրիկայում, Մերձավոր Արևելքում՝ ի դեմս Ռուսաստանի, Չինաստանի, Պակիստանի և այլոց: Արդյունքում Անկարան սկսեց Չինաստանին դիտարկել որպես այն այլընտրանքային գերտերությունը, որը կարող

¹¹⁸ China mounts air exercise with Turkey, U.S. says, By Jim Wolf, OCTOBER 8, 2010, <https://www.reuters.com/article/us-china-turkey-usa-idUSTRE6975HC20101008> (այցելվել է 13.09.2021թ.):

¹¹⁹ Chinese firm under U.S. sanctions wins Turkish missile deal, By Ece Toksabay, SEPTEMBER 27, 2013, <https://www.reuters.com/article/us-turkey-china-defence-idUSBRE98Q0SC20130927> (այցելվել է 13.09.2021թ.):

է տնտեսական կապերի, ներդրումների և ենթակառուցվածքների միջոցով Թուրքիայի համար նոր տնտեսական հնարավորություններ բացել: Անկարան ձգտում է լավագույնս դիրքավորվել Չինաստանի «Գոտի և ճանապարհ» նախագծում և ակտիվորեն խրախուսում է դրա բաղադրիչներից մեկի՝ «Միջին միջանցքի» գաղափարը¹²⁰, որտեղ Թուրքիան հանդես է գալիս որպես կոմունիկացիոն խաչմերուկ:

Զուգահեռաբար ակտիվանում են երկու երկրների միջև բարձր մակարդակի քաղաքական շփումները: Թուրքիան ակտիվորեն մասնակցում է «Գոտի և ճանապարհ» նախագծի շրջանակներում անցկացվող միջոցառումներին ու համաժողովներին: Միայն վերջին տասնամյակի ընթացքում էրդողանը վարչապետի և նախագահի կարգավիճակում Չինաստան է այցելել 4 անգամ՝ 2012, 2015, 2017, 2019 թվականներին, իսկ 2015-ից ի վեր ՉԺՀ նախագահ Սի Ծինփինի հետ ևս 4 անգամ հանդիպել է G20-ի շրջանակներում¹²¹:

Պատահական չէ, որ 2021-ի մարտին ՉԺՀ արտգործնախարար Վան Յիի տարածաշրջանային այցի շրջանակներում, երբ Իրանում ստորագրվեց հայտնի համաձայնագիրը, Չինաստանի արտգործնախարարի կարևոր կանգառներից մեկը Թուրքիայում էր: Այստեղ նա գոհունակություն հայտնեց երկու երկրների միջև ռազմավարական համագործակցության դրական դինամիկայի կապակցությամբ՝ նշելով, որ Չինաստանը աջակցում է Թուրքիայի անկախությանն ու ինքնիշխանությանը, այդ թվում՝ սեփական սոցիալական, տնտեսական և քաղաքական զարգացման համակարգի ինքնուրույն ընտրության հարցերում: Թուրքիայի արտգործնախարար Չավուշօղլուն իր հերթին հավաստիացնում էր, թե Թուրքիան երբեք չի ներգրավվի ՉԺՀ նկատմամբ որևէ թշնամական գործողության մեջ, ինչպես նաև կարևորում էր թուրքական «Միջին միջանցք» ծրագրի և չինական «Գոտի և ճանապարհ» նախաձեռնության համադրումը¹²²:

Տարածաշրջանային հարցերում Թուրքիայի վերջին տարիների վարքագիծը, որը ենթադրում է ավելի ինքնուրույն, բազմավեկտոր արտաքին քաղաքականություն և միտված է արևմտյան դաշնակիցների, առաջին հերթին՝ ԱՄՆ-ի ազդեցության թուլացմանը, մեծ հաշվով համընկնում է Մերձավոր Արևելքում և Ասիական աշխարհամասում ԱՄՆ ազդեցության նվազեցման՝ ՉԺՀ ծրագրերի հետ: Մյուս կողմից՝ Թուրքիայի դիրքավորումը որպես այլընտրանքային

¹²⁰ TRANS-CASPIAN INTERNATIONAL TRANSPORT ROUTE, Middle Corridor, <https://middlecorridor.com/en> (այցելվել է 13.09.2021թ.):

¹²¹ 50 years on, Turkish-Chinese ties grow stronger, Fuat Kabakci, 25.03.2021, <https://www.aa.com.tr/en/economy/50-years-on-turkish-chinese-ties-grow-stronger/2187525> (այցելվել է 13.09.2021թ.):

¹²² China, Turkey reject politicization of COVID-19 vaccine cooperation, By Xinhua, Published: Mar 26, 2021 <https://www.globaltimes.cn/page/202103/1219523.shtml> (այցելվել է 13.09.2021թ.):

կոմունիկացիոն հանգույց և այդ նպատակով իրականացվող բազմաթիվ ենթակառուցվածքային նախագծերը համահունչ են Չինաստանի «Նոր մետաքսի ճանապարհ» ծրագրի նպատակներին: Թերևս նաև սրանով է պայմանավորված այն, որ Պեկինը ձգտում է ամրապնդել կապերը Անկարայի հետ և աստիճանաբար ավելի մեծ ազդեցություն ձեռք բերել վերջինիս նկատմամբ:

Մյուս կողմից՝ պայմանագրային բազայի տեսանկյունից, Չինաստան-Թուրքիա հարաբերությունները տարածաշրջանում ՉԺՀ մյուս հիմնական գործընկերների համեմատ գտնվում են ավելի ցածր ռազմավարական մակարդակում: Թուրքիան թեև Չինաստանի հետ ունի «ռազմավարական համագործակցության հարաբերությունների» պայմանագիր, սակայն ըստ երկրների հետ հարաբերությունների պայմանագրային հիմքերի չինական դասակարգման՝ այն զիջում է «համապարփակ ռազմավարական գործընկերության» հարաբերություններին, ինչպիսիք առկա են Իրանի, Սաուդյան Արաբիայի, Եգիպտոսի և տարածաշրջանի ևս մի քանի երկրների պարագայում: Միաժամանակ հարկ է նշել, որ երկու երկրների շահերը մի շարք տարածաշրջանային և գլոբալ հարցերի շուրջ զգալիորեն հակասում են:

Չինաստանն ու Թուրքիան հակառակ դիրքորոշումներ ունեն տարածաշրջանային մի շարք հիմնահարցերի և հակամարտությունների վերաբերյալ՝ Սիրիա, Իրաք, Աֆղանստան, Լիբիա և այլն: Օրինակ Սիրիայում Չինաստանը պաշտպանում է Ասադի իշխանությունը և այդ նպատակով ՄԱԿ-ի Անվտազության խորհրդում 10 անգամ կիրառել է վետոյի իր իրավունքը, մինչդեռ Թուրքիան հանդես է գալիս հակառակ դիրքերից¹²³: Սակայն Ռուսաստանի, ինչպես նաև Իրանի հետ Թուրքիայի հարաբերությունների վերջին տարիների փորձը, այդ թվում՝ Սիրիային վերաբերող հարցերում, ցույց է տալիս, որ Թուրքիան կարող է բավական ճկուն քաղաքականություն վարել:

Մյուս ոլորտը, որտեղ Թուրքիայի և Չինաստանի շահերը հակասում են, ռազմական ԱԹՍ-ների արտադրությունն է: Թուրքական ԱԹՍ-ները իրենց որակով և արդյունավետությամբ կարող են այդ զինատեսակի միջազգային շուկայում լուրջ մրցակից դառնալ, ինչին նպաստում է նաև վերջին տարիներին դրանց արդյունավետ կիրառումը Արցախում, Լիբիայում, Սիրիայում¹²⁴:

Ընդհանուր առմամբ՝ տարածաշրջանային հարցերի վերաբերյալ Թուրքիայի և Չինաստանի մոտեցումների միջև առկա է առանցքային հակասություն:

¹²³ What an Iran-China pact means for Turkey, Ali Bakir, 18 AUG 2020, <https://www.trtworld.com/opinion/what-an-iran-china-pact-means-for-turkey-38903> (այցելվել է 13.09.2021թ.):

¹²⁴ Contemporary China-Turkey Relations, JAKUB KLEPEK, JANUARY 22, 2021, <https://ine.org.pl/en/contemporary-china-turkey-relations/> (այցելվել է 13.09.2021թ.):

Չինաստանը ձգտում է «Գոտի և ճանապարհ» նախագծում ընդգրկված ողջ տարածաշրջանում, այդ թվում՝ Մեծ Մերձավոր Արևելքում խաղաղություն և կայունություն հաստատել և այդպիսով նպաստավոր պայմաններ ստեղծել չինական տնտեսական, ապա նաև քաղաքական էքսպանսիայի համար: Թուրքիան հաճախ հանդես է գալիս որպես տարածաշրջանում ապակայունացնող գործոն, իր ռեգիոնալ շահերը հաճախ առաջ է մղում ռազմական, գաղափարական, այդ թվում՝ իսլամական և պանթուրքական գաղափարների տարածման միջոցներով, ինչը հակասում է Պեկինի վերոհիշյալ քաղաքականությանը: Ըստ էության՝ այնտեղ, որտեղ Պեկինին հետաքրքրում է տնտեսական համագործակցությունը, խաղաղությունն ու կայունությունը, Թուրքիային հետաքրքրում է անկայունությունը, ռազմական ներխուժման կամ ներկայության, գաղափարական ազդեցության համար նպաստավոր պայմանների առկայությունը: Սա վերաբերում է ինչպես Մերձավոր Արևելքին, այնպես էլ Հարավային Կովկասին և Կենտրոնական Ասիային:

Ինչ վերաբերում է Իրան-Չինաստան վերջերս ստորագրված համաձայնագրի հնարավոր ազդեցությանը Չինաստան-Թուրքիա հարաբերությունների վրա, ապա այն Թուրքիայում կարող է որոշակի մտահոգություններ առաջացնել: Առաջին հերթին Իրանը Թուրքիայի գլխավոր տարածաշրջանային մրցակիցն է՝ ռազմական, գաղափարախոսական, ազդեցության համար պայքարի և այլ տեսանկյուններից: Այն, որ Չինաստանը նման ծավալուն և բազմոլորտ համաձայնագիր է ստորագրում տարածաշրջանի երկրներից հենց Իրանի հետ, խոսում է տարածաշրջանային հիմնական գործընկերոջ վերաբերյալ վերջինիս ռազմավարական ընտրության մասին, ինչը հակասում է չինական «Գոտի և ճանապարհ» ծրագրի գլխավոր տարածաշրջանային հանգույցը դառնալու՝ Թուրքիայի նպատակներին:

Ինչպես արդեն նշվեց, ըստ տարբեր գնահատականների՝ Չինաստանի հետ համաձայնագիրը նախատեսում է հսկայածավալ ներդրումներ Իրանի տնտեսության մեջ, հետևաբար Թուրքիային չի կարող չմտահոգել, թե ստացվող լրացուցիչ եկամուտները Իրանի իշխանությունները ինչի վրա են ծախսելու: Ամենայն հավանականությամբ Թեհրանը դրանք կշարունակի ծախսել տարածաշրջանում իր ազդեցության գոտիներում սեփական դիրքերը, այդ թվում՝ ուղղակի և անուղղակի ռազմական ներկայությունն ամրապնդելու նպատակով՝ Սիրիա, Իրաք, Լիբիա, Լիբանան, Պաղեստին և այլն, ինչն ուղղակիորեն հակասում է Անկարայի տարածաշրջանային շահերին:

Մյուս կողմից՝ Չինաստանի հետ ռազմատեխնիկական համագործակցության նոր հնարավորությունները, այդ թվում՝ Իրանի նկատմամբ ՄԱԿ-ի կողմից զենքի էմբարգոյի ժամկետի սպառման համատեքստում, Իրանին հնարավորություն

կտան զգալիորեն ամրապնդելու իր ռազմական ներուժը, ինչպես նաև տարածաշրջանային շուկաներում լուրջ մրցակից դառնալու թուրքական աճող ռազմարդյունաբերության համար: Չինական զենքը արդեն իսկ որոշ տարածաշրջանային հակամարտություններում լայնորեն կիրառվում է թուրքական պրոքսի ուժերի դեմ՝ Սիրիայում, Լիբիայում, հետևաբար Պեկինի կողմից Իրանին նոր զինատեսակների մատակարարումը Թուրքիայի համար լրացուցիչ գլխացավանք կդառնա¹²⁵:

3.2. Տնտեսական հարաբերությունների առանձնահատկություններն ու Թուրքիայի դերը Չինաստանի ինտեգրացիոն ծրագրերում. «Գոտի և ճանապարհ»

Ինչպես նշվեց, տարածաշրջանային ազդեցության և աշխարհաքաղաքական շահերի առաջխաղացման համար Չինաստանը առաջնահերթություն է տալիս տնտեսական գործիքակազմին, ինչպես նաև «Գոտի և ճանապարհ» նախագծի շրջանակներում իրականացվող ենթակառուցվածքային և ներդրումային քաղաքականությանը: Սրանք կարևոր ազդեցություն և նշանակություն ունեն նաև Չինաստան-Թուրքիա հարաբերությունների համատեքստում, հետևաբար վերլուծության այս հատվածում փորձենք հասկանալ երկու երկրների միջև տնտեսական հարաբերությունների առանձնահատկությունները և Թուրքիայի դերակատարությունը չինական «Գոտի և ճանապարհ» ծրագրում:


Ըստ Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) տվյալների բազայի՝ 2019-ին Չինաստանի և Թուրքիայի միջև առևտրի շրջանառությունը կազմել է շուրջ 20,8 մլրդ ԱՄՆ դոլար, ինչը մի փոքր զիջում է նույն ժամանակահատվածում Իրան-ՉԺՀ առևտրի ծավալներին (շուրջ 23 մլրդ դոլար): Սակայն, եթե Իրանի հետ Չինաստանի առևտուրը որոշակիորեն հավասարակշռված է, իսկ հաճախ առևտրային բալանսը Իրանի օգտին է, ապա Թուրքիայի պարագայում բալանսը զգալիորեն շեղված է Չինաստանի օգտին: Այսպես, նույն 2019-ի տվյալներով Չինաստանից դեպի Թուրքիա արտահանումը կազմել է 17,3 մլրդ դոլար, իսկ ներմուծումը՝ ընդամենը շուրջ 3,5 մլրդ դոլար, մինչդեռ Իրանի պարագայում այդ ցուցանիշները կազմում էին համապատասխանաբար արտահանումը՝ 9,6, ներմուծումը՝ 13,4 մլրդ դոլար: Այսինքն՝ Թուրքիան Չինաստանի համար ավելի շուտ սպառման խոշոր շուկա է, քան հավասարազոր առևտրային գործընկեր¹²⁶:

¹²⁵ What an Iran-China pact means for Turkey, Ali Bakir, 18 AUG 2020, <https://www.trtworld.com/opinion/what-an-iran-china-pact-means-for-turkey-38903> (այցելվել է 13.09.2021թ.):

¹²⁶ IMF Data, <https://data.imf.org/regular.aspx?key=61013712> (այցելվել է 13.09.2021թ.):

Եթե Իրանի տնտեսության կառուցվածքը որոշակիորեն փոխարացնում է Չինաստանի տնտեսությունը, մասնավորապես հիմնված է հումքի, էներգակիրների արտահանման և նոր տեխնոլոգիաների, պատրաստի արտադրանքի ներմուծման վրա, ապա Թուրքիայի տնտեսությունը այս առումով նման է Չինաստանի տնտեսությանը՝ հիմնված էներգակիրների ներմուծման և պատրաստի արտադրանքի արտահանման վրա: Հետևաբար, որոշակի առումով տնտեսական տեսանկյունից Թուրքիան հանդիսանում է Չինաստանի մրցակիցը, այլ ոչ թե գործընկերը, թեև այդ մրցակցությունը խիստ անհավասար է՝ հօգուտ Պեկինի:

Այդ մրցակցությունը նաև առկա է Մեծ Մերձավոր Արևելքի արտահանման շուկաներում. օրինակ, ըստ ԱՄՀ տվյալների բազայի՝ 2020-ին Թուրքիայի արտահանումը դեպի Մերձավոր Արևելք և Կենտրոնական Ասիա կազմել է շուրջ 41,3 մլրդ դոլար (արտահանման շուրջ 24%-ը), իսկ Չինաստանի արտահանումը դեպի նույն տարածաշրջան կազմել է շուրջ 170,7 մլրդ դոլար (արտահանման ընդամենը 6,5%-ը): Մերձավոր Արևելքի և Կենտրոնական Ասիայի երկրների 2020-ի ներմուծման շուրջ 17%-ը բաժին է ընկնում ՉԺՀ-ին, մինչդեռ Թուրքիային՝ ընդամենը 4%-ը, արտահանման շուրջ 13%-ն ուղղվել է դեպի ՉԺՀ, իսկ դեպի Թուրքիա՝ ընդամենը շուրջ 4%-ը: Ակնհայտ է, որ Չինաստանը այս տարածաշրջանում տնտեսական ազդեցության էքսպանսիայի շատ ավելի մեծ ներուժ ունի և միջնաժամկետ հեռանկարում կարող է Թուրքիային առհասարակ դուրս մղել տարածաշրջանի շուկաներից: Տարածաշրջանի նկատմամբ տնտեսական ազդեցության կորուստը չի կարող չազդել Թուրքիայի՝ առաջատար տարածաշրջանային գերտերություն դառնալու, պանթուրքական և պանիսլամական ծրագրերի վրա:



127

Միաժամանակ պետք է նշել, որ ի տարբերություն Իրանի՝ Թուրքիայի տնտեսությունը ՉԺՀ-ից մեծ կախվածության մեջ չի գտնվում: Թուրքիան շատ ավելի մեծ տնտեսական կախվածություն ունի ԵՄ-ից և Արևմուտքի երկրներից, ինչը Անկարային ավելի խոցելի է դարձնում հենց իր արևմտյան դաշնակիցների համար: Սակայն վերջին տարիներին Էրդողանի վարած քաղաքականության արդյունքում այս միտումը կարող է փոփոխությունների ենթարկվել: Չինաստանը հետզհետե ավելի ակտիվորեն է ներգրավվում Թուրքիայի տնտեսության տարբեր ճյուղերում և մեծ հետաքրքրություն է ցուցաբերում Թուրքիայի նախաձեռնած մի շարք տնտեսական, հատկապես ենթակառուցվածքային ծրագրերի նկատմամբ:

2016-ից մինչ օրս Չինաստանն ու Թուրքիան ստորագրել են ավելի քան 10 երկկողմ համաձայնագրեր, այդ թվում՝ առողջապահության և միջուկային էներգիայի ոլորտում¹²⁸: 2016-2019թթ. Չինաստանը Թուրքիայում ենթակառուցվածքների ոլորտում շուրջ 3 մլրդ դոլարի ներդրում է կատարել և նախատեսում էր մինչև 2021-ը այդ թիվը կրկնապատկել՝ հասցնելով 6 մլրդ դոլարի¹²⁹: Հաշվի առնելով վերջին տարիներին Թուրքիայի տնտեսության դժվարությունները, ինչպես նաև թուրքական լիրայի շարունակական

¹²⁷ IMF Data, <https://data.imf.org/regular.aspx?key=61013712> (այցելվել է 13.09.2021թ.):

¹²⁸ https://www.tbmm.gov.tr/develop/owa/kanunlar_sd.sorgu_yonlendirme?Kanun_no=&k_Baslangic_Tarihi=&k_Bitis_Tarihi=&r_Baslangic_Tarihi=&r_Bitis_Tarihi=&sorgu_kelime=%E7in (այցելվել է 13.09.2021թ.):

¹²⁹ China aims to double investments in Turkey to \$6 billion by 2021, MAR 29, 2019, <https://www.dailysabah.com/economy/2019/03/28/china-aims-to-double-investments-in-turkey-to-6-billion-by-2021> (այցելվել է 13.09.2021թ.):

արժեզրկումը, Անկարան տնտեսական կայունությունը պահպանելու նպատակով հաճախ օգտվում է չինական վարկերից և ներդրումներից:

Օրինակ, 2018-ին, երբ թուրքական լիրայի արժեզրկումը հասավ 40%-ի, նույն ժամանակաշրջանում Չինաստանի առևտրային բանկը Թուրքիայի կառավարությանը 3,6 մլրդ դոլարի վարկ տրամադրեց՝ ընթացիկ էներգետիկ և տրանսպորտային ծրագրերի շարունակականությունն ապահովելու նպատակով¹³⁰: 2019-ի հունիսին Չինաստանի կենտրոնական բանկը Թուրքիայի կենտրոնական բանկին փոխանցել է 1 մլրդ դոլար, ինչը հետաքրքիր զուգադիպությամբ համընկնում է Ստամբուլի քաղաքապետի ընտրություններում Էրդողանի թիմակցի ծանր պարտության և լիրայի արժեզրկման նոր շրջափուլի հետ¹³¹: Ակնհայտ է, որ Թուրքիան փորձում է Չինաստանի հետ տնտեսական համագործակցությունն օգտագործել նաև ներքաղաքական և տնտեսական կայունության ապահովման նպատակով: Այն հնարավորություն է տալիս հրաժարվել եվրոպական և ամերիկյան որոշ ներդրումներից, որոնք հաճախ շաղկապված են լինում ժողովրդավարեցման և այլ նախապայմանների հետ:

2015-ին չինական կոնսորցիումներից մեկը ձեռք է բերել Ստամբուլում գտնվող Թուրքիայի երրորդ ամենամեծ կոնտեյներային տերմինալի բաժնեմասի 65%-ը, որը կարևոր դիրք է զբաղեցնում Թուրքիայում կոնտեյներային փոխադրումների ոլորտում¹³²: 2020-ի հունվարին չինական ընկերությունը ձեռք է բերել Բոսֆորի վրա կառուցված Յավուզ Սուլթան Սելիմ կամրջի բաժնեմասերի 51%-ը, որի կառավարումից հրաժարվել է թուրք-իտալական կոնսորցիումը¹³³:

Չինաստանը Թուրքիայում ևս մի քանի խոշոր ներդրումներ է կատարել նախորդ տարիների ընթացքում. Հունությունի ածուխով աշխատող էլեկտրակայանի կառուցման համար, որը պետք է ապահովի Թուրքիայի էլեկտրաէներգիայի արտադրության 3%-ը, չինական կողմը 1,7 մլրդ դոլարի ներդրում է կատարել¹³⁴:

¹³⁰ Chinese bank to loan \$3.6 billion to Turkey, 27.07.2018, <https://www.aa.com.tr/en/energy/investments/chinese-bank-to-loan-36-billion-to-turkey/21019> (այցելվել է 13.09.2021թ.); Spotlight:Erdogan's visit sign of aligned Turkish-Chinese interests: experts, Xinhua| 2019-07-02, http://www.xinhuanet.com/english/2019-07/02/c_138193140.htm (այցելվել է 13.09.2021թ.):

¹³¹ Turkey Got a \$1 Billion Foreign Cash Boost From China in June, Kerim Karakaya, Asli Kandemir, August 09 2019, <https://www.bloombergquint.com/global-economics/turkey-got-1-billion-from-china-swap-in-june-boost-to-reserves> (այցելվել է 13.09.2021թ.):

¹³² Chinese consortium acquires 65 pct stake in Turkish port terminal, September 17 2015, <https://www.hurriyetdailynews.com/chinese-consortium-acquires-65-pct-stake-in-turkish-port-terminal-88636> (այցելվել է 13.09.2021թ.):

¹³³ Chinese investors to buy majority stakes in Turkey's bridge, highway, Jan 10 2020, https://ahvalnews.com/yavuz-sultan-selim-bridge/chinese-investors-buy-majority-stakes-turkeys-bridge-highway?language_content_entity=en (այցելվել է 13.09.2021թ.):

¹³⁴ China's power plant project with direct investment in Turkey starts construction, Xinhua, 2019-09-23, http://www.xinhuanet.com/english/2019-09/23/c_138413218.htm (այցելվել է 13.09.2021թ.):

Որոշ տեղեկությունների համաձայն՝ Անկարան պատրաստվում է միջուկային ոլորտում չինական պետական կազմակերպության հետ համաձայնագիր ստորագրել՝ Թուրքիայում երրորդ ատոմակայանի կառուցման նպատակով¹³⁵:

Թուրքիայում չինական կապիտալի ներհոսքը հանգեցնում է նաև չինական ազդեցության աճին, տուրիզմի և երկկողմ շփումների ակտիվացմանը: Օրինակ, 2019-ին Ստամբուլի հասարակական տրանսպորտի կանգառները կահավորվել են չինարեն թարգմանություններով¹³⁶: Ստամբուլի օդանավակայանը հայտարարվել է Աշխարհի առաջին «չինացիների համար հարմարեցված» օդանավակայանը¹³⁷: Թուրքական ավիաուղիները վերջին տարիներին զգալիորեն ավելացրել են ուղիղ թռիչքները դեպի չինական քաղաքներ¹³⁸:

Եվրոպայում և ԱՄՆ-ում մեծ հակասությունների արժանացած չինական «Հուավեյ» ընկերությունը Թուրքիայի տեխնոլոգիական զարգացման ոլորտում հսկայածավալ ներդրումներ է կատարում: Թուրքիայում խոշոր ներդրումներ են կատարել Չինաստանի այնպիսի տեխնոլոգիական հսկաներ, ինչպիսիք են Քսիաոմին, Վիվոն, Օպպոն և այլն: Թուրքիայում հեռահաղորդակցության ոլորտում առաջատար «Թուրքսել» ընկերությունը ստանձնել է այդ երկրում 5G ցանցի զարգացման պատասխանատվությունը և այդ հարցում համագործակցում է չինական «Հուավեյ» ընկերության հետ: Այս ընկերությունները նախատեսում են առաջիկա մի քանի տարիների ընթացքում համատեղ ապահովել 5G հասանելիություն Թուրքիայի բնակչության համար¹³⁹: Մեկ այլ չինական տեխնոլոգիական կազմակերպություն՝ ZTE-ն դեռ 2016-ին ձեռք է բերել Թուրքիայի հեռահաղորդակցության սարքավորումների հիմնական արտադրող «Նեթաս» կազմակերպության 48%-ը¹⁴⁰. այս կազմակերպությունը իրականացնում է մի շարք

¹³⁵ Turkey to build 3rd nuclear plant with China: Erdogan, Hüseyin Erdoğan, 19.06.2018, <https://www.aa.com.tr/en/energy/nuclear/turkey-to-build-3rd-nuclear-plant-with-china-erdogan/20544> (այցելվել է 13.09.2021թ.):

¹³⁶ The Xinjiang Crisis and Sino-Turkish Relations During the Pandemic: Part One, Ondřej Klimeš, February 26, 2021, <https://jamestown.org/program/the-xinjiang-crisis-and-sino-turkish-relations-during-the-pandemic-part-one/> (այցելվել է 13.09.2021թ.):

¹³⁷ Istanbul Airport became the "China Friendly Airport", Press release, 22nd September 2020, <https://www.routesonline.com/airports/14915/iga-istanbul-airport/news/293922/istanbul-airport-became-the-china-friendly-airport/> (այցելվել է 13.09.2021թ.):

¹³⁸ Turkish Airlines raises number of flights to China's Xian, JAN 22, 2020, <https://www.dailysabah.com/tourism/2020/01/22/turkish-airlines-raises-number-of-flights-to-chinas-xian> (այցելվել է 13.09.2021թ.):

¹³⁹ This new \$12 billion airport will be the biggest in the world — take a look inside, Apr 8 2019, <https://www.cnbc.com/2019/04/08/photos-inside-12-billion-istanbul-new-airport-biggest-in-the-world.html> (այցելվել է 13.09.2021թ.):

¹⁴⁰ ZTE buys 48 pct Netas for \$101 mln, eyes expansion in Turkey, Reuters, DECEMBER 6, 2016, <https://www.reuters.com/article/zte-netas-telekom-acquisition-idUSL4N1E10WY> (այցելվել է 13.09.2021թ.):

առանցքային ծրագրեր, այդ թվում՝ Ստամբուլի նոր օդանավակայանի հեռահաղորդակցության կազմակերպումն ու ազգային առողջապահական տվյալների թվայնացումը:

Ուշագրավ է, որ թուրքական շուկայում չինական «Հուավեյ» ընկերության մասնաբաժինը 2017-ի 3%-ից 2019-ին հասել է 30%-ի: Այս ընկերությունը, Չինաստանի կառավարության և ՉՈՒ-ի հետ համագործակցության պատճառով ԱՄՆ-ի և Թուրքիայի այլ դաշնակիցների կողմից համարվում է անվտանգության սպառնալիք, մինչդեռ Թուրքիայում ազատ գործունեություն է ծավալում: Սա կարող է Թուրքիայի դաշնակիցների շրջանում որոշակի մտահոգություն առաջացնել, հաշվի առնելով հեռահաղորդակցության ենթակառուցվածքները հետախուզական նպատակներով օգտագործելու ռիսկերը, հատկապես եթե նկատի ունենանք, որ Թուրքիայում ՉԼՄ-ների և հեռուստատեսության նկատմամբ էրդողանի իշխանության խիստ վերահսկողության պայմաններում բնակչության մի ստվար հատված արժանահավատ տեղեկատվություն ստանալու համար նախապատվությունը տալիս է ինտերնետին և սոցիալական ցանցերին¹⁴¹: Միաժամանակ, չինական տեխնոլոգիաների ներգրավումը էրդողանին հնարավորություն է տալիս նորագույն տեխնոլոգիաների միջոցով հասարակության վերահսկման և տոտալիտար կառավարման որոշակի գործիքակազմ ստանալ՝ ընդօրինակելով նաև այս հարցում չինական փորձը:

Չինաստանն իր հերթին Թուրքիայում ներդրումներ է կատարում այնպիսի ոլորտներում, որոնց նկատմամբ վերահսկողության աստիճանաբար ավելացումը երկարաժամկետ հեռանկարում Պեկինին Թուրքիայում նաև քաղաքական ազդեցության լծակներ է տալու: Խոսքն առաջին հերթին ռազմավարական նշանակություն ունեցող ակտիվների մասին է՝ բնական ռեսուրսներ, նավահանգիստներ, օդանավակայաններ, տրանսպորտային ենթակառուցվածքներ և հեռահաղորդակցություն¹⁴²: Այսպիսի հետաքրքիր օրինակներից մեկն է չինական խոշոր ներդրումը Ստամբուլի նոր և Թուրքիայի ամենամեծ օդանավակայանում, որը շահագործման է հանձնվել 2018-ին: Համաձայնագրով նախատեսվում է, որ Թուրքիան առաջիկա 25 տարիների

¹⁴¹ Erdogan Is Turning Turkey Into a Chinese Client State, By Ayca Alemdaroglu and Sultan Tepe, SEPTEMBER 16, 2020, <https://foreignpolicy.com/2020/09/16/erdogan-is-turning-turkey-into-a-chinese-client-state/> (այցելվել է 13.09.2021թ.):

¹⁴² 'Debt trap' diplomacy is a card China seldom plays in Belt and Road initiative, BRAD GLOSSERMAN, Sep 1, 2020, <https://www.japantimes.co.jp/opinion/2020/09/01/commentary/debt-trap-diplomacy-bric-china/> (այցելվել է 13.09.2021թ.):

ընթացքում պետք է Չինաստանին շուրջ 22 մլրդ եվրո վերադարձնի¹⁴³, ինչը նշանակում է Պեկինից երկարաժամկետ կախվածություն:

Ընդհանուր առմամբ՝ Չինաստանը առանձնահատուկ հետաքրքրություն ունի Թուրքիայում իրականացվող հատկապես ենթակառուցվածքային ծրագրերի նկատմամբ, որոնք տեղավորվում են «Գոտի և ճանապարհ» չինական նախագծի տրամաբանության շրջանակներում: Դեռևս 2015-ին չինական «Մետաքսի ճանապարհ» նախագծի և թուրքական «Միջին միջանցք» նախագծերի համադրման շուրջ հուշագիր է ստորագրվել, որի նպատակն էր համատեղել տրանսկասպյան միջազգային տրանսպորտային ճանապարհը չինական «Գոտի և ճանապարհ» ծրագրի հետ: Հետագայում, տրանսկասպյան միջանցքի շրջանակներում Թուրքիան և Ադրբեջանը ավարտին հասցրին Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղային նախագիծը¹⁴⁴: Հետաքրքրական է, որ այս միջանցքով կոնտեյներներով բեռնված առաջին գնացքը Ստամբուլից դեպի Չինաստանի կենտրոնական հատված է հասել 2020-ի դեկտեմբերի 4-19-ը՝ 44-օրյա պատերազմից կարճ ժամանակ անց:

Թուրքիան ձգտում է «Միջին միջանցքը» դարձնել չինական «Գոտի և ճանապարհ» նախագծի կենտրոնական ուղղության հիմնական տրանսպորտային հանգույցը՝ այդպիսով Արևելք-Արևմուտք ժամանակակից հաղորդակցության գոտում զբաղեցնելով կենտրոնական և առանցքային դերակատարություն: Այս ծրագրի շրջանակներում նախատեսվում է, որ Չինաստանի և Թուրքիայի միջև տրանսպորտային հաղորդակցության ժամկետը սովորական 1 ամսից կրճատվի մինչև 12 օր, իսկ հետագայում Ստամբուլում Մարմարա թունելի միջոցով Չինաստանի և Արևմտյան Եվրոպայի միջև երկաթուղային հաղորդակցության ժամկետը կազմի 18 օր¹⁴⁵:

¹⁴³ Contemporary China-Turkey Relations, Jakub Klepek, 22.01.2020, <https://ine.org.pl/wp-content/uploads/2021/01/Contemporary-China-Turkey-Relations.pdf> (այցելվել է 13.09.2021թ.):

¹⁴⁴ 50 years on, Turkish-Chinese ties grow stronger, Fuat Kabakci, 25.03.2021, <https://www.aa.com.tr/en/economy/50-years-on-turkish-chinese-ties-grow-stronger/2187525> (այցելվել է 13.09.2021թ.):

¹⁴⁵ Contemporary China-Turkey Relations, Jakub Klepek, 22.01.2020, <https://ine.org.pl/wp-content/uploads/2021/01/Contemporary-China-Turkey-Relations.pdf> (այցելվել է 13.09.2021թ.):

Տրանսկասպյան միջազգային տրանսպորտային ուղի



146

Ծրագրերի իրականացման համար Թուրքիան ակտիվորեն աշխատում է չինական ընկերությունների հետ, փորձում է ներգրավել չինական կապիտալը: Այդ ներդրումները ոչ միայն նպաստում են «Գոտի և ճանապարհ» ծրագրում Թուրքիայի դիրքերի ամրապնդմանը, այլև ապահովում են Թուրքիայի ներքին և տարածաշրջանային ենթակառուցվածքների զարգացումը: Դեռ 2014-ին չինական ընկերությունները ավարտին հասցրին Անկարա-Ստամբուլ արագընթաց երկաթուղու շինարարությունը: Բացի այդ Թուրքիան նախաձեռնել է սեփական երկաթուղային ցանցի արդիականացման խոշոր ծրագիր, ըստ որի՝ նախատեսվում է մինչև 2023թ-ը այդ ուղղությամբ շուրջ 45 մլրդ դոլարի ներդրում ներգրավել¹⁴⁷: Անկարան փորձում է ներգրավել նաև տարածաշրջանի այլ երկրներում իրականացվող ենթակառուցվածքային ծրագրերին. ուշագրավ է, օրինակ, Թուրքմենստանում շուրջ 2 մլրդ դոլար արժողությամբ Թուրքմենբաշիի նավահանգստի շինարարությունը թուրքական ընկերության կողմից¹⁴⁸:

Այս, հետագայում Բաքու-Թբիլիսի-Կարս, այժմ իրականացվող մի շարք այլ երկաթուղային ծրագրերի, այդ թվում՝ Կարս-Իզմիր-Նախիջևան ծրագրի միջոցով, Թուրքիան փորձում է ենթակառուցվածքային առավելություն ստանալ տարածաշրջանի մյուս երկրների նկատմամբ: Եթե նախկինում դրա համար առկա էին որոշ ռիսկեր և խոչընդոտներ, մասնավորապես կային անվտանգային որոշ մտահոգություններ՝ Արցախում պատերազմի հնարավոր բռնկում, ռուս-վրացական հակամարտության սրում, այժմ, արցախյան 44-օրյա պատերազմից հետո, այդ

¹⁴⁶ TRANS-CASPIAN INTERNATIONAL TRANSPORT ROUTE, Middle Corridor, <https://middlecorridor.com/en> (այցելվել է 13.09.2021թ.):

¹⁴⁷ Case study: the Baku-Tbilisi-Kars railway, 18/08/2017, <https://www.transport-exhibitions.com/Market-Insights/Turkey-and-Eurasia/Case-study-the-Baku-Tbilisi-Kars-railway> (այցելվել է 13.09.2021թ.):

¹⁴⁸ Turkish company completes seaport project in Turkmenbashi city, By Huseyn Hasanov, 2 May 2018 <https://en.trend.az/casia/turkmenistan/2896894.html> (այցելվել է 13.09.2021թ.):

ռիսկերը նվազել են: Թուրքիան և Ադրբեջանը փորձում են «Միջին միջանցք» ու «Գոտի և ճանապարհ» նախագծերում ներառել նաև այսպես կոչված «Չանգեզուրի միջանցքը»:

Պատահական չէ, որ Թուրքիան փորձում է տպավորություն ստեղծել, թե իբր հանձնառու է Հարավային Կովկասում երկարաժամկետ խաղաղություն և կայունություն հաստատելու հարցում: Անկարան դա պատկերացնում է բացառապես սեփական պայմանների և օրակարգի շրջանակներում, ուստի պարբերաբար հանդես է գալիս Հայաստանի հետ հարաբերությունները կարգավորելու, տարածաշրջանում համագործակցության նոր ձևաչափերի հիմնման «3+3 ձևաչափ», «5+1 ձևաչափ» և այլն, գաղափարներով: Այս կերպ Անկարան փորձում է հիմնավորել Արևելք-Արևմուտք ենթակառուցվածքային ծրագրերում և հատկապես «Միջին միջանցքում» իր կենտրոնական դերակատարությունը՝ միաժամանակ չեզոքացնելով իր այդպիսի հավակնություններին սպառնացող այն ռիսկերը, որոնք կարող են ի հայտ գալ ռուս-վրացական, հայ-ադրբեջանական հակամարտությունների սրման պարագայում¹⁴⁹:

Միաժամանակ պետք է նշել, որ Թուրքիայի տարածաշրջանային, այդ թվում՝ ենթակառուցվածքային շահերն ու ծրագրերը միշտ չէ, որ համընկնում են, իսկ երբեմն հակասում են Չինաստանի «Գոտի և ճանապարհ» նախագծի նպատակներին: Օրինակ, Թուրքիան ձգտում է կարևոր հանգույց դառնալ ոչ միայն Չինաստան-Եվրոպա հաղորդակցության ճանապարհին, այլև Կենտրոնական Ասիայից և Կասպյան ավազանից դեպի Եվրոպա էներգակիրների տեղափոխման տեսանկյունից: Սա ուղղակիորեն հակասում է Չինաստանի շահերին, քանի որ վերջինս շահագրգռված է, որպեսզի այդ տարածաշրջանի էներգառեսուրսները անխափան ձևով ուղղվեն դեպի չինական շուկա՝ պահպանելով իր մրցակցային (մենաշնորհային) առավելությունը:

Բացի այդ, Չինաստանը դժվար թե շահագրգռված լինի իր խոշոր ենթակառուցվածքային ծրագրում Թուրքիային չափից ավելի մեծ դերակատարություն և ազդեցություն հատկացնելու հեռանկարում: Չինաստանի համար շատ կարևոր է տարբեր այլընտրանքների առկայությունը, այդ թվում Իրան-Իրաք-Սիրիա, Իրան-Հայաստան-Վրաստան և այլն: Ուստի, Թուրքիայի կողմից այլընտրանքային ճանապարհների և երկրների ապակայունացումը Պեկինը կարող է որպես բացասական ազդակ ընկալել:

¹⁴⁹ Infrastructure cooperation could hold the key to Armenia's future security, Ani Yeghiazaryan, Atlantic Council, JUL 20, 2021 <https://www.atlanticcouncil.org/blogs/ukrainealert/infrastructure-cooperation-could-hold-the-key-to-armenias-future-security/> (այցելվել է 13.09.2021թ.):

Միաժամանակ պետք է գիտակցել, որ Չինաստանը, այնուամենայնիվ, կփորձի ներգրավվածություն ունենալ Թուրքիայի տարածաշրջանային ենթակառուցվածքային ծրագրերին և նախագծերին՝ ձգտելով եթե ոչ վերահսկել, ապա մասնակցություն ապահովել դրանց վերահսկողության նկատմամբ: Խոսքը նաև կարող է վերաբերել այսպես կոչված «Չանգեզուրի միջանցքին», ինչպես նաև Արցախի օկուպացված տարածքներում թուրք-ադրբեջանական որոշ համատեղ ենթակառուցվածքային ծրագրերին: Սակայն Չինաստանի հետաքրքրությունն ու ներգրավվածությունը նաև հաշվի է առնելու թուրք-չինական օրակարգի խնդրահարույց դրվագները, այդ թվում՝ Անկարայից եկող պանթուրքական սպառնալիքներն ու ուղղորների խնդրի շուրջ շահարկումները:

3.3. Պանթուրքական սպառնալիքներն ու ուղղորների խնդիրը

Ինչպես արդեն նշվեց, թեև Թուրքիան՝ շնորհիվ իր աշխարհագրական դիրքի և աշխարհաքաղաքական կշռի, Չինաստանի համար, այդ թվում՝ «Գոտի և ճանապարհ» նախագծի շրջանակներում, հանդիսանում է կարևոր դերակատար և գործընկեր, սակայն երկու երկրների հարաբերություններում առկա են նաև մի շարք կնճոռոտ հարցեր: Թուրքիայի պանթուրքական և պանիսլամական քաղաքականությունն ու ծրագրերը Չինաստանի համար երկարաժամկետ և կենսական սպառնալիք են ներկայացնում, իսկ Անկարայի կողմից ուղղորների խնդրի պարբերաբար շահարկումները, արդյունքում Չինաստանի արևմտյան շրջանների ապակայունացման ռիսկերը Պեկինին ստիպում են Թուրքիայի հետ հարաբերություններում զգուշություն և զսպվածություն ցուցաբերել:

Ուղղորների խնդիրը թերևս ՉԺՀ-Թուրքիա հարաբերությունների ամենակնճոռոտ հարցերից մեկն է: Թուրքիան այդ հարցը պարբերաբար շահարկում է՝ փորձելով դիրքավորվել Չինաստանի թուրքալեզու բնակչության հիմնական պաշտպանի կարգավիճակում, ինչը միանգամայն բխում է Թուրքիայի պանթուրքական ծրագրերի տրամաբանությունից: Սակայն եթե տարիներ առաջ Անկարան այս հարցում չափազանց մեծ ակտիվություն էր դրսևորում և հաճախ հանդես էր գալիս կոշտ գնահատականներով, ապա վերջին տարիներին այդ միտումը փոխվել է:

Օրինակ, 2009-ին, երբ Էրդողանը զբաղեցնում էր Թուրքիայի վարչապետի պաշտոնը, նա նույնիսկ Չինաստանում ուղղորների նկատմամբ վարվող քաղաքականությունն անվանում էր ցեղասպանություն¹⁵⁰: Հետագայում այս գնահատականները աստիճանաբար մեղմվեցին, իսկ վերջին տարիներին

¹⁵⁰ Turkish leader calls Xinjiang killings "genocide", JULY 10, 2009, <https://www.reuters.com/article/us-turkey-china-sb/turkish-leader-calls-xinjiang-killings-genocide-idUSTRE56957D20090710> (այցելվել է 13.09.2021թ.):

Թուրքիան նույնիսկ ձերբակալում է հարյուրավոր ուղուր ակտիվիստների և ուղղակի կամ անուղղակի ձևով վերջիններիս արտահանձնում չինական իշխանություններին¹⁵¹: Անկարան հիմնականում ձերբակալված ուղուրներին արտաքսում է Տաջիկստան կամ կենտրոնական Ասիայի այլ երկրներ, որտեղ տեղի իշխանությունները հեշտությամբ իրագործում են այդ ակտիվիստներին ձերբակալելու և արտահանձնելու՝ Պեկինի պահանջները¹⁵²: Թուրք պաշտոնյաները սկսել են հրապարակավ հանդես գալ Չինաստանի տարածքային ամբողջականության պաշտպանության վերաբերյալ հայտարարություններով:¹⁵³

Ավելին, 2016-ին Թուրքիան կազմակերպեց հայտնի ուղուր քաղաքական ակտիվիստ Աբդուլկադիր Յափչանի ձերբակալությունն ու արտահանձնումը, ով 2001-ից ի վեր բնակվում էր Թուրքիայում և հայտնի էր մի շարք հակաչինական ակցիաների կազմակերպմամբ: 2017-ին Թուրքիան և Չինաստանը ստարագրեցին էքստրադիցիայի վերաբերյալ նոր համաձայնագիր, որը հնարավորություն էր տալիս արտահանձնել նույնիսկ այն դեպքում, երբ անձին վերագրվող արարքը անօրինական է համարվում համաձայնագիրը ստորագրող երկրներից միայն մեկում¹⁵⁴: Դրանից հետո, հատկապես սկսած 2019-ից՝ Թուրքիան ձերբակալել է հարյուրավոր ուղուր ակտիվիստների և նրանց ուղարկել արտահանձնման կենտրոններ¹⁵⁵: Միաժամանակ վերջին տարիներին զգալիորեն նվազել են թուրքական՝ հատկապես իշխանամետ ՋԼՄ-ներում ուղուրների հետ կապված քննադատական նյութերն ու հոդվածները:

Թուրքիայի նման վարքագիծը պայմանավորված է կոնկրետ քաղաքական հաշվարկներով և Չինաստանի հետ հարաբերություններում լրացուցիչ խնդիրներ չստեղծելու մտադրությամբ: Սակայն դա չի նշանակում, որ հարմար առիթի դեպքում Անկարան չի օգտագործելու ուղուրների խաղաքարտը՝ հատկապես եթե հաշվի առնենք Կենտրոնական Ասիայում Թուրքիայի հեռու գնացող ծրագրերն ու նկրտումները: Ուշագրավ է, որ 2021-ի մարտին ՉԺՀ արագործնախարար Վան Յիի

¹⁵¹ Turkey accused of deporting Uighurs back to China via third countries, By Areeb Ullah, 27 July 2020, <https://www.middleeasteye.net/news/uighurs-china-turkey-accused-deporting-third-countries> (այցելվել է 13.09.2021թ.); Uighurs en route to Saudi Arabia detained with fake passports in Istanbul, Anadolu Agency, May 18 2016, <https://www.hurriyetdailynews.com/uighurs-en-route-to-saudi-arabia-detained-with-fake-passports-in-istanbul--99343> (այցելվել է 13.09.2021թ.):

¹⁵² Erdogan Is Turning Turkey Into a Chinese Client State, By Ayca Alemdaroglu and Sultan Tepe, SEPTEMBER 16, 2020, <https://foreignpolicy.com/2020/09/16/erdogan-is-turning-turkey-into-a-chinese-client-state/> (այցելվել է 13.09.2021թ.):

¹⁵³ China, Turkey to deepen cooperation, strengthen relations, Xinhua| 2020-12-15, http://www.xinhuanet.com/english/2020-12/15/c_139591471.htm (այցելվել է 13.09.2021թ.):

¹⁵⁴ Erdogan Is Turning Turkey Into a Chinese Client State, By Ayca Alemdaroglu and Sultan Tepe, SEPTEMBER 16, 2020, <https://foreignpolicy.com/2020/09/16/erdogan-is-turning-turkey-into-a-chinese-client-state/> (այցելվել է 13.09.2021թ.):

¹⁵⁵ Trust highlighted in Turkey ties, By AN BAIJIE, July 3, 2019, <https://www.chinadailyasia.com/epaper/pubs/chinadaily/2019/07/03/01.pdf> (այցելվել է 13.09.2021թ.):

մերձավորարևելյան շրջագայության ընթացքում միայն Թուրքիայում էին մահմեդական ուլղուրների զանգվածային ցույցեր կազմակերպվել: Յիի այցի ընթացքում Ստամբուլի կենտրոնում շուրջ 1000 ցուցարարներ էին հավաքվել «կանգնեցրեք ուլղուրների ցեղասպանությունը», «Չինաստան դիկտատոր» և այլ հակաչինական պաստառներով, այսպես կոչված «Արևելյան Թուրքեստանի» անկախության խորհրդանիշ հանդիսացող կապույտ և սպիտակ դրոշներով¹⁵⁶: Ակնհայտ է, որ Թուրքիայում դժվար թե հնարավոր լինի կազմակերպել նմանատիպ ակցիաներ՝ առանց էրդողանի թողտվության և համաձայնության:

Թուրք-չինական հարաբերություններում մյուս կարևոր խոչընդոտը Թուրքիայի պանթուրքական (պանիսլամական) ծրագրերն են և Չինաստանի համար կենսական նշանակություն ունեցող տարածաշրջաններում՝ առաջին հերթին Կենտրոնական Ասիայում, ինչպես նաև Մերձավոր Արևելքում, Անկարայի ապակայունացնող դերակատարությունը: Պեկինի համար անընդունելի են Թուրքիայի պանթուրքական ծրագրերը և իր արևմտյան սահմանների երկայնքով թուրքալեզու ժողովուրդների միավորման հեռանկարը, ինչը կարող է կասկածի տակ դնել Չինաստանի տարածքային ամբողջականությունն ու երկրի ներսում անկայունության օջախներ ձևավորել: Մյուս կողմից՝ իր մասշտաբային ենթակառուցվածքային ծրագրերն իրականացնելու համար Չինաստանը ձգտում է պահպանել և մեծացնել ազդեցությունը Կենտրոնական Ասիայի երկրների նկատմամբ, որտեղով անցնում են «Գոտի և ճանապարհ» նախագծի առանցքային ուղղություններից մի քանիսը:

Թուրքիան իր հերթին չի թաքցնում դեպի արևելք ծավալվելու և Կենտրոնական Ասիայի թուրքալեզու երկրներին իր շուրջը համախմբելու նպատակները: Դեռևս 90-ականներից, երբ տարածաշրջանի նախկին ԽՍՀՄ երկրները անկախացան, Թուրքիան սկսեց ակտիվորեն ընդլայնել իր կապերն ու ազդեցությունը հետխորհրդային երկրներում՝ նախապատվությունը տալով ազդեցության մշակութային, լեզվական, կրոնական, ինչպես նաև տնտեսական բաղադրիչներին: Չնայած Ռուսաստանի հակազդեցությանը՝ Թուրքիան կարողացել է վերջին տասնամյակներում այս երկրներում որոշակի հաջողություններ գրանցել՝ առնվազն փափուկ ուժի տեսանկյունից¹⁵⁷: Սակայն Անկարայի պանթուրքական նկրտումները նոր շունչ ստացան հատկապես

¹⁵⁶ Turkey raises Uighur issue with Chinese minister amid protests, Reuters, MARCH 25, 2021, <https://www.reuters.com/article/us-turkey-china-idUSKBN2BH1EW> (այցելվել է 13.09.2021թ.):

¹⁵⁷ Россия и Турция. Турецкая "мягкая сила" и Центральная Азия, Иван Стародубцев, 15 июня 2016, <https://russiancouncil.ru/blogs/ivan-starodubtsev/2517/> (այցելվել է 13.09.2021թ.); Переходят границу. Турция мягко захватывает страны бывшего СССР. Почему Россия не может ей помешать?, Елизавета Наумова, 13 августа 2021 https://lenta.ru/articles/2021/08/13/turkey_soft_power_politics/ (այցելվել է 13.09.2021թ.):

Արցախյան վերջին պատերազմից հետո, որի արդյունքում Թուրքիան զգալիորեն մեծացրեց ազդեցությունը Ադրբեջանի նկատմամբ, իսկ այսպես կոչված «Նախիջևանի միջանցքով» նպատակ ունի նոր խթան հաղորդել Մերձկասպյան տարածաշրջանի պանթուրքական ինտեգրման նախագծերին:

Դեռևս 2009-ին Թուրքիայի նախաձեռնությամբ Նախիջևանում հիմնվեց Թուրքալեզու երկրների համագործակցության խորհուրդը՝ Թյուրքական խորհուրդը. ներկայումս վերջինիս լիարժեք անդամներ են հանդիսանում Թուրքիան, Ադրբեջանը, Ղազախստանը, Ղրղզստանը և Ուզբեկստանը, իսկ Թուրքմենստանը պարբերաբար մասնակցում է խորհրդի միջոցառումներին: Միասին այս երկրները ունեն շուրջ 150 մլն բնակչություն և 1,5 տրլն ՀՆԱ¹⁵⁸: Չնայած այս կազմակերպության հեռահար նպատակներին՝ գործնականում այն դեռևս չի կարողացել էականորեն նպաստել Թուրքիայի հետ թուրքալեզու պետությունների ինտեգրմանը՝ հատկապես տնտեսական ոլորտում:

Օրինակ, 2020-ի ցուցանիշներով Կենտրոնական Ասիայի 5 երկրների հետ Թուրքիայի առևտրի ծավալը կազմել է ընդամենը 6,2 մլրդ դոլար (Թուրքիայի արտաքին առևտրի ընդամենը 1,5%-ը), մինչդեռ այս երկրների հետ Չինաստանի առևտրի շրջանառությունը 6 անգամ գերազանցում է այս ցուցանիշը. այն կազմել է շուրջ 38,5 մլրդ դոլար (ինչը կազմում է ՉժՀ արտաքին առևտրի ընդամենը 0,8%-ը)¹⁵⁹: Այսինքն՝ Կենտրոնական Ասիայում տնտեսական ազդեցության՝ առավել ևս Չինաստանի և Ռուսաստանի հետ մրցակցելու տեսանկյունից Թուրքիայի հնարավորությունները խիստ սահմանափակ են, և եթե Անկարան ուզում է իր շուրջը համախմբել այդ երկրներին, պետք է առաջնահերթությունը տա ազդեցության այլ գործոններին՝ ռազմաքաղաքական համագործակցություն, փափուկ ուժ և այլն: Վերջին տարիների փորձը ցույց է տալիս, որ Թուրքիան հենց այդ ուղղությամբ է շարժվում:

2020-ի հոկտեմբերի վերջին՝ Արցախյան պատերազմի ակտիվ փուլում, Թուրքիան ռազմական համագործակցության պայմանագիր ստորագրեց Ուզբեկստանի հետ¹⁶⁰: Արցախյան պատերազմից կարճ ժամանակ անց Ղազախստանի պաշտպանության նախարարը ժամանեց Թուրքիա՝ մասնակցելու ռազմական ցուցահանդեսի, և ըստ թուրքական պաշտպանական գերատեսչության և մամուլի՝ վերջինս հետաքրքրություն է ներկայացրել Բայրաքթար ԱԹՍ-ներ ձեռք

¹⁵⁸ The "Economic Cooperation" identified as the main theme of the First Summit of the Turkic Council has a priority in the framework of the partnership between our member countries, Updated: 27.08.2021, https://www.turkkon.org/en/isbirligi-alanlari/economic-cooperation_2 (այցելվել է 13.09.2021թ.):

¹⁵⁹ IMF Data, <https://data.imf.org/regular.aspx?key=61013712> (այցելվել է 13.09.2021թ.):

¹⁶⁰ Turkish, Uzbek defense ministers sign military agreement, underline further defense cooperation, OCT 27, 2020, <https://www.dailysabah.com/politics/diplomacy/turkish-uzbek-defense-ministers-sign-military-agreement-underline-further-defense-cooperation> (այցելվել է 13.09.2021թ.):

բերելու հարցում¹⁶¹: Թուրքիան ակտիվորեն ներգրավված է Ղրղզստանում ընթացող ներքաղաքական գործընթացներում, փորձում է զարգացնել հարաբերությունները Թուրքմենստանի հետ:

Եթե սրան գումարենք Թուրքիայի և Պակիստանի խորացող, այդ թվում՝ ռազմատեխնիկական համագործակցությունը և Աֆղանստանում տեղի ունեցող գործընթացներում Անկարայի ակտիվ ներգրավվածությունը, ապա ակնհայտ է, որ Թուրքիան փորձում է Կենտրոնական և Միջին Ասիայում ավելի ակտիվ ռազմաքաղաքական դերակատարություն ստանձնել: Սա ըստ էության նշանակում է, որ Թուրքիան իր պանթուրանական ծրագրերը կյանքի կոչելու նպատակով կարող է փորձել ապակայունացնել այս տարածաշրջանի երկրները՝ այդպիսով չեզոքացնելով նաև Չինաստանի տնտեսական և Ռուսաստանի ռազմական ներկայության գործոնները: Սա, բնականաբար, գիտակցում են նաև Չինաստանում և փորձելու են ամեն կերպ կանխել այս սցենարը:

Հարկ է նշել, որ այդուհանդերձ, ի տարբերություն 90-ականների, հիմա Թուրքիան Կենտրոնական Ասիայում ազդեցության համար պայքարում ունի երկու լուրջ մրցակից՝ ի դեմս Չինաստանի և Ռուսաստանի: Մոսկվան փորձում է տարածաշրջանը իր ազդեցության ներքո պահել տարբեր ինտեգրացիոն ծրագրերի (ՀԱՊԿ, ԵԱՏՄ), ինչպես նաև ուղիղ ռազմական ներկայության միջոցով, իսկ Չինաստանը, ինչպես արդեն նշվեց, նախապատվությունը տալիս է տնտեսական գործիքակազմին: Միայն «Գոտի և ճանապարհ» ծրագրի մեկնարկից հետո այս տարածաշրջանում Չինաստանի ընդհանուր ներդրումների ծավալը հասնում է 136 մլրդ դոլարի¹⁶², ինչը Թուրքիայի համար աստղաբաշխական ցուցանիշ է: Սա նշանակում է, որ Չինաստանը անհրաժեշտության դեպքում փորձելու է պաշտպանել իր հսկայական ներդրումների անվտանգությունը՝ հակազդելով Թուրքիայի ապակայունացնող գործողություններին:

Եզրակացություն

Թուրքիան, հանդիսանալով Մերձավոր Արևելքի առանցքային աշխարհաքաղաքական գործոններից մեկը, կարևոր տեղ է զբաղեցնում Չինաստանի տարածաշրջանային քաղաքականության մեջ: Ակնհայտ է, որ առանց թուրքական գործոնը հաշվի առնելու, Չինաստանը մերձավորարևելյան քաղաքականության հարցերում չի կարող լուրջ հաջողությունների հասնել:

¹⁶¹ Kazakhstan Keen to Buy Dozens of Bayraktar TB2 Drones From Turkey: Russian Media, DECEMBER 2, 2020, <https://www.thedefensepost.com/2020/12/02/kazakhstan-keen-bayraktar-tb2-drones/> (այցելվել է 13.09.2021թ.):

¹⁶² China and Central Asia: Bilateral Trade Relationships and Future Outlook, China Briefing, May 20, 2021, <https://www.china-briefing.com/news/china-and-central-asia-bilateral-trade-relationships-and-future-outlook/>, (այցելվել է 13.09.2021թ.):

Միաժամանակ, Չինաստան-Թուրքիա հարաբերությունները նշանավորվում են հետաքրքիր երկիմաստությամբ. մի կողմից՝ Թուրքիան հանդիսանում է չինական «Գոտի և ճանապարհ» մեգանախագծի կարևոր հանգույցներից մեկը, ակտիվորեն մասնակցում է տարբեր ենթակառուցվածքային ծրագրերին, մյուս կողմից՝ ունի ՉԺՀ շահերին հակասող տարածաշրջանային և գլոբալ ամբիցիաներ, ինչը Պեկինին ստիպում է Անկարայի նկատմամբ զգուշավոր քաղաքականություն վարել:

Ընդհանուր առմամբ՝ Չինաստանի համար Թուրքիայից եկող սպառնալիքներն ու մարտահրավերները շատ ավելի մեծ են, քան համագործակցության հեռանկարները: Սակայն դա չի նշանակում, որ Պեկինը հրաժարվելու է Թուրքիայի հետ տարբեր տարածաշրջանային ծրագրերի իրականացումից, ինչպես նաև երկկողմ, առաջին հերթին՝ տնտեսական համագործակցության հնարավորություններից: Ընդհակառակը, Չինաստանն այն դիտարկում է որպես Թուրքիայի վրա ազդելու, վերջինիս հնարավոր գործողությունները զսպելու գործիք և ամեն կերպ փորձելու է ուժեղացնել այդ գործիքակազմը:

Չինաստանը փորձում է առնվազն ապահովել իր ներգրավվածությունը Թուրքիայում և Թուրքիայի կողմից իրականացվող խոշոր տարածաշրջանային ենթակառուցվածքային նախագծերում, թեև այդ ներգրավվածությունը հավասարակշռում է տարածաշրջանային այլ նախագծերին ակտիվ մասնակցությամբ, օրինակ՝ Իրանում: Կարելի է ենթադրել, որ Արցախյան վերջին պատերազմից հետո թուրք-ադրբեջանական ենթակառուցվածքային նախագծերում Չինաստանը ևս կփորձի որոշակի ներկայություն ապահովել, այդ գործընթացներից դուրս չմնալու և դրանց նկատմամբ որոշակի ազդեցություն ստանալու նպատակով: Հետևաբար, այսպես կոչված «Նախիջևանի միջանցքը», Արցախի օկուպացված շրջաններում իրականացվող ենթակառուցվածքային ծրագրերը չինական «Գոտի և ճանապարհ» նախագծի հետ ինտեգրելու թուրք-ադրբեջանական փորձերը կարող են որոշակի հաջողություններ գրանցել:

Սակայն, հաշվի առնելով Չինաստանի համար տարբեր այլընտրանքների առկայության կարևորությունը, ինչպես նաև Թուրքիայից բխող սպառնալիքներն ու վերջինիս չափից մեծ ազդեցությունը զսպելու ցանկությունը՝ Պեկինը փորձելու է ավելի ակտիվորեն ներգրավվել Թուրքիայի ազդեցությունից դուրս գտնվող տարածաշրջանային նախագծերին: Ինչպես արդեն նշվեց, այդ հարցում Չինաստանի գլխավոր տարածաշրջանային հենարանը Իրանն է, ուստի տարածաշրջանի երկրները, հատկապես որոնք թուրք-ադրբեջանական նախագծերի հետ կապված օբյեկտիվ մտահոգություններ ունեն, պետք է փորձեն չինական մեգանախագծերին ներգրավվել իրանական պատուհանի միջոցով:

4. ՉԻՆԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ԵՐԿՐՆԵՐԻ ՎՐԱ

Մեծ Մերձավոր Արևելքում Չինաստանի աճող հետաքրքրությունն ու ներգրավվածությունը իր ազդեցությունն է ունենում նաև Հարավային Կովկասի աշխարհաքաղաքական գործընթացների վրա: ԽՍՀՄ փլուզումից անմիջապես հետո տարածաշրջանում ազդեցության և գերակայության համար հիմնական պայքարը ընթանում էր Արևմուտքի և Ռուսաստանի Դաշնության միջև: Սակայն վերջին տարիներին մի կողմից՝ տարածաշրջանային դերակատարների՝ Թուրքիայի, Իրանի դիրքերի ամրապնդումը, մյուս կողմից՝ տարածաշրջանի նկատմամբ ՉԺՀ հետաքրքրության աճը Հարավային Կովկասում գերակայության համար խոշոր պետությունների պայքարը ավելի դինամիկ և խայտաբղետ են դարձրել:

Այն, որ տարածաշրջանի նկատմամբ Արևմուտքի՝ առաջին հերթին ԱՄՆ-ի հետաքրքրությունը աստիճանաբար նվազում է, ակնհայտ դարձավ դեռևս 2016-ին ԱՄՆ նախագահական ընտրություններում Թրամփի հաղթանակից հետո և վերջինիս վարած արտաքին քաղաքականության արդյունքում: Իրավիճակը առանձնապես փոփոխությունների չենթարկվեց ԱՄՆ-ում 2020-ի նախագահական ընտրություններից հետո, թեև ի սկզբանե որոշ փորձագետներ ակնկալում էին, որ Բայդենի վարչակազմը կարող է Հարավային Կովկասում վերաակտիվացնել ԱՄՆ ներգրավվածությունը: Այժմ, եթե նույնիսկ այդպիսի ակտիվություն նկատվում է, ապա այն դեկլարատիվ բնույթ է կրում և հիմնականում չի ազդում տարածաշրջանային ռազմաքաղաքական գործընթացների վրա:

Ավելին, Աֆղանստանից, Իրաքից և Մեծ Մերձավոր Արևելքի այլ կարևոր գոտիներից ԱՄՆ զորքերի դուրսբերումը տարածաշրջանի նկատմամբ Վաշինգտոնի հետաքրքրությունը միայն նվազեցնելու է: Այսպիսի իրավիճակը, ինչպես նաև տարածաշրջանային կարևոր դերակատարների՝ Թուրքիայի, Իրանի, ՌԴ-ի հետ ՉԺՀ համագործակցային հարաբերությունները, առկա ֆինանսատնտեսական լծակները Պեկինին հնարավորություն են տալիս ավելի մեծ ազդեցություն պրոյեկտել այս կարևոր աշխարհագրական տարածքի նկատմամբ, որը առանցքային նշանակություն ունի Չինաստանի «Գոտի և ճանապարհ» մեզանախազդի համար¹⁶³:

Չինաստանի ազդեցության և ներգրավվածության աճը ամենևին չի նշանակում, որ Ռուսաստանը կդադարի մնալ Հարավային Կովկասում որոշիչ

¹⁶³ The Shifting Geography of the South Caucasus, PAUL STRONSKI, Carnegie Endowment for International Peace, JUNE 23, 2021, <https://carnegieendowment.org/2021/06/23/shifting-geography-of-south-caucasus-pub-84814> (այցելվել է 13.09.2021թ.):

գերտերությունը, կամ ԱՄՆ-ը և ԵՄ-ն կիրառարվեն տարածաշրջանում իրենց շահերից ու հետաքրքրություններից: Ավելին, 44-օրյա պատերազմից հետո Ռուսաստանը ևս մեկ անգամ ապացուցեց, որ շարունակում է առանցքային դեր խաղալ տարածաշրջանի ռազմաքաղաքական հարցերում. վերջինս էականորեն մեծացրեց իր ռազմական ներկայությունը Հայաստանում, խաղաղապահներ տեղակայեց Արցախում՝ ձեռք բերելով Ադրբեջանի նկատմամբ լրացուցիչ ազդեցության լծակներ:

Արևմուտքը՝ ի դեմս ԱՄՆ-ի և ԵՄ-ի, փորձում է տարածաշրջանային ազդեցությունը պահպանել փափուկ ուժի, ժողովրդավարացման աջակցության և ֆինանսատնտեսական գործիքների միջոցով (օրինակ՝ ԵՄ կողմից նախատեսվող 2,6 մլրդ դոլարի ներդրումը ՀՀ-ում): Այլ խոշոր տարածաշրջանային դերակատարները, առաջին հերթին՝ Թուրքիան և Իրանը, փորձում են Հարավային Կովկասը տանել ռեգիոնալիզացիայի ճանապարհով՝ ակտիվորեն խրախուսելով տարածաշրջանային համագործակցության այնպիսի ձևաչափերը, ինչպիսիք, օրինակ, Էրդողանի առաջարկած 3+3 կամ 5+1 ձևաչափերն են¹⁶⁴: Սակայն տարածաշրջանում ստեղծված հենց այս բազմաբևեռ իրավիճակն է, որ էականորեն մեծացնում է չինական ազդեցության ընդլայնման հնարավորությունները:


4.1. Կենտրոնական Ասիայի փորձը Հարավային Կովկասում Չինաստանի ազդեցության ընդլայնման համատեքստում

Որպեսզի հասկանանք, թե Պեկինն առաջիկայում ինչպես կարող է օգտվել Հարավային Կովկասում իր ներկայությունն ու ազդեցությունը ընդլայնելու հնարավորություններից, հարկավոր է ուսումնասիրել Կենտրոնական Ասիայի փորձը, որը շատ ուսանելի է: Այսպես, Կենտրոնական Ասիայում նույնպես Չինաստանը սեփական ազդեցությունը տարածելու համար ի սկզբանե նախապատվությունը տվել է տնտեսական գործիքակազմին: Օրինակ, եթե 2002-ին Կենտրոնական Ասիայի երկրների հետ ՉԺՀ առևտրի շրջանառությունը կազմում էր 2 մլրդ դոլար, ապա 2005-ին այդ թիվը գրեթե քառապատկվեց՝ հասնելով 8 մլրդի, իսկ 2019-ին հասավ 46 մլրդի:

¹⁶⁴ The Shifting Geography of the South Caucasus, PAUL STRONSKI, Carnegie Endowment for International Peace, JUNE 23, 2021, <https://carnegieendowment.org/2021/06/23/shifting-geography-of-south-caucasus-pub-84814> (այցելվել է 13.09.2021թ.):

Չինաստանին ամենից շատ պարտք ունեցող երկրները

Արտաքին պարտքը Չինաստանին՝ որպես ՀՆԱ-ի % (2017թ.)



Չինաստանը հանդիսանում է Կենտրոնական Ասիայի երկրների տնտեսության գլխավոր ներդրողը, ինչպես նաև էական մասնաբաժին ունի այդ երկրների արտաքին պետական պարտքի կառուցվածքում¹⁶⁶: Ֆինանսատնտեսական ազդեցությանը հետևեց սոցիալ-քաղաքական ազդեցությունը, արդյունքում ընդամենը 30 տարվա ընթացքում Չինաստանը ամուր արմատներ ձգեց Կենտրոնական Ասիայի երկրների գրեթե բոլոր ոլորտներում¹⁶⁷: Այժմ Չինաստանը կարող է նույն սցենարը կրկնել նաև Հարավային Կովկասում, ինչը հնարավորություն կտա ևս մեկ քայլ կատարել իր ազդեցությունը դեպի Արևմուտք

¹⁶⁵ The Countries Most in Debt to China, Katharina Buchholz, statista, Oct 14, 2019, <https://www.statista.com/chart/19642/external-loan-debt-to-china-by-country/> (այցելվել է 13.09.2021թ.):

¹⁶⁶ Цена стабильности Китай строит Казахстан на свои деньги. Что он потребует взамен?, Дмитрий Плотников, 18 июня 2019, https://lenta.ru/articles/2019/06/18/money_money/ (այցելվել է 13.09.2021թ.); Пекинская удавка. Китай вкладывает в Таджикистан большие деньги. Чем республика будет отдавать долги?, Дмитрий Плотников, 1 июня 2021, <https://lenta.ru/articles/2021/06/01/zhyn vzaimy/?fbclid=IwAR3huqIT6a22qkeDYm4hQfssVHHXaAc2R9fuzfk2xFYuhdSt7Tlg0Ni1-xw> (այցելվել է 13.09.2021թ.): Тень дракона. Китай начал активно вмешиваться в дела бывших советских республик. Чем это грозит России?, Дмитрий Плотников, 11 мая 2021, https://lenta.ru/articles/2021/05/11/china_exp/ (այցելվել է 13.09.2021թ.):

¹⁶⁷ Dangerous Liaisons: How China Is Taming Central Asia's Elites, Temur Umarov, Carnegie Endowment for International Peace, 29.01.2021, <https://carnegiemoscow.org/commentary/83756> (այցելվել է 13.09.2021թ.):

տարածելու և «Գոտի ու ճանապարհ» նախագծի շրջանակներում ԱՄՆ-ի և ՌԴ-ի ուղիղ ազդեցությունից զերծ նոր առանցք ձևավորելու համար:


4.2. Չինական ազդեցության առևտրատնտեսական գործոնը

Հարավային Կովկասում ՉԺՀ ազդեցության մեծացմանը կարող է նպաստել 44-օրյա պատերազմի հետևանքով տարածաշրջանում հաղորդակցությունների ապաշրջափակման հեռանկարները: «Գոտի և ճանապարհ» նախագծի շրջանակներում Չինաստանի խոշոր ենթակառուցվածքային ներդրումները նախկինում հիմնականում շրջանցում էին Հարավային Կովկասը՝ հաշվի առնելով անվտանգային խնդիրներն ու լոգիստիկ սահմանափակումները, հետևաբար դրանց վերացումը կարող է լրացուցիչ խթան հանդիսանալ չինական ներդրումների և տնտեսական էքսպանսիայի համար¹⁶⁸:

Վերջին տարիներին Չինաստանն արդեն իսկ զգալիորեն ակտիվացրել է տնտեսական կապերը Հարավային Կովկասի երկրների հետ: Եթե 2016-ին հարավկովկասյան 3 երկրների ընդհանուր առևտրաշրջանառությունը ՉԺՀ հետ ըստ ԱՄՀ տվյալների՝ կազմում էր շուրջ 2 մլրդ դոլար, ապա 5 տարի անց՝ 2020-ին ադ թիվը աճել է շուրջ 85%-ով՝ հասնելով մոտ 3,7 մլրդ դոլարի: Առաջանցիկ տեմպով աճել է Հայաստանի և Չինաստանի միջև առևտրի շրջանառությունը. եթե 2016-ին այն կազմել է 387 մլն դոլար, ապա 2020-ին մոտեցել է 1 մլրդ դոլարի շեմին՝ աճը շուրջ 160%:

¹⁶⁸ In the Caspian Region, China Is Just Getting Started, Niva Yau, Carnegie Endowment for International Peace, 27.02.2021 <https://carnegiemoscow.org/commentary/83950> (այցելվել է 13.09.2021թ.):


Չինաստանի առևտրաշրջանառությունը Հարավային Կովկասի երկրների հետ 2016-2020թթ. (մլն. ԱՄՆ դոլար)



169


Այնուամենայնիվ, Հարավային Կովկասում ՉԺՀ առևտրատնտեսական գործընկերների շարքում Հայաստանը ընդամենը երրորդն է՝ զիջելով Վրաստանին և Ադրբեջանին: Ընդհանուր առմամբ 2020-ին Հայաստանին բաժին է ընկել ՉԺՀ և Հարավային Կովկասի երկրների միջև փոխադարձ առևտրի 26%-ը, մինչդեռ Վրաստանի մասնաբաժինը կազմում է 36%, Ադրբեջանինը՝ 38%:

Փոխադարձ առևտրաշրջանառությունը Չինաստանի և Հարավային Կովկասի երկրների միջև 2020-ին (ԱՄՆ դոլար)



¹⁶⁹ IMF Data, <https://data.imf.org/regular.aspx?key=61013712> (այցելվել է 13.09.2021թ.):

Պատկերն ավելի օբյեկտիվորեն հասկանալու համար հարկավոր է դիտարկել երկկողմ առևտրի ընդհանուր ծավալը 2016-2020թթ.: Նախորդ 5 տարիներին Չինաստանի հետ ՀՀ առևտրի ընդհանուր շրջանառությունը կազմել է 3,1 մլրդ դոլար՝ 22%, Վրաստանի ցուցանիշը 5,8 մլրդ՝ 40%, Ադրբեջանինը՝ 5,4 մլրդ՝ 38%:



Ինչպես տեսնում ենք, Վրաստանն ու Ադրբեջանը ունեն համադրելի ցուցանիշներ, մինչդեռ Հայաստանը զգալիորեն զիջում է երկու հարևաններին: Այս պատկերը ըստ էության համարժեք է նաև 3 երկրներում չինական ներդրումների ցուցանիշներին: Սակայն պետք է նշել, որ եթե 2016-ին տարածաշրջանի երկրների առևտրաշրջանառության միայն 19%-ն էր բաժին ընկնում Հայաստանին, ապա 2020-ին Հայաստանի մասնաբաժինը հասել է 26%-ի: Սա թեև վկայում է Չինաստանի տարածաշրջանային առևտրային գործընկերների շարքում Հայաստանի դերի որոշակի մեծացման մասին, սակայն չի ուղեկցվում երկկողմ հարաբերություններում էական դրական տեղաշարժերով, չի արտացոլվում Հայաստանում չինական ներդրումների ավելացման տեսքով:

Ինչպես Կենտրոնական Ասիայի պարագայում, այնպես էլ Հարավային Կովկասում աշխարհաքաղաքական մրցակցության, մասնավորապես՝ դրա առևտրատնտեսական բաղադրիչի տեսանկյունից Չինաստանի հիմնական մրցակիցներն են Ռուսաստանն ու Թուրքիան: Եթե դիտարկենք Հարավային Կովկասի երկրների առևտրաշրջանառության կառուցվածքը Թուրքիայի և Չինաստանի հետ, ապա կնկատենք, որ դրանք շատ նման են, և երկու երկրները մի շարք ուղղություններով լուրջ մրցակիցներ են՝ տեքստիլ, մեքենաշինություն, սարքավորումներ և այլն: Այդ բոլոր ուղղություններով վերջին տարիներին

Չինաստանի դիրքերը էականորեն ամրապնդվել են¹⁷⁰, և նման տեմպի պահպանման պարագայում Թուրքիան կարող է կորցնել Հարավային Կովկասում առևտրատնտեսական ազդեցության իր մրցակցային առավելությունները՝ հատկապես եթե հաշվի առնենք, որ Թուրքիայի այդպիսի ազդեցության լծակները տարածվում են հարավկովկասյան 3 երկրներից միայն երկուսի վրա: Նաև այս տեսանկյունից պետք է դիտարկել Հայաստանի հետ առևտրատնտեսական հարաբերությունները վերականգնելու Թուրքիայի վերջին շրջանի ակնարկները¹⁷¹, ինչը կնպաստի տարածաշրջանում Թուրքիայի տնտեսական էքսպանսիային:

2020-ի տվյալներով Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի հետ Թուրքիայի ընդհանուր առևտրի շրջանառությունը կազմել է շուրջ 4,3 մլրդ դոլար, որտեղ Հայաստանի մասնաբաժինը չնչին է (այս տվյալները չեն ներառում հայ-թուրքական առևտրի ոչ պաշտոնական ցուցանիշները, որոնք ավելի մեծ են): Ուշագրավ է, որ այդ 4,3 միլիարդից 3,5-ը բաժին է ընկնում թուրքական արտահանմանը: Ինչպես նշվեց, Չինաստանի հետ հարավկովկասյան 3 երկրների առևտրաշրջանառությունը 2020-ին կազմել է 3,7 մլրդ դոլար, որի գերակշիռ մասը նույնպես բաժին է ընկնում չինական արտահանմանը: Եթե դիտարկենք առևտրաշրջանառության աճի դինամիկան, ապա Չինաստանի հետ առևտրի նախորդ 5 տարիների աճը կազմել է 85%, մինչդեռ Թուրքիայի և հարավկովկասյան երկրների միջև առևտուրը նախորդ 5 տարիներին աճել է ընդամենը 8%-ով¹⁷²: Սա ցույց է տալիս, որ Չինաստանի հետ առևտուրը ավելանում է առաջանցիկ տեմպերով, և այդ տեմպի պահպանման դեպքում մի քանի տարի հետո տարածաշրջանի նկատմամբ Անկարայի տնտեսական ազդեցության լծակները զգալիորեն կթուլանան: Միաժամանակ պետք է նշել, որ տարածաշրջանում առևտրատնտեսական մեծ ազդեցություն և կապեր ունեն նաև ԵՄ-ն և Ռուսաստանը, ինչը այս ոլորտում գերտերությունների մրցակցությունը ավելի ինտենսիվ է դարձնում:

4.3. Իրան-ՉԺՀ 25-ամյա համաձայնագրի՝ Հարավային Կովկասին վերաբերելի բաղադրիչները

Վերլուծության նախորդ հատվածում անդրադառնալով Իրան-ՉԺՀ հարաբերությունների և երկու երկրների միջև վերջերս կնքված 25-ամյա համաձայնագրի առանձնահատկություններին՝ եկանք այն եզրակացությանը, որ

¹⁷⁰ Perspectives | Turkey and China: Can Azerbaijan be the bridge?, Firuza Nahmadova Mar 22, 2021, <https://eurasianet.org/perspectives-turkey-and-china-can-azerbaijan-be-the-bridge> (այցելվել է 13.09.2021թ.):

¹⁷¹ Turkey urges Armenia to take constructive steps in region, AUG 29, 2021, <https://www.dailysabah.com/politics/diplomacy/turkey-urges-armenia-to-take-constructive-steps-in-region> (այցելվել է 13.09.2021թ.):

¹⁷² IMF Data, <https://data.imf.org/regular.aspx?key=61013712> (այցելվել է 13.09.2021թ.):

Չինաստանը որպես Մեծ Մերձավոր Արևելքում իր ազդեցությունն ընդլայնելու կարևոր հենակետ է դիտարկում Թեհրանին: Սա վերաբերում է նաև Հարավային Կովկասին: Չինաստանը հավանաբար կփորձի Հարավային Կովկասում իր տնտեսական, ենթակառուցվածքային, քաղաքական շահերը ընդլայնել Իրանի միջոցով: Ուշագրավ է, որ նման ենթադրության համար առկա են որոշակի հիմքեր նաև Իրան-ՉԺՀ վերջերս ստորագրված համաձայնագրի ոչ պաշտոնական փաստաթղթում և դրա հավելվածներում: Փորձենք ներկայացնել փաստաթղթից և հավելվածներից այն կարևոր մեջբերումները, որոնք կարող են անմիջական ազդեցություն ունենալ Հարավային Կովկասի երկրների վրա.

- «Հաշվի առնելով ընդհանուր շահերը «Գոտի և ճանապարհ» նախաձեռնության շրջանակներում՝ երկու կողմերը պետք է խրախուսեն երկկողմ հարաբերություններն ու բազմակողմ կապերը՝ **հարևան կամ երրորդ երկրներում համատեղ ծրագրերի իրականացման միջոցով**»:

- «Խրախուսել համագործակցությունն ու երկխոսությունը **Հյուսիս-Հարավ և Հարավ-Արևմուտք միջանցքների ծրագրերին ներգրավման հարցում**՝ հիմնվելով համընդհանուր շահերի հետապնդման հիմնարար սկզբունքի վրա»:

- «Բանակցություններ սկսել **Պակիստան-Իրան-Իրաք-Սիրիա «ուխտագնացության» երկաթուղու կառուցման և փոխկապակցված ենթածրագրերի շուրջ**»:

- «**Զարգացնել 5-րդ սերնդի հեռահաղորդակցության ցանցեր**»:

- «Համագործակցել Իրանում, Չինաստանում և **երրորդ երկրներում նավթի պահեստների կառուցման** և կահավորման հարցում»:

- «Չինական ներդրումների ներգրավում կարևոր իրանական երկաթուղիների էլեկտրականացման ֆինանսավորման նպատակով՝ Սպահան-Շիրազ, Թեհրան-Մաշհադ, Թեհրան-Թավրիզ **համագործակցության մայրուղիների կառուցման հարցում, ներառյալ Թեհրան-Հյուսիս նախագիծը (որը միավորում է Թեհրանը երկրի հյուսիսային շրջանների հետ)**»:

- «Խրախուսել և աջակցել չինական ներդրումները Իրանի Հատուկ և ազատ տնտեսական գոտիներում, ...**համատեղ ազատ գոտու գործարկում երրորդ երկրում**»:

- «**Երրորդ երկրներում արդյունաբերական և սպասարկման համատեղ նախագծերի ձևավորում**՝ տարածաշրջանային երկրների, ներառյալ Իրաքը, Աֆղանստանը և Սիրիան վերակառուցման նպատակով»:

- «Երկու երկրների կողմից տարածաշրջանային **աշխարհատնտեսական ներուժի օպտիմալացում՝ երրորդ (հարևան) երկրներում համատեղ ծրագրեր սկսելու նպատակին համապատասխան**»¹⁷³:

¹⁷³ Last Among Equals: The China-Iran Partnership in a Regional Context, By Lucille Greer and Esfandiyar Batmanghelidj, The Wilson Center, September 2020,

Այս ծրագրերից յուրաքանչյուրը կարող է ներառել հարավկովկասյան 3 երկրներից ցանկացածին՝ կախված նրանից, թե վերջիններս ինչպիսի շահագրգռվածություն և նախաձեռնողականություն կցուցաբերեն: Մասնավորապես ենթակառուցվածքային նախագծերը, այդ թվում՝ Հյուսիս-Հարավ, Հարավ-Արևմուտք, Պակիստան-Իրան-Իրաք-Սիրիա, Թեհրան-Հյուսիս, համագործակցության մեծ ներուժ են պարունակում ինչպես Հայաստանի, այնպես էլ Ադրբեջանի համար: Ադրբեջանը արդեն իսկ ունի համապատասխան ենթակառուցվածքներ Իրան-ՉԺՀ այս նախագծերում ներգրավվելու և դրանցում կարևոր տեղ զբաղեցնելու համար, մինչդեռ Հայաստանի համար առաջնային է արագորեն զարգացնել սեփական ենթակառուցվածքները՝ այդ ծրագրերից դուրս չմնալու համար՝ հատկապես հաշվի առնելով, որ Իրան-ՉԺՀ համաձայնագիրը ենթադրում է նաև համատեղ ներդրումներ երրորդ երկրներում: Հաշվի առնելով ինչպես Իրանի, այնպես էլ Չինաստանի համար այլընտրանքային ենթակառուցվածքների առկայության կարևորությունը, ինչպես նաև թուրք-ադրբեջանական նախագծերից մեծ կախվածության մեջ չհայտնվելու ձգտումը՝ Հայաստանում այլընտրանքային ենթակառուցվածքների ձևավորումը կարող է ինչպես Թեհրանի, այնպես էլ Պեկինի համար հետաքրքրություն ներկայացնել:

Համագործակցության մեկ այլ դաշտ է բացում վերոհիշյալ համաձայնագրով նախատեսված՝ երրորդ երկրներում ազատ տնտեսական գոտիների հիմնման և շահագործման, համատեղ ծրագրերի իրականացման դրույթը՝ նավթի պահեստների կառուցում, արդյունաբերական կենտրոնների հիմնում և այլն: Ադրբեջանը արդեն իսկ որոշակի փորձեր է կատարում Արցախի օկուպացված տարածքներում տարբեր տնտեսական նախագծերի իրականացման և դրանցում իրանական ու չինական կապիտալի ներգրավման ուղղությամբ: Հայաստանը կարող է Թեհրանի և Պեկինի ուշադրությունը հրավիրել հայ-իրանական սահմանին Մեդրիի ազատ տնտեսական գոտու զարգացման ծրագրերի վրա՝ նաև հաշվի առնելով Իրան-ԵԱՏՄ ազատ առևտրի համաձայնագրի առկայությունը:

Իհարկե, տարածաշրջանային ենթակառուցվածքների ենթադրյալ ապաշրջափակումը, մասնավորապես՝ Հայաստան-Նախիջևան-Իրան երկաթգծի շահագործումը, Իրան-Չինաստան ենթակառուցվածքային նախագծերին Հայաստանի մասնակցության համար կարող է նոր հնարավորություններ ստեղծել, սակայն հաշվի առնելով, որ այն ցանկացած պարագայում Ադրբեջանից կախվածություն է առաջացնելու՝ դրանից բխող հետևանքներով, Հայաստանը պետք է գտնի այդ հաղորդակցություններին ուղիղ ներգրավվելու ուղիներ: Համագործակցության մեկ այլ հնարավոր ոլորտ է 5-րդ սերնդի

հեռահաղորդակցությունը՝ հաշվի առնելով նաև Վրաստանից մատակարարվող ինտերնետ ցանցի անվտանգության հետ կապված վերջին շրջանի մտահոգությունները:

4.4. Չինաստանի տարածաշրջանային քաղաքականության աշխարհաքաղաքական հետևանքները հարավկովկասյան 3 երկրների համար

Ընդհանուր առմամբ հարավկովկասյան երկրների համար Չինաստանի տարածաշրջանային քաղաքականության աշխարհաքաղաքական հետևանքների տեսանկյունից կարելի է ընդգծել մի քանի կարևոր առանձնահատկություններ.

- Չինաստանը առաջարկում է խոշոր ֆինանսական ներդրումներ և մասնակցություն միջազգային ենթակառուցվածքային ծրագրերին՝ դրանք չփոխկապակցելով ժողովրդավարության, մարդու իրավունքների և այլ հարցերի հետ:

- Չինաստանը տարածաշրջանի երկրներին չի կանգնեցնում կոշտ աշխարհաքաղաքական ընտրության առաջ և առաջնահերթությունը տալիս է տնտեսական ազդեցության գործիքներին:

- Չինական գործոնի առկայությունը տարածաշրջանի երկրներին հնարավորություն է տալիս հավասարակշռել արտաքին քաղաքական առաջնահերթությունները՝ դուրս գալով Հարավային Կովկասում Արևմուտք-ՌԴ, Թուրքիա-ՌԴ ավանդական մրցակցության տրամաբանության շրջանակներից:

- Իրան-Չինաստան հնարավոր նոր առանցքի ձևավորումը երկարաժամկետ հեռանկարում տարածաշրջանի երկրներին կարող է առաջարկել տնտեսական, ռազմաքաղաքական, հետագայում նաև անվտանգային երաշխիքների նոր համակարգ:

- Չինաստանի յուրօրինակ հարաբերությունները Թուրքիայի հետ և վերջինիս նկատմամբ տնտեսական ազդեցության շարունակական աճը կարող են մի կողմից՝ զսպել Թուրքիայի ռեգիոնալ ամբիցիաները և պանթուրքական ծրագրերը, մյուս կողմից՝ տարածաշրջանում աշխարհաքաղաքական մրցակցության նոր՝ թուրք-չինական ճակատ ձևավորել:

- Չինաստանը այն աշխարհաքաղաքական բևեռն է, որի հետ տարածաշրջանի երկրների համագործակցության խորացումը առայժմ չի առաջացնում տարածաշրջանում մինչ այժմ որոշիչ ազդեցություն և ներկայություն ունեցող դերակատարի՝ Ռուսաստանի Դաշնության վրդովմունքն ու հակազդեցությունը:

- Հաշվի առնելով Մեծ Մերձավոր Արևելքի, այդ թվում՝ Հարավային Կովկասի աշխարհագրական նշանակությունը Չինաստանի «Գոտի և ճանապարհ» նախագծում՝ Չինաստանը, ի տարբերություն տարածաշրջանում ներկայացված մի

շարք այլ խոշոր դերակատարների, շահագրգռված է կայունության և անվտանգության պահպանման հարցում:

Հաշվի առնելով վերոհիշյալ առանձնահատկությունները՝ տարածաշրջանի երկրները փորձում են դիրքավորվել որպես Չինաստանի հիմնական տարածաշրջանային գործընկեր: Սակայն հարավկովկասյան երեք երկրներից յուրաքանչյուրը ստիպված է գործել որոշակի աշխարհաքաղաքական կաշկանդվածության պայմաններում, քանի որ էական կախվածություն ունի այս կամ այն աշխարհաքաղաքական բևեռից: Հայաստանի պարագայում դա անվտանգային, տնտեսական կախվածությունն է ՌԴ-ից, Վրաստանի պարագայում՝ Արևմուտքից (ԱՄՆ-ից և ԵՄ-ից), Ադրբեջանի պարագայում՝ Թուրքիայից: Ուստի, այս երկրներից յուրաքանչյուրը Չինաստանի հետ հարաբերությունները կառուցելիս ելնում այն գիտակցումից, որ դրանք չպետք է հակասեն հիմնական արտաքին գործընկերոջ (հովանավորի) շահերին և հետաքրքրություններին:

4.5. Պայքարը Հարավային Կովկասում ՉԺՀ հիմնական գործընկերոջ կարգավիճակի համար

Մեզ համար առավել հետաքրքրական են Հարավային Կովկասում Չինաստանի հիմնական գործընկերը դառնալու Ադրբեջանի և Հայաստանի հնարավորություններն ու սահմանափակումները:

Ադրբեջան

Ադրբեջանը, որն ունի ավելի մեծ տարածաշրջանային ամբիցիաներ և դրանք կյանքի կոչելու հնարավորություններ, իսկ 44-օրյա պատերազմից հետո դրանք միայն ավելացել են, փորձում է ավելի բազմավեկտոր արտաքին քաղաքականություն վարել: Միաժամանակ Բաքուն գերազնահատում է իր աշխարհաքաղաքական կարևորությունը, ու թեև մեծ հնարավորություն ունի ավելի նեղ՝ Կովկասյան և Մերձկասսյան տարածաշրջանում առանցքային դերակատար դառնալու համար, վերջինիս գլոբալ հավակնությունները արդարացված չեն: Բաքուն սովորաբար իր գլոբալ հավակնությունները հիմնավորում է խոշոր միջազգային ենթակառուցվածքային նախագծերում իր ներգրավվածությամբ, սակայն այդ նախագծերը միջազգային են միայն Բաքվի տեսանկյունից, մինչդեռ գործնականում դրանք բոլորը տարածաշրջանային մակարդակի ծրագրեր են: Միաժամանակ Բաքվի այդ չափազանցված հավակնությունները տեղավորվում են Թուրքիայի պանթուրքական ծրագրերի շրջանակներում, և միասին թուրք-ադրբեջանական տանդեմը վերածվում է շատ ավելի լուրջ աշխարհաքաղաքական գործոնի, քան նրանցից յուրաքանչյուրը առանձին:

Հենց այս տեսանկյունից պետք է դիտարկել Ադրբեջան-ՉԺՀ հարաբերությունները և Ադրբեջանի տեղն ու դերը չինական մեգանախագծերում: Ադրբեջանի խոշոր ենթակառուցվածքային նախագծերը, անշուշտ, վերջինիս առանձնահատուկ տեղ են հատկացնում «Գոտի և ճանապարհ» նախագծի շրջանակներում, սակայն առկա են երկու երկրների միջև հարաբերությունների զարգացումը զսպող մի շարք տնտեսական և քաղաքական գործոններ: Ինչպես արդեն նշվեց, Չինաստանի համար Թուրքիայից եկող սպառնալիքներն ավելի շատ են, քան համագործակցության հնարավորություններն ու հեռանկարները, ինչը պրոյեկտվում է նաև Ադրբեջանի վրա: Հետևաբար, ինչպես Թուրքիայի, այնպես էլ Ադրբեջանի պարագայում Չինաստանը ձգտում է համագործակցության, տնտեսական ազդեցության միջոցով զսպել պանթուրքական սպառնալիքները, որոշակի վերահսկողություն սահմանել վերջիններիս տարածաշրջանային ծրագրերի նկատմամբ:

Միաժամանակ, ինքնուրույն տարածաշրջանային գործոն մնալու համար Ադրբեջանը պետք է որոշակիորեն թուլացնի կախվածությունը Անկարայից, որը 44-օրյա պատերազմից հետո աննախադեպ մակարդակի է հասել: Նաև սրանով է բացատրվում Արցախում ՌԴ շահերի հետ հաշվի նստելու և համագործակցության փորձերը: Ըստ էության՝ Ադրբեջանն ունի երկու ճանապարհ. առաջին՝ դառնալ Թուրքիայի առաջարկած թուրքակենտրոն տարածաշրջանային բևեռի առանցքային դերակատարներից մեկը՝ սակայն մնալով Անկարայի ստվերում, երկրորդ՝ փորձել հավասարակշռել Թուրքիայի հետ հարաբերությունները՝ Մոսկվայի և Պեկինի հետ համագործակցության խորացման, աշխարհաքաղաքական ամբիցիաները սահմանափակելու և ավելի նեղ, տարածաշրջանային դերակատարությամբ բավարարվելու միջոցով¹⁷⁴: Մեծ հաշվով Ադրբեջանի իշխանությունների այս ընտրությունից է կախված, թե չին-ադրբեջանական հարաբերությունները ինչպիսի ընթացք կստանան: Առայժմ Ադրբեջանի գործողությունները հակասական տպավորություն են թողնում:

Այնուամենայնիվ, պետք է նկատել, որ 44-օրյա պատերազմից հետո Չինաստանը նույնպես փորձում է որոշակիորեն ակտիվացնել շփումները ադրբեջանցի գործընկերների հետ: Օրինակ, ուշագրավ է Ադրբեջանի և Չինաստանի նախագահների 2021թ. հունիսի 2-ի հեռախոսազրույցի վերաբերյալ պաշտոնական հաղորդագրությունը, որտեղ ՉԺՀ նախագահը ընդգծել է, որ **չին-ադրբեջանական հարաբերությունները հասել են պատմականորեն նոր մեկնարկային կետի**: Սի Ծինփինը նշել է, որ Չինաստանը աջակցում է Ադրբեջանի

¹⁷⁴ Специфика геополитики Азербайджанской Республики, В. А. Аватков, Постсоветские исследования. Т.4. № 2, 2021, <https://www.imemo.ru/files/File/ru/Articles/2021/PostSovIssled-022021-Avatkov.pdf> (այցելվել է 13.09.2021թ.):

ժողովրդի ընտած զարգացման ճանապարհը և Ադրբեջանին համարում է որպես խոշոր գործընկեր «Գոտի և ճանապարհ» նախագծի շրջանակներում¹⁷⁵:

Կարելի է ենթադրել, որ Չինաստանը և չինական կազմակերպությունները կփորձեն ներգրավվել նաև Արցախի օկուպացված տարածքներում Ադրբեջանի կողմից իրականացվող, այդ թվում՝ ենթակառուցվածքային նախագծերին՝ տարածաշրջանային գործընթացներից դուրս չմնալու նպատակով: Սակայն, հաշվի առնելով Հարավային Կովկասում և ավելի մեծ տարածաշրջանում Չինաստանի երկարաժամկետ շահերը, Պեկինը կփորձի Ադրբեջանի հետ հարաբերությունները հավասարակշռել տարածաշրջանային այլ դերակատարների հետ հարաբերությունների խորացմամբ:

Հայաստան

Արցախյան վերջին պատերազմից հետո Հայաստանը Հարավային Կովկասում առանցքային աշխարհաքաղաքական գործոնից և անվտանգության երաշխավորից վերածվել է անվտանգության սպառողի և լուրջ տարածաշրջանային դերակատարություն ստանձնելու համար նախ և առաջ պետք է վերականգնի ինքնիշխան պետության բոլոր ատրիբուտները: Հայաստանը անվտանգային բոլոր բաղադրիչներով գտնվում է ՌԴ-ից անվերապահ կախվածության մեջ, ինչը էականորեն սահմանափակում է ինքնուրույն արտաքին քաղաքականություն վարելու հնարավորությունները: Այսպիսի իրավիճակում աշխարհաքաղաքական այս կամ այն բևեռի հետ հարաբերությունները կառուցելիս Հայաստանի իշխանությունները պետք է զգուշավորություն ցուցաբերեն՝ նախ և առաջ հաշվի առնելով Ռուսաստանի դիրքորոշումը և նախապատվությունը տալով անվտանգային բաղադրիչին:

Այսպիսի իրավիճակը կարող է առաջիկա տարիներին լուրջ խնդիրներ ստեղծել Հայաստան-Արևմուտք համագործակցության հետագա զարգացման հարցում, մինչդեռ հետպատերազմյան վերականգնման, տնտեսության կայունացման և ենթակառուցվածքների զարգացման համար Հայաստանին անհրաժեշտ են հսկայական ներդրումներ, որոնց հիմնական աղբյուրը ավանդաբար հանդիսացել են Արևմուտքն ու արևմտյան կառույցները: Հենց այս տեսանկյունից Հայաստանի համար կարող է առանձնահատուկ կարևորություն ստանալ Չինաստանի հետ համագործակցության ակտիվացումը և մասնակցությունը Իրան-Չինաստան նոր ձևավորվող տարածաշրջանային համագործակցության ձևաչափերին: Ի տարբերություն Արևմուտքի, Չինաստանի

¹⁷⁵ Xi Jinping Speaks with Azerbaijani President Ilham Aliyev on the Phone, 2021/06/03, https://www.fmprc.gov.cn/mfa_eng/zxxx_662805/t1881146.shtml , Товарищ Си на проводе с Ильхамом Алиевым, 2 июня 2021, <https://haqqin.az/news/211411> (այցելվել է 13.09.2021թ.):

հետ ՀՀ հարաբերությունների խորացումը, չինական ներդրումների ներգրավումը դժվար թե արժանանա Մոսկվայի սուր հակազդեցությանը:

Աշխարհաքաղաքական բևեռի և զարգացման ճանապարհի ընտրության առումով Հայաստանը նույնպես մեծ հաշվով ունի երկու տարբերակ. առաջին՝ համակերպվել ինքնուրույն տարածաշրջանային գործոնի կարգավիճակի կորստի հետ և դառնալ Ռուսաստանի տարածաշրջանային քաղաքականության օբյեկտ, երկրորդ՝ պահպանելով հիմնական աշխարհաքաղաքական ընտրությունը՝ հոգուտ Ռուսաստանի փորձել հարաբերություններ կառուցել այլ դերակատարների՝ տվյալ պարագայում Իրանի ու ՉԺՀ-ի հետ, որոնց հետ համագործակցության զարգացումը ընդունելի կլինի Մոսկվայի համար և չի առաջացնի անվտանգային լուրջ ցնցումներ: Իհարկե, կան նաև այլ տարբերակներ՝ օրինակ, շարունակել Արևմուտքի և Ռուսաստանի միջև մանևրելու անհաջող փորձերը կամ միանալ Թուրքիայի առաջնորդած պանթուրքական պրոյեկտին, սակայն ելնելով խելամտության կանխավարկածից, մենք այս տարբերակները ի սկզբանե բացառում ենք, քանի որ դրանք ի վերջո Հայաստանի համար կործանարար հետևանքների կհանգեցնեն:

Առաջին տարբերակի ընտրության պարագայում Հայաստանը կարող է ի վերջո կանգնել պետականության կորստի փաստի, իսկ որոշակի անցանկալի աշխարհաքաղաքական զարգացումների և Հարավային Կովկասում ռուսական, այդ թվում՝ ռազմական ներկայության վերացման դեպքում՝ ցեղասպանության վտանգի առջև: Հետևաբար, Իրան-Չինաստան առանցքի հետ բազմալիկ հարաբերությունների խորացումը կարող է դառնալ Հայաստանի համար աշխարհաքաղաքական այն այլընտրանքը, որը ներկայիս տարածաշրջանային անվտանգային համակարգի փլուզման դեպքում երկիրը կապահովագրի գոյաբանական սպառնալիքներից, միաժամանակ ներկայիս պայմաններում լուրջ խոչընդոտներ չի ստեղծի հայ-ռուսական հարաբերություններում:

Եզրակացություն

Հարավկովկասյան 3 երկրները Իրան-Թուրքիա-Ռուսաստան հավերժական պատմական մրցակցության շրջապտույտում չհայտնվելու համար փորձում են այդ երկրների հետ հարաբերությունները հավասարակշռել արտատարածաշրջանային դերակատարների հետ հարաբերությունների զարգացմամբ: ԽՍՀՄ փլուզումից հետո այդպիսի հիմնական դերակատարներն էին ԱՄՆ-ը և Եվրոպական միությունը, սակայն տարածաշրջանի նկատմամբ այդ ուժային կենտրոնների հետաքրքրության նվազումը, ինչպես նաև տարածաշրջանային դերակատարների ազդեցության վերականգնումը, Հայաստանին, Վրաստանին և Ադրբեջանին կրկին կանգնեցրել է բարդ աշխարհաքաղաքական ընտրության առջև: Հարավային

Կովկասում Չինաստանի մեծացող ազդեցությունն ու ներկայությունը տարածաշրջանի երկրներին աշխարհաքաղաքական հավասարակշռության պահպանման նոր հնարավորություն է ընձեռում¹⁷⁶:

Այս տեսանկյունից, հաշվի առնելով նաև արցախյան վերջին պատերազմում կրած ծանր պարտությունն ու դրանից հետո ի հայտ եկած մի շարք անվտանգային, սոցիալ-տնտեսական մարտահրավերները, տարածաշրջանի երկրների շարքում ամենաբարդը Հայաստանի դրությունն է: Չինական այլընտրանքը Հայաստանին հնարավորություն է տալիս խուսափել մեկ բևեռից անվերապահ կախվածության և այլընտրանքի բացակայության հեռանկարից, մինչդեռ վերջին 3 տարիներին ՀՀ գործող իշխանությունները մսխել են հայ-չինական հարաբերությունների ներուժը:

Դեռևս 2019-ին «Լույս» հիմնադրամի հրապարակած վերլուծություններից մեկում¹⁷⁷ հիմնադրամի փորձագետները ընդգծում էին, որ Հայաստանը «Գոտի և ճանապարհ» նախագծի լուսանցքին չհայտնվելու համար պետք է նախաձեռնողականություն ցուցաբերի: Ցավոք, նախորդ 2 տարիներին այդ «նախաձեռնողականությունը» հիմնականում բացասական կողմերով է դրսևորվել՝ մասնակցությունը հակաչինական Կրոնների ազատության միջազգային դաշինքին, Թայվանի պատվիրակության ժամանումը Հայաստան և այլն:

Այդ վերլուծության շրջանակներում անդրադարձել էինք 2019-ի մայիսին վարչապետի գլխավորած պատվիրակության Չինաստան կատարած այցին, որի ընթացքում և արդյունքում հայտարարվեցին մի շարք ծրագրերի մասին՝ երկկողմ ուղիղ չվերթի բացում, ՀՀ-ում վերելակների արտադրության հիմնում¹⁷⁸, ֆուտբոլի նոր մարզադաշտի, բազալտի վերամշակման գործարանի կառուցում և այլն: Հիմնադրամի փորձագետները կասկածի տակ էին դնում այդ խոստումների իրատեսությունը, և ինչպես ցույց տվեց նախորդ տարիների փորձը, դրանցից և ոչ մեկը չիրականացավ: Ըստ էության՝ վերջին տարիներին հայ-չինական հարաբերություններում տեղի ունեցած միակ նշանակալի իրադարձությունը մուտքի արտոնագրերի փոխադարձ չեղարկումն էր, ինչը այդպես էլ չհանգեցրեց Հայաստանում չինացի զբոսաշրջիկների թվի էական աճի:

¹⁷⁶ The Shifting Geography of the South Caucasus, PAUL STRONSKI, Carnegie Endowment for International Peace, JUNE 23, 2021, <https://carnegieendowment.org/2021/06/23/shifting-geography-of-south-caucasus-pub-84814> (այցելվել է 13.09.2021թ.):

¹⁷⁷ <https://www.luys.am/index.php?m=publicationsOne&pid=98> (այցելվել է 13.09.2021թ.):

¹⁷⁸ Վարչապետը չինական մի քանի ընկերությունների ներկայացուցիչների հետ քննարկել է ՀՀ-ում ներդրումային ծրագրերի իրականացման հեռանկարները, 16.05.2019, <https://www.primeminister.am/hy/press-release/item/2019/05/16/Nikol-Pashinyan-Chinese-companies/> (այցելվել է 13.09.2021թ.):

Հատկանշական է, որ այդ ժամանակ հայ-չինական հարաբերություններն անհրաժեշտ ուշադրության չարժանացնելու ընդդիմության քննադատություններին իշխանությունները պատասխանում էին անորոշ ձևակերպումներով: Օրինակ, երբ ՀՀ Ազգային ժողովի նախկին պատգամավորներից մեկը ԱԳՆ-ին խնդրել էր պարզաբանել «Գոտի և ճանապարհ» համաժողովին Հայաստանի բարձր մակարդակով ներկայացված չլինելու հանգամանքը, ԱԳՆ-ից պատասխանել էին, որ հրավերը ստացվել էր միայն բնապահպանության նախարարի անունով: Իսկ իր հարցազրույցներից մեկի ժամանակ նախկին արտգործնախարար Զոհրաբ Մնացականյանը համաժողովին բարձր մակարդակով չմասնակցելու հանգամանքը բացատրել էր նրանով, որ Հայաստանը դեռևս փորձում է «ադապտացնել» իր գերակայությունները այդ զարգացումներին: Փորձը ցույց տվեց, որ ՀՀ իշխանությունները այդպես էլ «չադապտացվեցին» առկա աշխարհաքաղաքական իրողություններին և Չինաստանի հետ հարաբերություններում, բացի արհեստական խնդիրներից, որևէ դրական քայլ չնախաձեռնեցին:

Մերձավոր Արևելքում և Հարավային Կովկասում Չինաստանի նոր դերակատարության ընձեռած հնարավորություններից օգտվելու համար Հայաստանը պետք է վերանայի Չինաստանի հետ հարաբերությունների օրակարգն ու առաջնահերթությունները: Չինաստանը կարող է Հայաստանի համար դառնալ այն փրկօղակը, որը հնարավորություն կտա վերականգնել տարածաշրջանային ինքնուրույն գործոնի կարգավիճակը՝ միաժամանակ կասկածի տակ չդնելով նվիրվածությունը հայ-ռուսական ռազմավարական, դաշնակցային հարաբերություններին: Այս առումով Հայաստանի համար կարող է առանցքային կարևորություն ստանալ Իրան-Չինաստան հարաբերությունների զարգացումը և Թեհրանի ու Պեկինի միջև նոր տարածաշրջանային առանցքի ձևավորման հեռանկարը:

Իրանի և Չինաստանի հետ գրագետ արտաքին քաղաքականությունը թույլ կտա օգտվել Իրան-ՉԺՀ վերջերս ստորագրված համաձայնագրի՝ Հարավային Կովկասին վերաբերելի բոլոր հնարավորություններից: Եթե Իրանը հավակնում է դառնալ Չինաստանի համար գլխավոր պատուհանը դեպի Մերձավոր Արևելք, ապա Հայաստանը կարող է ստանձնել նույն կարգավիճակը Հարավային Կովկասում: Թուրք-ադրբեջանական պանթուրքական ծրագրերի հետ կապված Պեկինի մտահոգությունը, Վրաստանի ահռելի կախվածությունը Արևմուտքից կարող են նպաստել հոգուտ Հայաստանի՝ Չինաստանի այդպիսի ընտրությանը, որի նախադրյալները արդեն իսկ երևում են. օրինակ, Չինաստանը Հայաստանում կառուցել է տարածաշրջանի ամենամեծ դեսպանատունը, վերջին 5-6 տարիներին երկկողմ առևտրաշրջանառությունը տարածաշրջանի մյուս երկրների համեմատ

աճում է առաջանցիկ տեմպերով և այլն: Սրա համար, սակայն, առաջին հերթին անհրաժեշտ է, որպեսզի Հայաստանը նախաձեռնությունը վերցնի իր ձեռքը և արագացնի աշխարհաքաղաքական նոր իրողություններին «ադապտացվելու» գործընթացը:

Միաժամանակ Հայաստան-Իրան-Չինաստան համագործակցության համար լրացուցիչ խթան կարող է հանդիսանալ Հայաստանի անդամակցությունը ԵԱՏՄ-ին: Ինչպես Չինաստանը, այնպես էլ Իրանը ԵԱՏՄ-ի հետ ունեն ազատ առևտրի համաձայնագրեր: Հաշվի առնելով Իրանում սպասվող հսկայաճավալ չինական ներդրումները՝ Հայաստանը կարող է մեծապես օգտվել Իրանի տնտեսության ակնկալվող ակտիվացումից:

Ուշագրավ է, որ առաջիկայում նախատեսվում է Իրան-ԵԱՏՄ լիարժեք ազատ առևտրի համաձայնագրի շուրջ բանակցությունների մեկնարկ: Դեռևս 2019-ի հոկտեմբերին ուժի մեջ մտավ Իրան-ԵԱՏՄ ազատ առևտրի ժամանակավոր համաձայնագիրը, որը ընդգրկում էր ԻԻՀ-ԵԱՏՄ առևտրի 50%-ը: 2020-ին, չնայած ՔՈՎԻԴ-19-ի համավարակին, ԻԻՀ-ԵԱՏՄ առևտուրն աճել է 18%-ով: Հատկանշական է, որ Իրան-ԵԱՏՄ առևտրի 75%-ը բաժին է ընկնում ՌԴ-ին, իսկ 15%-ը՝ Հայաստանին, հետևաբար Հայաստանն ու Ռուսաստանը օբյեկտիվորեն ամենից շատն են շահագրգռված առևտրատնտեսական կապերի զարգացմամբ: Միաժամանակ, չնայած հսկայական ներուժին, ԵԱՏՄ արտաքին առևտրում Իրանի մասնաբաժինը կազմում է ընդամենը 0,5%, իսկ Իրանի արտաքին առևտրում ԵԱՏՄ մասնաբաժինը՝ 3%: Իրան-Չինաստան 25-ամյա համաձայնագրի արդյունքում Իրանի տնտեսության ակտիվացումը, ենթակառուցվածքների զարգացումը կարող է լրացուցիչ խթան հանդիսանալ Իրան-ԵԱՏՄ տնտեսական համագործակցության իրական ներուժը բացահայտելու հարցում¹⁷⁹:

Ակնհայտ է, որ Իրան-Չինաստան համագործակցությունից և տարածաշրջանում Չինաստանի դերակատարության մեծացումից կփորձեն օգտվել նաև Հարավային Կովկասի մյուս երկրները: Ադրբեջանն ու Վրաստանը այս ուղղությամբ ակտիվ քայլեր են ձեռնարկում: Վրաստանը տարածաշրջանի միակ երկիրն է, որ Չինաստանի հետ ազատ առևտրի համաձայնագիր ունի, Ադրբեջանը փորձում է Պեկինի ուշադրությունը հրավիրել ենթակառուցվածքային նախագծերի վրա: Իրանն իր հերթին Հարավային Կովկասում պրագմատիկ արտաքին քաղաքականություն է վարում՝ փորձելով նորմալ հարաբերություններ պահպանել

¹⁷⁹ Торговля Ирана с ЕАЭС и перспективы ее развития, Никита Смагин, 17 марта 2021, <https://russiancouncil.ru/analytics-and-comments/analytics/torgovlya-irana-s-eaes-i-perspektivy-ee-razvitiya/> (այցելվել է 13.09.2021թ.):

ինչպես Ադրբեջանի, այնպես էլ Հայաստանի հետ¹⁸⁰: Եթե Իրանի և Չինաստանի հետ հարաբերություններում Հայաստանը շարունակի պահպանել իներցիոն, պասիվ կեցվածքը, ապա Թեհրան-Պեկին համագործակցությունից կրկին կօգտվեն տարածաշրջանի մյուս երկրները, իսկ Հայաստանը կկորցնի նորից աշխարհաքաղաքական գործոն դառնալու գուցե վերջին հնարավորությունը:

ՀԵՏԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Մեծ Մերձավոր Արևելքում և Հարավային Կովկասում Չինաստանի քաղաքականության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ տարածաշրջանի նկատմամբ Պեկինի ուշադրության և ներգրավվածության մեծացումը առաջ է բերում աշխարհաքաղաքական նոր իրողություններ, որոնց հետ փորձում են հաշվի նստել տարածաշրջանի բոլոր դերակատարները: Այս կարևոր տարածաշրջանում աշխարհաքաղաքական մրցակցության ակտիվացումը տարածաշրջանի երկրների համար ի հայտ է բերում նոր ռիսկեր և հնարավորություններ: Սույն վերլուծության շրջանում փորձեցինք վեր հանել այդ հիմնական ռիսկերն ու հնարավորությունները, որի արդյունքում ներկայացնում ենք հետևյալ առաջարկներն ու հետևությունները:

Հետևություններ

- ❖ Մեծ Մերձավոր Արևելքում, այդ թվում՝ Հարավային Կովկասում այլևս չեն գործում հետսառըպատերազմյան աշխարհաքաղաքական, անվտանգային և տնտեսական համակարգերը: Ռեգիոնալ դերակատարների ազդեցության աճը, ԱՄՆ-ի և հավաքական Արևմուտքի դիրքերի թուլացումը, Չինաստանի առևտրատնտեսական ազդեցության էքսպանսիան տարածաշրջանում ձևավորել են բոլորովին այլ աշխարհաքաղաքական իրողություններ, որտեղ նկատելի են տարածաշրջանի ռեգիոնալիզացիայի և հիմնական գերտերությունների՝ ԱՄՆ-ՉԺՀ-ՌԴ նոր աշխարհաքաղաքական մրցակցության զուգահեռ գործընթացները:
- ❖ Չինաստանը, ակտիվորեն առաջ մղելով «Գոտի և ճանապարհ» նախագիծը, հավակնում է տարածաշրջանում ԱՄՆ ազդեցության կրճատման բացը լցնել սեփական ազդեցությամբ ու ներկայությամբ՝ առնվազն առևտրատնտեսական, քաղաքական, փափուկ ուժի տեսանկյունից: Այս նպատակին հասնելու համար Պեկինը ակտիվորեն համագործակցում է ինչպես իր հիմնական գեոպոլիտիկ գործընկերոջ՝ ՌԴ-ի, այնպես էլ տարածաշրջանի այլ կարևոր դերակատարների՝ Իրանի, Թուրքիայի, Սաուդյան Արաբիայի հետ: Միաժամանակ Պեկինը փորձում է այս

¹⁸⁰ New Iranian Government and South Caucasus, Emil Avdaliani, 29 JUN 2021, <http://caucasuswatch.de/news/3906.html> (այցելվել է 13.09.2021թ.):

դերակատարներից յուրաքանչյուրի հետ համագործակցությունն օգտագործել վերջիններիս նկատմամբ որոշակի ազդեցության լծակներ ձեռք բերելու նպատակով՝ կանխելու համար «Գոտի և ճանապարհ» նախագծի տեսանկյունից այս կարևոր տարածաշրջանում նոր աշխարհաքաղաքական հոսանքի ձևավորումը, որը կփորձի կասկածի տակ դնել տարածաշրջանում Չինաստանի աճող գերակայությունը:

- ❖ ԱՄՆ-ը և Արևմուտքը չեն պատրաստվում տարածաշրջանում ազդեցությունը հեշտությամբ զիջել Չինաստանին և իրենց այլ մրցակիցներին՝ Ռուսաստանին և Իրանին: Այդ նպատակով առաջ քաշված B3W ծրագիրը հավակնում է դառնալ BRI՝ «Գոտի և ճանապարհ» նախագծի լուրջ մրցակիցը՝ տարածաշրջանի երկրներին առաջարկելով տնտեսական, ենթակառուցվածքային զարգացման այլընտրանքային հնարավորություններ: Հաշվի առնելով այս երկու մեգանախագծերի առանցքային տարբերությունը, որը մեծ հաշվով ենթադրում է ընտրություն զարգացման լիբերալ-ժողովրդավարական արևմտյան, և սուվերեն-ավտորիտար արևելյան տարբերակների միջև, տարածաշրջանի երկրներին կանգնեցնելու է լուրջ ընտրության առջև: Հաշվի առնելով տարածաշրջանի ավտորիտար ավանդույթները, կրոնական, մշակութային առանձնահատկությունները՝ կարելի է ենթադրել, որ տարածաշրջանային հիմնական դերակատարների շրջանում չինական նախագիծը ավելի մեծ ժողովրդականություն կվայելի, թեև չի կարելի բացառել միաժամանակ B3W-ի և BRI-ի հնարավորություններից օգտվելու տարբեր երկրների փորձերը: Սա նաև նշանակում է, որ երկու մեգանախագծերի բախումը տարածաշրջանում կարող է նոր սառը պատերազմի սկիզբ դնել՝ երկրներին կանգնեցնելով բարդ աշխարհաքաղաքական ընտրության առաջ:
- ❖ Արևմուտքը փորձելու է նաև տարածաշրջանում իր շահերն ու ծրագրերը առաջ մղել նոր աշխարհաքաղաքական հոսանքի ձևավորման միջոցով: Դրա համար լավագույն թեկնածուներից մեկը կարող է դառնալ ՆԱՏՕ-ի անդամ Թուրքիան, հետևաբար վերջինիս պանթուրքական ծրագրերի խրախուսումը և աջակցությունը Արևմուտքին հնարավորություն կտա մի կողմից՝ Թուրքիայի ծավալապաշտական հավակնություններն ուղղել դեպի արևելք, մյուս կողմից՝ վերջինիս ձեռքով զսպել տարածաշրջանում Չինաստանի, Ռուսաստանի և Իրանի ազդեցության աճը:
- ❖ Չինաստանը փորձելու է տարածաշրջանում իր աշխարհաքաղաքական շահերն առաջ մղել՝ հիմնվելով երկու հիմնական գործընկերների՝ Իրանի և Պակիստանի հետ հարաբերությունների վրա: Չինաստանը Իրանին դիտարկում է որպես Մերձավոր Արևելքում ազդեցություն պրոյեկտելու և ավելի մեծ ներկայություն ստանալու կարևոր հենարան: Իրան-Չինաստան հարաբերությունները ռազմաքաղաքական լուրջ դաշինքի և նոր

աշխարհաքաղաքական հոսանքի վերածվելու մեծ հնարավորություններ ունեն, թեև առայժմ այդ գործընթացը գտնվում է սաղմնավորման փուլում: Երկու երկրների միջև նոր 25-ամյա համաձայնագիրը այս ուղղությամբ կարևոր քայլ է, ու չնայած դրա դետալների վերաբերյալ պաշտոնական մեկնաբանությունների բացակայությանը, առկա տեղեկատվությունը թույլ է տալիս ենթադրել, որ այդ համաձայնագիրը կարող է զգալիորեն փոխել երկկողմ հարաբերությունների մասշտաբն ու որակը:

- ❖ Չինաստան-Թուրքիա հարաբերություններում առկա են ավելի շատ հակասություններ ու անորոշություններ, քան հնարավորություններ: Պեկինը Թուրքիային ավելի շուտ դիտարկում է որպես սպառնալիք, քան լուրջ գործընկեր: Չնայած դրան՝ Չինաստանը փորձում է ակտիվորեն ներգրավվել Թուրքիայում և վերջինիս նախաձեռնությամբ իրականացվող տարածաշրջանային նախագծերին՝ ձգտելով վերահսկել դրանք, կամ առնվազն ապահովել դրանցում սեփական մասնակցությունը:
- ❖ Մեծ Մերձավոր Արևելքում Չինաստանի ազդեցության աճը անխուսափելիորեն ազդում է նաև Հարավային Կովկասում առկա աշխարհաքաղաքական հավասարակշռության վրա: Թեև տարածաշրջանի երկրներից յուրաքանչյուրը գտնվում է այս կամ այն աշխարհաքաղաքական կենտրոնից զգալի կախվածության մեջ, չինական գործոնի մեծացումը և հատկապես Իրան-Չինաստան նոր առանցքի ձևավորման հեռանկարը կարող է տարածաշրջանի երկրների համար աշխարհաքաղաքական ընտրության այլընտրանքի հնարավորություններ ստեղծել:
- ❖ Իրան-Չինաստան առանցքի հետ բազմոլորտ հարաբերությունների խորացումը կարող է դառնալ Հայաստանի համար աշխարհաքաղաքական այն այլընտրանքը, որը ներկայիս տարածաշրջանային անվտանգային համակարգի փլուզման դեպքում երկիրը կապահովագրի գոյաբանական սպառնալիքներից, միաժամանակ ներկայիս պայմաններում լուրջ խոչընդոտներ չի ստեղծի հայ-ռուսական հարաբերություններում:

Առաջարկներ

- Հաշվի առնելով անվտանգային տեսանկյունից Հայաստանի խոր կախվածությունը Ռուսաստանից, որը հատկապես հսկայական չափերի հասավ 44-օրյա պատերազմից հետո, Հայաստանը պետք է փորձի հանդես գալ այնպիսի աշխարհաքաղաքական դիրքավորմամբ, որը սպառնալիքներ չի առաջացնի երկրի կենսական, անվտանգային շահերի համար: Հետևաբար, եթե դիտարկենք երկու գլոբալ աշխարհաքաղաքական հոսանքները՝ չինական BRI և արևմտյան B3W նախագծերը, ապա ակնհայտ է, որ ՀՀ և Արցախի անվտանգության փաստացի միակ երաշխավոր

Ռուսաստանի համար ավելի ընդունելի կարող է լինել Հայաստանի որոշակի ինտեգրումը չինական, այլ ոչ թե արևմտյան նախագծերին:

- Հայաստանը կարող է դիրքավորվել որպես Հարավային Կովկասում Չինաստանի հիմնական գործընկեր՝ փորձելով օգտվել նաև Իրան-Չինաստան համագործակցության ընձեռած հնարավորություններից:
- Հաշվի առնելով Իրան-Չինաստան ռազմատեխնիկական համագործակցության հարուստ փորձը և նոր հնարավորությունները, Հայաստանը կարող է քայլեր ձեռնարկել այդ գործընթացին ներգրավվելու ուղղությամբ: Մասնավորապես, Հայաստանը այս երկու երկրների հետ կարող է համագործակցել ինչպես ԱԹՍ-ների և դրանց դեմ պայքարի զինատեսակների ձեռքբերման, այնպես էլ համատեղ արտադրության ուղղությամբ: Այդ համագործակցության համար լրացուցիչ խթան կարող է հանդիսանալ այն հանգամանքը, որ ԱԹՍ-ների ոլորտում Թուրքիան հավակնում է Չինաստանի համար լուրջ մրցակից դառնալ, իսկ Իրանի համար շատ կարևոր է իսրայելական ԱԹՍ-ների դեմ հակազդեցությունը և սեփական համակարգերի արդիականացումը: Երկու պարագայում էլ գործ ունենք Ադրբեջանի զինանոցում գտնվող զինատեսակների հետ, ուստի այս հարցում Իրանն ու Չինաստանը կարող են Հայաստանի համար բավական օգտակար լինել:
- Հայաստանը կարող է դիտարկել Իրան-Չինաստան-Ռուսաստան համատեղ զորավարժություններին մասնակցության հնարավորությունը՝ ի հակակշիռ Թուրքիա-Ադրբեջան-Պակիստան զորավարժությունների, եթե այդպիսի զորավարժությունները ենթադրեն նաև ցամաքային բաղադրիչ:
- Հայաստանը կարող է օգտագործել Չինաստանի հետ հարաբերությունները և վերջինիս ազդեցությունը Պակիստանի նկատմամբ՝ Իսլամաբադի ակնհայտ հակահայկական քաղաքականությունը փոքր-ինչ մեղմելու նպատակով:
- Հարկավոր է դիտարկել Չինաստանի հետ համագործակցության խորացումը հեռահաղորդակցության ոլորտում, չինական ընկերությունների կողմից Հայաստանում 5G ցանցի զարգացման հնարավորությունները՝ հաշվի առնելով այս ուղղությամբ Իրան-Չինաստան համագործակցության հեռանկարները ինչպես նաև Վրաստանի տարածքով Հայաստանին մատակարարվող ինտերնետի անվտանգության հետ կապված խնդիրները:
- Դիտարկել Շանհայի համագործակցության կազմակերպության դիտորդի կարգավիճակ ստանալու հնարավորությունը՝ հետագայում լիարժեք անդամակցության հեռանկարով՝ հաշվի առնելով, որ դրա անդամ են հանդիսանում Հայաստանի ԵԱՏՄ և ՀԱՊԿ գործընկերների մեծամասնությունը, ինչպես նաև շուտով անդամակցության գործընթաց է սկսելու Իրանի Իսլամական Հանրապետությունը: Հայաստանը, ինչպես և Ադրբեջանն ու Թուրքիան կազմակերպությունում ունեն գործընկեր երկրի

կարգավիճակ: Այս հարցում կարող է վետո դնել Պակիստանը, սակայն ՌԴ-ի, ՉԺՀ-ի, Հնդկաստանի հետ գրագետ աշխատանքի դեպքում այդ ռիսկը հնարավոր է չեզոքացնել:

- Հաշվի առնելով Հայաստանի արտաքին պետական պարտքի աճող տեմպերը և այն, որ այդ պարտավորությունների հիմնական մասը արևմտյան ֆինանսական կառույցների նկատմամբ են, ինչը որոշակի աշխարհաքաղաքական կախվածության նախադրյալներ է ստեղծում, Հայաստանը կարող է փորձել հավասարակշռել արտաքին պարտքը՝ այսուհետ նախապատվությունը տալով չինական վարկերին և ներդրումներին:
- Հայաստանը պետք է փորձի Իրան-Չինաստան նոր երկարաժամկետ համաձայնագրում տեղ գտած՝ Հարավային Կովկասին վերաբերելի հատվածից առավելագույն օգուտները քաղել: Այս առումով հարկավոր է ջանքեր գործադրել Հայաստան-Իրան սահմանի ԱՏԳ-ում չին-իրանական ներդրումների ներգրավման, Չինաստանի և Իրանի մասնակցությամբ Հայաստանի ենթակառուցվածքների արդիականացման, այդ թվում՝ Գորիս-Կապան և Կապան-Մեղրի այլընտրանքային ճանապարհների շինարարության ուղղությամբ:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: